

# ՄԱՐԶԻԿ

հսլս

مارزقك

مجلة رياضية شهيرة  
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

42-րդ ՏԱՐԻ, ԹԻԻ 424 - VOL. XXXXII N° 424 - العدد رقم ٤٢٤ - السنة الثانية والاربعون




ԱՅՍ ԱՄԱՌ՝ ՀԱՄԱ-Հ.Ս.Ը.Ս.ԱԿԱՆ  
11-րդ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ





Ա. մրցանակ



Բ. մրցանակ



Գ. մրցանակ

Ա. մրցանակ «Իրարու օգնել», Թալին Մանուէլեան, Լոնյոնոն:

Բ. մրցանակ «Աշխարհը մանկան աչքերով», Շուշի Հեղինեան, Հայաստան:

Գ. մրցանակ «Հ.Մ.Ը.Մ.ական երջանկություն», Ժիլի Մանոյեան, Յունաստան:

## Հ.Մ.Ը.Մ.Ի 103-ԱՄԵԱԿԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՄՐՅԱՆՔԻՆ ՄՐՅԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 103-ամեակին առիթով կազմակերպուած լուսանկարչական մրցանքը անցնող ամիսներուն իր շուրջ սպեղծեց մեծ հեղափոխութիւն: Մրցանքին կազմակերպիչ յանձնախումբը 23 մասնակիցներէ սրացաւ Հ.Մ.Ը.Մ.ի առօրեան ցոյացնող 93 լուսանկարներ:

Այս առիթով յառաջացած դարպական կազմը, որուն մաս կազմեցին լուսանկարիչ Բաբի Պերպէրեան, քեմադրիչներ Յակոբ Տէր Ղուկասեան եւ Ծովիկ Թորիկեան, արտեսարագէտ Արա Ազատ, խմբագիր Նորա Բարսեղեան, նկարչական քերթիք աշխատանքներու մասնագէտներ Գալար Մազումեան եւ Նժդէհ Սիրբիչեան, յետ

բազմակողմանի քննութեան, մրցանակակիրներ ճշդեց հեղեւեակները-

### Ա. ՄՐՅԱՆԱԿ

Թալին Մանուէլեան, Լոնյոնոնէն, «Իրարու օգնել» խորագրեալ նկարին համար:

Մրցանակ 1000 ամերիկեան փոյար արժողութեամբ «CANON» վաճառանիշով լուսանկարչական մեքենայ մը:

### Բ. ՄՐՅԱՆԱԿ

Շուշի Հեղինեան, Հայաստանէն, «Աշխարհը մանկան աչքերով» խորագրեալ նկարին համար:

(Շար. ը էջ 80)





## ՃՇԴՈՒՄ

«Մարզիկ» պաշտօնաթերթը հրատարակութեան սկսած է Փետրուար 1980-ին, սակայն Լիբանանի պատերազմեան տարիներու ընթացքին, թերթին կարգ մը թիւերու յաջորդականութիւնը խախտելով՝ տարիներու հաշուեհամարը եւ հրատարակութեան տարեթիւերը իրարու չեն համապատասխանած: Արդիւնքը եղած է այն, որ թերթին 2021-ի թիւերը փոխան հրատարակութեան 41-րդ տարին ունենալով՝ կրած են 40-րդ տարի բացատրութիւնը:

Հետեւաբար, այս անճշդութիւնը միանգամընդմիջտ սրբագրելու համար, «Մարզիկ»-ի այս թիւը փոխան 41-րդ տարուան կը թուագրուի 42-րդ տարի:

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ոգի եւ գաղափարական հարստութիւն

2

### Հ.Ս.Ը.Ս.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

11-րդ մարզախաղեր  
Առցանց մարզախաղեր  
Ակնարկ  
Հ.Ս.Ը.Ս.ի հետ  
Դէմքերու հետ  
Հարցազրոյց

4  
6  
10  
14  
16  
20



### ՈԳԵԿՈՉՈՒՄ

Ի յիշատակ

36

### ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Հ.Ս.Ը.Ս.ի գործունէութիւնը մայր հայրենիքի մէջ 1918-1927 (Զ. մաս) 22

### ՄԱՍՆԱՃԻՂԷ ՄԱՍՆԱՃԻՂԷ

40

### ՄԵՐ ԿՈՐՈՒՍՆԵՐԸ

80

**Խմբագիր:** Վիգէն Աւագեան (vicken.avakian@homenetmen.org)

**Խմբագրական կազմ:** Գրիգորիս Պողարեան, Սեւան Նազարեան, Սիրվա Ալլահվերդեան, Յոլեր Փանոսեան, Բաֆֆի Սիւլահեան, Սիւզի Օհանեան եւ Շանք Շամկոչեան:

**Վարչական կազմ:** Արօ Մոսիկեան, Սիրվա Սաղրեան, Վարդուկ Ֆրնզլիան, Վարդան Բաանիկեան, Տիրան Շահինեան եւ Եղիա Քիլէնեան:

**Էջադրում եւ ընդհանուր ձեւաւորում:** Արշօ Պալեան, **Կողքի պատրաստութիւն:** Y Concept International, **Գրաշարութիւն:** Շողիկ Պոյանեան, **Տպագրութեան պատրաստութիւն:** Photogravure Paklayan, **Տպագրութիւն:** Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, Պէյրութ, Լիբանան:

**Բաժանորդագրութիւն:** «Մարզիկ» կը հասնի աշխարհի 25 երկիրներու բաժանորդներու: Տարեկան բաժանորդագրութեան սակ ճշդուած է՝ Լիբանան 40,000 Լ. ռ., Սիջին Արեւելեան երկիրներ 50 \$, Երոպական երկիրներ 65 \$, Մ. Նահանգներ եւ Աւստրալիա 75 \$: Լիբանանի մէջ թերթին հաւրավաճառի սակն է 5000 Լ. ռ.: **Ցրում:** «Մարզիկ»-ի ցրումը Լիբանանի մէջ կը կատարուի յարուկ ցրուիչով (հեռ. 71/239209): Թերթը կարելի է ստանալ նաեւ «Համազգային»-ի գրախանութէն: Լիբանանէն դուրս թերթը կը ստացուի «Liban post»-ի միջոցով:

«Մարզիկ» կը հրատարակուի Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ - Հասցէ: «Սեւան» շէնք, թիւ 77 փողոց, թիւ 4 հատուած, Պուրճ Համուտ, Պէյրութ, Լիբանան 9611248043, 9611260117 marzig@Homenetmen.org Homenetmen - Հ.Ս.Ը.Մ. www.Homenetmen.org

# ՈՒՒ ԵՒ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

(«ՄԱՐԶԻԿ»Ի 42-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

**Ե**թե ամենակները չըլլային, հաւա-  
նաբար անհրաժեշտութիւնը չըզ-  
գայինք կարգ մը երեւոյթներու  
անդրադառնալու:

Տարբեր չէ «Մարզիկ»ի 42-ամեակի պա-  
րագան, որ առիթ կու տայ խորհրդածելու  
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան այս  
հրատարակութեան մասին:

Իբրեւ սկզբունք, իրաքանչիւր թերթ իր  
ընկերութեան հայելին է: Ան կը ցոյցանէ ըն-  
կերութեան առօրեան՝ իր պայծառ ու մութ  
էջերով: Թերթին էջերէն յստակօրէն կ'երեւին  
գեղեցիկն ու սգեղը, լաւն ու վատը: Իրականութիւն փրկու-  
ողը հարկ է որ այդ հայելիէն առնէ իր պատկերները:

Թերթը ընկերութեան մը ձայնն է: Արտայայտիչը անոր  
տազնապներուն եւ յոյսերուն, յաջողութիւններուն եւ ձա-  
խողութիւններուն: «Ձայն բազմաց ձայնն... մամուլի»:

Թերթը նաեւ մտածող ընկերութեան մը ուղեղն է,  
միտքն է: Ընկերութեան մը մտածողութիւնը կը ձեւաւորէ  
ան, խելքը կը հարստացնէ, մարդոց մտքին ու խելքին  
սնունդ կու տայ: Ինչպէս որ մարմինը չ'ապրիր առանց  
օդի, ջուրի եւ սնունդի, միտքն ալ չ'ապրիր առանց թերթի:

Այս բոլորն է թերթը եւ ատելի՛ն. առաքելութիւն է ու պա-  
տիւ: Տարբեր բան չի կրնար վկայել «Մարզիկ»ի 42 թի-  
ւերու 42 տարուան հունձքը՝ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան հա-  
րուստ վկայարանը, որուն վրայ նետուած ակնարկ մը  
բաւարար է հաստատելու, որ տեղեկատուութեան ընթա-  
ցիկ միջոց մը ըլլալէ աւելի, «Մարզիկ» իր հրատարակու-  
թեան առաջին օրէն եղաւ Հ.Մ.Ը.Մ.ական հաւատքի, ապ-  
րումի եւ խռովքի արտայայտութիւն մը: Ան ջանաց սե-  
րունդներ իրարու շողկապել, արձանագրել սերունդի մը  
հելքը ու դառնալ պատմութեան համար կարելոր  
ատաղձ, մաքուր եւ անվիճելի:

«Մարզիկ» ընթերցողներուն հասաւ հաւատաւոր  
Հ.Մ.Ը.Մ.ականներու մտածողութեան հիւթով, քրտինքով  
ու նուիրումով: Տարուէ տարի ան կատարելագործեց ինք-  
զինք, ջանաց մարզական թէ սկաւտական գրականու-  
թեան ճամբով նորահաս սերունդներուն ազգային մկա-  
րագիր ու դիմագիծ տալ, հայութեան եւ Հայաստանի  
պատկանելու գիտակից հայարտութիւն ներշնչել:

Յաջողեցա՞ւ ան. վճիռը պիտի տան ընթերցողները՝



Անոնք, որոնք անցնող 42 տարիներուն  
«Մարզիկ»ի կողքին եղան, իսկ «Մարզիկ»ը՝  
իրենց կողքին: Մէկը միասով հպարտ:

Անոնք, որոնք ամենէն ատելի Հ.Մ.Ը.Մ.ի  
նօզին փնտռեցին թերթին մէջ, որովհետեւ հա-  
ւատացին, որ անհրաժեշտը ոգի՛ն է: Հ.Մ.Ը.Մ.ը  
ստեղծողն ու պահողը նիւթականը չէ:

Անոնք, որոնք թերթին իրաքանչիւր թի-  
ւին հետ Հ.Մ.Ը.Մ.ական նոր յաղթանակնե-  
րու արձագանգներ սպասեցին, որովհետեւ  
անոնց մէջ գտան աղբիւրը ազգային խան-  
դավառութեան եւ հպարտութեան:

42-ամեակի հանգրուանն է այսօր:

Արգելարշաբ չէ վերջացած, կը շարունակուի:

Մերունդները փոխուած են, սակայն դժուարութիւննե-  
րը՝ ոչ: Այսօր կարգը հասած է նորերուն, որպէսզի այս  
անգամ իրենք ընթանան «Բարձրացի՛ր-բարձրացուր»ի  
ճամբէն, հաւատքով ու գիտակից խանդավառութեամբ:

42 տարի առաջ, Հ.Մ.Ը.Մ.ի ոգին եւ գաղափարական  
հարստութիւնը թերթին հրատարակիչներուն զիստոր  
դրամագլուխներն էին:

Հ.Մ.Ը.Մ.ի նոյն դրամագլուխներն են թերթին այսօր-  
ւան եւ վաղուան յաջողութիւններուն գրաւականները:

42-ամեակի հանգրուանն է այսօր, եւ ամենէն ատելի  
թերթին հիմնադիրներուն ու երկարամեայ պատասխա-  
նատուներուն ձայնն է որ կը հնչէ մեր ականջներուն,-  
ձայնը Վարդգէս Տէր Կարապետեաններուն, Երուանդ  
Տէմիրճեաններուն, Վարուժան Մուրատեաններուն, Յա-  
րութիւն Գեղարդներուն, Կարօ Թիթիւնճեաններուն,  
Միհրան Շիմշիրեաններուն, Բիւզանդ Թորիկեաններուն,  
Պատրիկ Կիւլալեկեաններուն եւ Գառնիկ Մկրտիչեան-  
ներուն, որոնք արդարօրէն հարց կու տան, թէ որքանո՞վ  
կը շարունակենք իրենց բացած ուղին: Որքանո՞վ տէր կը  
կանգնինք թերթին ու որքանո՞վ կը նպաստենք անոր յա-  
րատեւ զարգացման:

Անպայման որ կը գտնուի ընթերցողներու կարելոր  
խաւ մը, որ կանոնաւոր կերպով կը հետեւի թերթին, կ'ըն-  
թերցէ զայն, մարմնակրթական ու ազգային սնունդ կը  
ստանայ անկէ: Բայց կայ շատ ատելի մեծ թիւ մը անտար-  
բերներու, որոնք մոռցած են, թէ այս թերթին ճամբով  
մնայուն կապ մը ունին հաստատելիք այն միութեան



հետ, որ կ'ապրի ամենուն շունչով, բոլորին համար:

42-ամեակի հանգրուանն է այսօր: Յարմարագոյն առիթը, որպէսզի թերթը, իբրև հայ մամուլի մէկ անդամ, խօսի իր ընթերցողներուն հետ եւ անաչառ գնահատումը կատարէ իր երթին, սրբագրէ թերիները եւ բովանդակութեան ու մատուցման ձեւի նորութիւններով քայլ պահէ արդիականացման օրուան պահանջներուն հետ, մնալուն պահապանն ու պաշտպանը մնալով ազգային արժէքներու եւ միութեանական սկզբունքներու, որոնք ո՛չ ժամանակ կը ճանչնան, ո՛չ ալ աշխարհագրական սահման: Հինէն կու գան, բայց չեն հիննար: Ապագային կ'երթան, բայց չեն աժաննար:

42-ամեակը առիթ է միաժամանակ, պարտականութեան հրաւեր, թերթին հանդէպ մեր յանձնառութիւնը նորոգելու, քանի համոզուած ենք, որ «Մարզիկ»ի նման հրատարակութեան մը յարատեւութիւնը ապահովելու համար պէտք է միշտ պատրաստ ըլլալ տոկալու եւ պայքարելու, բարձրանալու եւ բարձրացնելու, Հ.Մ.Ը.Մ.ի ազգային տեսլականներուն դրօշը բարձր բռնած, թիւ թիւ մենք մեզ քայլ մը աւելի բարձրացնելով մեր կեանքին մէջ, մեր կեանքին համար,

Հայ ժողովուրդի կենսունակութեան եւ յաղթանակի համար:

### Հ.Մ.Ը.Մ.Ի 26 ՇՐՋԱՆՆԵՐ, 111 ՄԱՄՆԱՃԻՂԵՐ ԵՒ ՄԵՎԻՈՐՆԵՐ

**Հայաստան:** «Գ. Յակոբեան» (Երեւան), «Յ. Հինդլեան» (Երեւան), «Վ. Չարսեան» (Երեւան), Արուիեան (Արուիեան), «Հ. Առուարամեան» (Չարենցաւան), «Վ. Չերազ» (Կիւմրի), «Շ. Քրիսեան» (Երեւան), «Վ. Չերազ» (Երեւան), «Վ. Բախշեան» (Արմաւիր), «Հրազդան» (Հրազդան), «Վ. Ռոստրոմեան» (Էջմիածին), Մարտունի (Մարտունի), «Ա. Չոհրապեան» (Վեպի), «Տ. Խոյեան» (Երեւան), «Դ. Վարդան» (Երեւան). **Արցախ:** Սրեփանակերտ. **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս. **Ռուսիա:** Մոսկոյա. **Լիբանան:** Պէյրութ, Չախէ, Թրիփոլի, Պ. Համուր, Այնճար, Գիւնի, Անթիլիաս, Ժրտէյրէ, Պաուշրիէ, Ռաուրա. **Սուրիա:** Հալէպ, Դամասկոս, Լաքաքիա, Գամիշլի, Քեսապ. **Յորդանան:** Ամման. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա. **Եգիպտոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա. **Իրաք:** Պաղրայ. **Քուէյթ:** Քուէյթ. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունաստան:** Աթէնք, Գոթինիա, Սելանիկ. **Անգլիա:** Լոնդոն. **Աստորիա:** Վիեննա. **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարսէյ. **Հոլանդիա:** Ամսթըր, Արմար, Առնհեմ. **Գերմանիա:** Միւնխի. **Շուէդ:** Սթոքհոլմ, Վեսթերոս, Սոդերթելիա. **Պուլիստիա:** Սոֆիա, Ռուսէ, Փրովրիվ, Վառնա, Շումէն, Պուրկաս. **Գանատա:** Մոնթրէալ, Համիլթըն, Թորոնթօ, Քէմպրիճ, Մէք Գաքքինգ, Լաւալ, Վանքուվըր. **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անճելըս, Սան Ֆրանսիսքօ, «Սասուն» (Ֆրեզնօ), Մոնթրէալ, «Ազարամարտ» (Փասադինա), «Արարատ» (Կլեմերէյ), Օրէն Բաունթի, «Սասի» (Սան Ֆեռնանտօ), «Սեան» (Սան Տիէօ), «Արազ» (Ինլընդ Էմիլայթ), «Անի» (Սանթա Գարա), «Շանթ» (Քրեմերա Հոլիպ), «Սիփան» (Պըրպէնք), «Արցախ» (Լաւ Վեկա), Ֆինիքս, «Կարս» (Ուոլնաթ Բրիք) «Չաւախ» (Նորթ Հոլիվուդ), «Լոռի» (Սաքրամենթօ), «Կիլիկիա» (Սանթա Էլարիթա), «Հրազք». **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինկթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Նիւ Ճրքզի, Շիքսօ, Ֆիլադելֆիա, Տիքսոյք, Փրովիդընս, Ֆլորիդա, Ալպընի, Շարլոք, Մերիմար Հոլիպ. **Հարաւային Ամերիկա:** Պուէնոս Այրէս, Գորդոյա, Մոնթեվիդէօ. **Աստորալիա:** «Անդրանիկ» (Սիդնի), «Արաքս» (Մելբուռն), «Կամք» (Սիդնի), «Նաւասարդ» (Սիդնի), «Արարատ» (Սիդնի).



## ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 11-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ԱՅՍ ԱՄԱՌ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՉ

**Ք**որոնայի համաճարակին պատճառով մեկ տարուան ահամայ յետաձգում է ետք, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերը տեղի պիտի ունենան այս ամառ, 20-30 Յուլիսին, Հայաստանի մէջ:

Ի տարբերութիւն նախորդ մարզախաղերուն, 11-րդ մարզախաղերը պիտի յատկանշուին քանի մը նորութեամբ: Առաջին մարզախաղերու շարքին նկատի առնուած են երեք նոր մարզաձեւեր, որոնք խմբային մեծ ճիգ չեն պահանջեր եւ դիւրութեամբ կրնան կիրարկուիլ Հ.Մ.Ը.Մ.ի փոքր շրջաններուն կողմէ: Այսպէս, Փութպոլի, պասքեթպոլի, վոլբոլի, Ֆութսալի, ճատրակի, աթլէթի, փինկ-փոնկի, լոդի եւ թենիսի կողքին, յայտագիրի վրայ են 3x3 պասքեթպոլի,

ծովափի վոլբոլի եւ կոլֆի մրցումներ: Մարզախաղերուն երկրորդ նորութիւնը անհատական կարողութեան մրցումներն են, որոնք առաջին անգամ կիրարկուեցան անցնող ձմրան կազմակերպուած համա-Հ.Մ.Ը.Մ.ական առցանց մարզախաղերուն: Մրցումները արձանագրեցին մեծ յաջողութիւն եւ նկատի առնուեցան նաեւ այս մարզախաղերու պաշտօնական մրցումներու կողքին: Փութպոլի պարագային որդեգրուած են հետեւեալ մրցումները՝ Juggling, Distance shooting, Shooting to the crossbar եւ Stop the ball, իսկ պասքեթպոլի համար նկատի առնուած են հետեւեալները.- 3 point shooting contest, Free throw contest, Contest shooting (Lay-up, free throw, three pointer, half-court shot) եւ Around the world:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերը կը յատկանշուին այն իրողութեամբ, որ առաջին անգամ ըլլալով, արեւելումի աշխատանքները կը կատարուին նախապէս, առցանց: Արեւելումի իւրաքանչիւր նիւթի

աւարտին, մարզախաղերուն մասնակիցը կ'ամբողջացնէ հարցարան մը: Նիւթերու աւարտին ան կ'ենթարկուի քրննութեան եւ կը ստանայ վկայագիր եւ նամակ մը, որ իրեն կ'արտօնէ մասնակցիլ մարզախաղերուն: Արեւելումի համար նկատի առնուած են հետեւեալ նիւթերը, որոնք բազմալեզու տեսանիւթերով նախորոք պիտի ղրկուին մասնակիցներուն.-

- Ա. Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը
- Բ. Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու պատմութիւնը
- Գ. Բարի գալուստ Երեւան
- Դ. Fair play. մասնակիցներուն վարուելակերպը
- Ե. Անմիջական բուժօգնութիւն. ուղեղային ցնցումները բուժելու ձեւեր (concussion)
- Զ. Հ.Մ.Ը.Մ.ի օժանդակութիւնը Արցախին
- Է. Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերու ծանօթացում

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերը ունին բարեսիրական աշխատանքներու եւ դաստիարակչական ծրագիրներու իրենց յատուկ բաժինները: Նախատեսուած է մարզախաղերու մասնակիցներուն անունով երեխանե-





րու ի նպաստ ծրագիր մը իրականացնել Հայաստանի շրջաններէն մէկուն մէջ: Կը մշակուի նաեւ դաստիարակչական ծրագիր մը, որպէսզի մասնակիցները առիթը ունենան առնչուելու հայ թատրոնին հետ, ծանօթանալու ազգային, հոգեւոր, մշակութային իրենց արմատներուն: Անշուշտ, յայտագիրի վրայ են նաեւ հայոց հերոսներու պանթէոն՝ Եռաբլուրի յուշահամալիր եւ Հայոց Յեղասպանութեան Ծիծեռնակաբերդի յուշարձան անցելու թիւններ:

Իբրեւ նորութիւն պէտք է նշել նաեւ «Հրաշք» մարզախաղերու կազմակերպումը մարզական այս մեծ իրադարձութեան օրերուն: «Հրաշք» մարզախաղերը յատուկ խնամքի կարօտ մանուկներու եւ երիտասարդներու համար կազմակերպուող խաղեր են, որոնք 2018-էն ի վեր կը կիրարկուին Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանին մէջ: «Հրաշք» մարզախաղերուն կը նախատեսուի որ մասնակցին 12-22 տարեկան 200 երեխաներ եւ երիտասարդներ Երեւանէն, Սպիտակէն, Վանաձորէն, Կիւմրիէն, Իջևանէն, Խարբերդէն եւ Սփիւռքէն: Այս մարզախաղերուն համար նկատի առնուած են յատուկ դաշտ եւ մարզական սարքեր: «Հրաշք» ի մասնակիցները պիտի մասնակցին բացման

եւ փակման հանդիսութիւններուն:

Համա-Հ.Մ.Ը.Մ-ական 11-րդ մարզախաղերը ընթացք պիտի առնեն Չորեքշաբթի, 20 Յուլիսին կազմակերպուած մամլոյ ասուլիսով եւ պատուիրակութիւններու պատասխանատուներու հանդիպումով: Յաջորդ օր, մարզախաղերու մասնակիցները կ'այցեցին Եռաբլուր եւ ընթացք կ'առնեն մրցումները, որոնք կ'երկարին ինը օրերու վրայ: Բացման պաշտօնական հանդիսութիւնը նախատեսուած է «Հայ մարզիկի օրը»՝ Շաբաթ, 22 Յուլիսին, իսկ ակարտական մրցումները եւ փակման հանդիսութիւնը՝ Ուրբաթ, 29 Յուլիսին: Շաբաթ, 30 Յուլիսին կը կատարուի յաղթանակի պարահանդէս:

Յայտնենք, որ մարզախաղերու մասնակցութեան համար տարիքային սահմանափակում չկայ, միայն Փութպոլի եւ պասքէթպոլի կրտսեր մարզիկները պարտին ըլլալ 18 տարեկանէն վար: Համա-Հ.Մ.Ը.Մ-ական մարզախաղերուն արտօնուած չէ արհեստավարժ եւ օտար մարզիկներու մասնակցութիւնը:

Մարզախաղերուն մասնակցութեան արձանագրութիւնը կը կատարուի առցանց, իսկ խմբային մրցումներուն վի-

ճակաձգութիւնը կը կատարուի Ծ Յուլիսին: Կը սպասուի, որ մարզախաղերուն մասնակցին Հ.Մ.Ը.Մ-ի աշխարհասփիւռ շրջաններէն բազմահարիւր ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ՝ Թեհրանի «Արարատ» եւ «Նայիրի» միութիւններէն պատուիրակութիւններ:

Համա-Հ.Մ.Ը.Մ-ական մարզախաղերը միայն մրցում, մետալ, բաժակ եւ պարգեւատրում չեն: Այս պարագային պարգեւատրուողը Հ.Մ.Ը.Մ-ն է, միութիւնն է, իսկ գլխաւոր յաղթականը՝ հայրենիքը, որ գիտէ 104 տարի ապրեցրնել Հ.Մ.Ը.Մ-ը եւ ապրիլ Հ.Մ.Ը.Մ-ով, ոգեւորուած անոր երիտասարդութեամբ եւ ամրապնդուած անոր հայկականութեամբ, ինչ որ գլխաւոր երաշխիքն է պատրաստութեանը սերունդի մը, որ բարոյալքում չճանչնայ, յաղթանակի հպարտութիւն ունենայ եւ միշտ ընթանայ յառաջ, անսասան ու անդեղէլ:



## **ՀԱՄԱ-Հ.Մ.Բ.Մ.ԱԿԱՆ ԱՌՑԱՆՑ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ**

**Հ**Մ.Բ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան մարզական յանձնախումբին կազմակերպութեամբ, 4 Հոկտեմբերէն 24 Դեկտեմբեր 2021 տեղի ունեցան իրենց տեսակին մէջ նորութիւն հանդիսացող Համա-Հ.Մ.Բ.Մ.ական առցանց մարզախաղեր՝ չորս մարզաձեւով:- Փութպոլ, պասթբոլ, աթլէթ եւ լող: Մրցումներուն մասնակցեցան 95 մարզիկ-մարզիկուհիներ 10 շրջաններէ՝ Լիբանան, Սուրիա, Յունաստան, Գանատա, Ֆրանսա, Հարաւային Ամերիկա, Քուէյթ, Միւնիխ, Վեսթերոս եւ Սոտերթեյլիա:

Առցանց մարզախաղերուն նկատի առնուեցան տարիքային հինգ խմբաւորումներ:- Ազատ (18 տարեկանէն վեր), 20 տարեկանէն վար, 18 տարեկանէն վար, 16 տարեկանէն վար եւ 14 տարեկանէն վար:

Իւրաքանչիւր շրջանի մէջ մարզախաղերը կազմակերպուեցան ֆիզիքական ձեւով՝ Հ.Մ.Բ.Մ.ի Շրջանային կամ Մեկուսի վարչութիւններուն կողմէ, նկատի ունենալով առցանց մարզախաղերուն համար մշակուած յատուկ օրէնքները եւ յարգելով քորոնայի առողջապահական տեղական արգելափակումները:

Մասնակցութեան արդիւնքները տեսերիզի միջոցով իւրաքանչիւր շրջանի մարզական ներկայացուցիչին կողմէ առցանց փոխանցուեցան մարզախաղերու կազմակերպիչ յանձնախումբին: Շրջանները ներկայացուցին իւրաքանչիւր դասակարգի եւ մարզաձեւի իրենց երեք լաւագոյն արդիւնքները:

Իւրաքանչիւր մարզաձեւի համար ճշդուեցան ժամանակի յատուկ օրէնքներ:

ԼՈՂԻ պարագային նկատի առնուեցան 50 եւ 100 մեթր ազատ լողի մրցումներ: ԱթլէթԸ ընդգրկեց 100, 200, 300, 400, 800, 1500 եւ 3000 մեթր վազքի մրցումներ, մէկ քաջ ոստում եւ գունտ նետել: ՖՈՒԹՊՈՒԼ ունեցաւ հինգ տեսակ մրցում (երկար հեռաւորութենէ հարուած դէպի բերդ, արուեստական արգելքներ շրջանցելով հարուած դէպի բերդ, բերդի

սիւներու հարուած եւ այլն), նոյնպէս՝ ՊԱՍՔԵԹՊՈՒԼ (3 կէտի նշանակում, կիսաշրջանակի զանազան դիրքերէ նշանակում, Dunk հարուած, երեք խաղացողով գնդակը իրարու փոխանցելով դէպի կողով յառաջացում եւ նշանակում եւ այլն): Արդիւնքները պարզեցին հետեւեալ պատկերը:-

### **ԱԹԼԵԹ**

**ՏՂԱՔ**  
 100 ՄԵԹՐ ՎԱԶՔ/18 ՏԱՐԵԿԱՆ ԵՒ ՎԵՐ  
 1. Միսաք Տէրտէրեան (Հարաւային Ամերիկա) 10.59

100 ՄԵԹՐ ՎԱԶՔ/18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ  
 1. Ճոնի Թընկերեան (Լիբանան) 12.17  
 2. Նարեկ Ասատուրեան (Լիբանան) 14.97

200 ՄԵԹՐ ՎԱԶՔ/18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ  
 1. Արմէն Եղիայեան (Լիբանան) 28.83  
 2. Նարեկ Ասատուրեան (Լիբանան) 30.53

300 ՄԵԹՐ ՎԱԶՔ/14 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ  
 1. Յակոբ Ապտալեան (Լիբանան) 45.3  
 2. Անթոնի Պողչայեան (Լիբանան) 52.86  
 3. Սարգիս Էմիրզեան (Լիբանան) 52.89

400 ՄԵԹՐ ՎԱԶՔ/18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ  
 1. Արմէն Եղիայեան (Լիբանան) 1:02:3

800 ՄԵԹՐ ՎԱԶՔ/18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ  
 1. Արմէն Եղիայեան (Լիբանան) 2:27.2





**1500 ՄԵԹՐ ՎԱԶՔ/18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Արմէն Եղիայեան (Լիբանան) 5:32.9

**3000 ՄԵԹՐ ՎԱԶՔ/18 ՏԱՐԵԿԱՆ ԵՒ ՎԵՐ**

1. Յարուժ Լընդեան (Սուրիա) 10:41.00
2. Գէորգ Ալթունեան (Լիբանան) 11:58.6

**ԱՂՋԻԿՆԵՐ**

**100 ՄԵԹՐ ՎԱԶՔ/ 18 ՏԱՐԵԿԱՆ ԵՒ ՎԵՐ**

1. Մարո Էօրէճեան (Հարաւային Ամերիկա) 13.98

**200 ՄԵԹՐ ՎԱԶՔ/16 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Քրիստինա Աւետիսեան (Լիբանան) 41.89

**300 ՄԵԹՐ ՎԱԶՔ/14 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Քաթերինա Աւետիսեան (Լիբանան) 1:26.64
2. Վանա Աւետիսեան (Լիբանան) 1:12.6

**800 ՄԵԹՐ ՎԱԶՔ/18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Փաթիլ Ասատուրեան (Լիբանան) 2:38.8

**Մէկ ՔԱՅԼ ՈՍՏՈՒՄ- ՏՂԱՔ**

**20 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Ճէովանի Տօներեան (Լիբանան) 4.52 մ.
2. Հրակ Թորոսեան (Լիբանան) 4.52 մ.

**18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Սերուժ Գուլումճեան (Լիբանան) 4.36 մ.

**16 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Քրիստ Պարսումեան (Լիբանան) 3.75 մ.
2. Սերուժ Թուլթճեան (Լիբանան) 3.74 մ.

**ԳՈՒՆՏ ՆԵՏԵԼ/ԱՂՋԻԿՆԵՐ**

**18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Բալիկ Թեքիելեան (Լիբանան) 7.7 մ.

**ԳՈՒՆՏ ՆԵՏԵԼ/ՏՂԱՔ**

**18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Ճովի Թենքերեան (Լիբանան) 7.87 մ.

**16 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Գարլօ Ահարոնեան (Լիբանան) 11.33 մ.

**14 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Անտի Տօներեան (Լիբանան) 7.44 մ.
2. Անթոնի Պողչալեան (Լիբանան) 8.3 մ.

**ԼՈՂ**

**50 ՄԵԹՐ ԱԶԱՏ ԼՈՂ**

1. Թովմաս Թովմասեան (Սոտերթեյիա) 18.39

**100 ՄԵԹՐ ԱԶԱՏ ԼՈՂ**

1. Թովմաս Թովմասեան (Սոտերթեյիա) 41.48

**ՖՈՒԹՊՈԼ**

**JUGGLING COMPETITION**

**18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԵՐ**

1. Արամ Վարժապետեան (Հարաւային Ամերիկա)
2. Անդրանիկ Փանոսեան (Հարաւային Ամերիկա)
3. Սեւան Լաֆոնթ (Ֆրանսա)

**18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Արամ Ճէմէզեան (Լիբանան)
2. Սաբօ Անտոնեան (Լիբանան)
3. Անդրօ Մալխասեան (Սուրիա)

**16 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Գարլոս Թովմաս (Լիբանան)
2. Սիմոն Փաչանեան (Լիբանան)



**3. Յովիկ Տիչչէքէնեան (Լիբանան)**

**14 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Մհեր Մանուկ (Վեսթերոս)
2. Պօղոս Մանուկ (Վեսթերոս)
3. Արսո Եսփուճեան (Լիբանան)  
Յակոբ Ապտարեան (Լիբանան)

**LONG SHOOTING COMPETITION**

**18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Արամ Ճէմէզեան (Լիբանան)  
Փօլ Խաչոյեան (Լիբանան)  
Սթեֆան Յակոբեան (Լիբանան)

**16 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Ակսէլ Իւրնէշլեան (Լիբանան)  
Գարլոս Թովմաս (Լիբանան)

**14 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Աւօ Օտապաշեան (Լիբանան)
2. Յակոբ Ապտարեան (Լիբանան)
3. Բաֆֆի Թաթուլեան (Լիբանան)

**CROSSBAR CHALLENGE COMPETITION**

**18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԵՐ**

1. Սեւան Լաֆոնթ (Ֆրանսա)

**18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Սաբօ Անտոնեան (Լիբանան)  
Նորայր Դանիէշլեան (Սուրիա)
2. Հրակ Սթամպուլեան (Լիբանան)  
Փօլ Խաչոյեան (Լիբանան)

**16 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Ալէքս Թաշճեան (Լիբանան)  
Գարլոս Թովմաս (Լիբանան)  
Յովիկ Տիչչէքէնեան (Լիբանան)

**14 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Շանթ Քէնտիրճեան (Լիբանան)

**Յակոբ Աբէլեան (Լիբանան)  
Վահէ Աբէլեան (Սուրիա)**

2. Սերօ Գալէմքերեան (Լիբանան)  
Յակոբ Ապտարեան (Լիբանան)

**DRIBBLE BETWEEN THE CONES COMPETITION**

**18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Յովիկ Աշգարեան (Լիբանան)  
Հրակ Սթամպուլեան (Լիբանան)  
Նազօ Թերզեան (Լիբանան)

**16 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Փաթրիք Թասլաքեան (Լիբանան)  
Սիմոն Փաշանեան (Լիբանան)

**14 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Սերօ Գալէմքերեան (Լիբանան)

**STOP THE BALL COMPETITION**

**18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԵՐ**

1. Անթոնի Գարեան (Ֆրանսա)
2. Սերժ Չաքրրեան (Ֆրանսա)
3. Սեւակ Լաֆոնթ (Ֆրանսա)

**18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Փօլ Խաչոյեան (Լիբանան)
2. Սաբօ Անտոնեան (Լիբանան)
3. Յովիկ Աշգարեան (Լիբանան)

**16 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԵՐ**

1. Ակսէլ Իւրնէշլեան (Լիբանան)
2. Ատիս Այվազեան (Լիբանան)  
Փաթրիք Թասլաքեան (Լիբանան)

**14 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ**

1. Աւօ Օտապաշեան (Լիբանան)
2. Փաուլօ Նալպանտեան (Լիբանան)  
Շանթ Քէնտիրճեան (Լիբանան)
3. Պօղոս Մանուկ (Վեսթերոս)  
Միրմա Գազանճեան (Վեսթերոս)





## ՊԱՍՔԵԹՊՈՒԼ

### 3 POINT SHOOT-OUT (ԱՆՀԱՏԱԿԱՆ)

#### 18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԵՐ

1. Անդրանիկ Տէր Պետրոսեան (Գանատա)

#### 18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ

1. Նարեկ Սարգիս (Սուրիա)

#### 14 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ

1. Տանիէլ Մինասեան (Լիբանան)
2. Նարեկ Զերքէզեան (Լիբանան)
3. Աւօ Գարակէօզեան (Լիբանան)

### CONTEST SHOOTING (ԱՆՀԱՏԱԿԱՆ)

#### 18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԵՐ

1. Արամ Աբրահամեան (Լիբանան)
2. Ֆեռնանտո Քէչեան (Հարաւային Ամերիկա)

#### 21 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ

1. Ճորճ Թումա (Սոտերթերիա)
2. Պետրիկ Մահսէրէճեան (Հարաւային Ամերիկա)

#### 18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ- ԱՂՋԻԿՆԵՐ

1. Մարթինա Արսլանեան (Հարաւային Ամերիկա)

#### 18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ- ՏՂԱՔ

1. Եզեկէլ Գուրլումճեան (Հարաւային Ամերիկա)

#### 16 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ

1. Շանթ Օքճանեան (Սուրիա)
2. Ֆաբրուսո Օտեր (Հարաւային Ամերիկա)

#### 14 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ

1. Մկօ Ղազարեան (Սուրիա)
2. Ֆետերիքօ Տաւիչինօ (Հարաւային Ամերիկա)

### 3. Սիմոն Պաշեան (Հարաւային Ամերիկա)

#### SLAM DUNK (ԱՆՀԱՏԱԿԱՆ)

1. Կարօ Ամպարճեան (Սուրիա)

#### AROUND THE WORLD (ԱՆՀԱՏԱԿԱՆ)

#### 14 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ- ԱՂՋԻԿՆԵՐ

1. Միրէյ Զափարեան (Սուրիա)

#### FREE THROW CONTEST (ԱՆՀԱՏԱԿԱՆ)

#### 18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԵՐ

1. Ալէք Տայեան (Գանատա)
2. Արեգ Պէրպէրեան (Ֆրանսա)

#### 21 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ

1. Ճորճ Թումա (Սոտերթերիա)
2. Վայք Պաղտասարեան (Ֆրանսա)
3. Ալէքսան Նաճարեան (Յունաստան)

#### 18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ- ԱՂՋԻԿՆԵՐ

1. Մարթինա Արսլանեան (Հարաւային Ամերիկա)

#### 18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ- ՏՂԱՔ

1. Յարութ Գլլքի (Սուրիա)

#### 16 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ

1. Գօգօ Զգոյշեան (Սուրիա)
- Յարութ Կարապետեան

#### 14 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ- ԱՂՋԻԿՆԵՐ

1. Միրէյ Զափարեան (Սուրիա)

#### 14 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ- ՏՂԱՔ

1. Ալէքս Բարսեղեան (Յունաստան)
- Ֆետերիքօ Տաւիչինօ (Հարաւային Ամերիկա)
2. Նիքոս Յիցոս (Յունաստան)
3. Մկօ Ղազարեան (Սուրիա)

### 3 PERSON WEAVE (ԽՄԲԱՅԻՆ)

#### 18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԵՐ

1. Ֆրանսա
2. Ֆրանսա

#### 18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ

1. Լիբանան

#### 16 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ

1. Լիբանան



# ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

(«ՄԱՐԶԻԿ»Ի 42-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ՝ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻՆ ԵՒ ՄԱՄԼՈՅ ՄՊԱՍԱԽՈՐԻՆ ՄԱՍԻՆ ԶՐՈՅՑ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ ՀԵՏ)

## Վ. Աւագեան ՊԵՅՐՈՒԹ

Կար ժամանակ, երբ մամուլը սպասաւոր ըլլալու համար կը բաւէր որ մարդ լրագրութեան վկայականի կողքին՝ մշակուած լեզու, միտք ու գարգացում ունենար:

Կար նաեւ ժամանակ, որ մամուլը սպասաւոր ըլլալու համար այդքանն ալ անհրաժեշտ չէր: Կը բաւէր, որ ենթական երկրորդական վարժարան մը աւարտէր, գրական որոշ հակումներ ունենար եւ քիչ մըն ալ «գրիչ շարժել» գիտնար:

Ի վերջոյ, իւրաքանչիւր խմբագրատան մէջ կար վաստակ ու կշիռ ունեցող հեղինակութիւն մը՝ խմբագիր մը, որուն կարմիր գրիչը կը ձեւաւորէր եւ կը վերամշակէր ամէնէն անխնամ ձեռագիրը նոյնիսկ:

Այս բոլորը, սակայն, այն հեռաւոր օրերուն էին, երբ տակաւին համացանցի դարաշրջանը չէինք թեւակոխած, տեղեկատուական արհեստագիտութեան ծանօթ չէինք, ընկերային ցանցեր գոյութիւն չունէին եւ մարդոց կեանքը կ'ընթանար դանդաղ ու միօրինակ կշռոյթով:

Այսօր կ'ապրինք նոր ժամանակներու մէջ, ուր արմատական փոփոխութիւններ կը յեղաշրջեն արժէքներ եւ աւանդութիւններ, կառոյցներ եւ համակարգեր, եւ ինչպէս բոլոր մարդերու, մամուլը պարագային եւս տիրապետող կազմակերպ քառոսն է: Այն խառնուրդը, որ ստեղծուած է աւանդական, երկկտրոնային, քաղաքացիական եւ բջիջային մամուլի մէկ-տեղումով:

Եթէ աւանդական եւ երկկտրոնային եզրերը ծանօթ հասկացողութիւններ են, քաղաքացիական եւ բջիջային մամուլը բնորոշումները համեմատաբար աւելի նոր են: Քաղաքացիական մամուլը՝ Citizen journalism-ը կ'ակնարկէ անհատ մարդոց՝ քաղաքացիներու կողմէ կայքէջերու, պոլկներու եւ համացանցի զանազան հարթակներուն վրայ տեղադրուող գրութիւններուն, մինչ բջիջային մամուլը՝ Mobile journalism-ը նկատի ունի հեռաձայնով ընկերային ցանցերու վրայ կատարուող կարճ ու դիպուկ գրառումները, որոնք կրնան ընկերանալ տեղույն վրայ նկարուած նկարներ եւ տեսանիւթեր:

Մամուլը վերոյիշեալ տարբերակներուն միջեւ սահմաններ չկան այլեւս: Բոլորը կ'օգտուին իրարմէ: Մէկը կ'արտատայ միւսէն: Իսկ թէ ո՞ւր կը սկսի մէկը եւ ո՞ւր կը վերջանայ միւ-



սը այնքան ալ յստակ չէ. անոր համար ալ իրավիճակը կարելի է ներկայացնել իբրեւ կազմակերպ քառոս: Իսկ այս քառոսին մէջ տեղ ունենալու եւ տեղը կարենալ պահելու համար անհրաժեշտ է աշխատանքի այնպիսի տինամիզմ, որ ըլլայ իւրապատուկ, արագ եւ մասնագիտական:

Հետեւաբար, մամուլը սպասարկուի մերօրեայ կերպարը, նորարար արհեստագիտութեան այս օրերուն, մեզի կը ներկայանայ անցեալէն բաւական տարբեր, վերոյիշեալ երեք յատկութիւններով ու պահանջներով:

Այդ պահանջներէն առաջինը, ինչպէս նշեցինք, իւրապատուութիւնն է: Այսօր չկան փակ ընկերութիւններ: Չկան մէկ թերթի ու մէկ կարծիքի ընկերութիւններ, ուր ինչ որ ներկայացուի մարդիկ «Տալած իւղի նման» ընդունին: Աշխարհագրական, քաղաքական, գաղափարական ու լեզուական պատնէշները քանդուած են եւ մարդիկ բացուած են աշխարհին ու անոր նորութիւններուն՝ օրէ օր դառնալով աւելի պահանջկոտ: Ամէն բան չի բաւարարեր այսօրուան դժուարահաճ ընթերցողը: Մարդիկ թերթի դիմելու կարիքը անգամ չունին, որովհետեւ այլեւս իրենք կը ճշդեն, թէ ո՞ր նիւթը, ուրկէ՞, ե՞րբ եւ ի՞նչպէս կրնան ստանալ, հետեւաբար անոնք պէտք չունին մամուլը սպասաւորներու: Համացանցը կը վխտայ նիւթերով: Ընդհակառակն, մամուլը սպասաւորներն են, որոնք կարիքը ունին ընթերցողներու եւ, հետեւաբար, այսօրուան նիւթերու անսահման տարափին մէջ, անոնք կոչուած են այնպիսի իւրապատուկ նիւթեր մշակելու եւ կամ՝ ծանօթ նիւթեր այնպիսի նորարար մօտեցումներով ներկայացնելու, որ անպայման անոնք քաջողականութիւն մը ունենան իրենց մէջ: Այլապէս, ի՞նչն է, որ ընթերցող մը պիտի մղէ հազարաւոր

նիւթերու ընդմէջէն տուեալ նիւթ մը կամ ստորագրութիւն մը ընտրելու:

Ընթերցողներ մեր օրերուն թերթերէ աւելի նիւթեր կը փնտռեն եւ նիւթեր գտնելու համար նորարար արհեստագիտութեան միջոցներուն կը դիմեն: Հետեւաբար, կ'արժէ, որ ներկայացուած նիւթերը ըստ կարելիութեան յարմարին օրուան պահանջներուն՝ ըլլան կարճ, կուռ, նկարներով կամ տեսանիւթերով հարուստ, որպէսզի անպայման յաւելեալ արժէք մը տան նիւթին:

«Յաւելեալ արժէքի մամուլն է» այսօր փնտռուածը, իսկ նման մամուլ կարելի է ունենալ միայն մամուլ սպասաւորներու ստեղծագործական արտակարգ ճիգով, լաւագոյն տեղեկութիւնները ճիշդ ձեւով, ճիշդ տեղին ու ճիշդ ժամանակին մարդոց հրամցնելով:

Երբ ճիշդ ժամանակին կ'ըսենք, բնականաբար, կ'անդադառնանք արագութեան, որ այսօրուան մամուլ սպասաւորին յաջողութեան երկրորդ նախապայմանն է: Դանդաղի կը նշանակէ մրցունակ ըլլալէ դադրել: Կը նշանակէ ժամանակավրէպ եւ անհրապոյր ըլլալ: Մինչդեռ պահանջուածը արագութիւնն է. տեղեկահաւաքի արագութիւն, տեղեկութիւններու մշակումի արագութիւն եւ տեղեկութիւններու փոխանցումի արագութիւն, ինչ որ կ'ենթադրէ լայն պատրաստութիւն եւ փորձառութիւն, որպէսզի արագութեան հեւքին մէջ ճշգրտութիւնն ու ճշմարտութիւնը չկորսուին, յաջողութեան եւ ժողովրդականութեան սիրոյն՝ բարոյական արժեքափերն ու լրագրական սկզբունքները չտոնակոխուին:

Մանր է այսօրուան մամուլ սպասարկուին պարտականութիւնը, որովհետեւ անկէ կ'ակնկալուի անցեալէն աւելի պատրաստութիւն եւ պատասխանատուութիւն, որպէսզի ան կարենայ շատ արագ հակազդել չըջապատի երեւոյթներուն, իր տեղեկատուութեան միացնելով վերլուծութիւնը, իսկ խօսքի ազատութեան՝ մտքի հասունութիւնը:

Մէկ կողմէ պէտք է բաւարարել միայն վերնագիրներ եւ գլխաւոր տեղեկութիւններ փնտռող ընթերցողները, իսկ միւս կողմէ պէտք է գոհացնել ամբողջական եւ լայն տեղեկատուութիւն պահանջողները: Իսկ կարելի՞ է նման բան: Այսօրուան մամուլ-տեղեկատուական քառսին մէջ կարելի՞ է, եթէ մամուլ սպասարկու մը բազմակողմանի հատուկութիւններով իր

նիւթը մշակէ այնպէս մը, որ ան հետաքրքէ բոլոր ճաշակներու տէր ընթերցողները: Իսկ նման վարպետութիւն կը պահանջէ մասնագիտական մօտեցում, որ մերօրեայ մամուլ սպասարկուին բնորոշ երրորդ յատկութիւնն է:

Սիրողական մօտեցումը, բարի կամեցողութիւնը եւ «գրիչ շարժելու» տրամադրութիւնը տեղ չունին մերօրեայ մամուլին մէջ: Չեն կրնար ունենալ նաեւ ապագային, որովհետեւ այսօր Multimedia մամուլի ժամանակն է եւ մամուլ ներկայացուցիչներ պարտին լաւապէս տիրապետել արդի արհեստագիտութեան միջոցներուն եւ անոնց օգտագործման ձեւերուն, մանաւանդ որ անոնք տեղեկութիւն արտադրողներ չեն միայն, այլ՝ տեղեկութիւն փոխանցողներ են նաեւ: Անոնք միաժամանակ կը գրեն, իրենց նիւթին գեղարուեստական ձեւաւորումը կը կատարեն, համապատասխան լուսանկարները եւ տեսանիւթերը կը պատրաստեն, նիւթը ելեկտրոնային, քաղաքացիական թէ՛ բջիջային մամուլի հարթակներուն կը պատշաճեցնեն, ընկերային ցանցերով կը տարածեն եւ, ի վերջոյ, ընթերցողներու արձանգանդներուն կը պատասխանեն:

Իսկ այս բոլորը առանց մասնագիտական պատրաստութեան եւ մնայուն վերապատրաստութեան կարելի չէ կատարել:

Անշուշտ, արդարօրէն կրնան գտնուիլ առարկողներ, թէ՛ քաղաքացիական եւ բջիջային մամուլի ներկայացուցիչները կրնան մասնագէտներ չըլլալ: Սովորական համակարգիչ մը կամ հեռաձայն մը ունեցող կրնայ դիւրութեամբ նիւթ փոխանցել եւ հանրային կարծիք ձեւաւորել:

Առարկութիւնը տեղին է եւ մեզի կը վերլիչեցնէ այն քառսը, ուր կը գործեն շատերը, սակայն կը փայլին քիչերը:

Այսօր, այդ քառսը հիմնովին փոխած է մամուլ աշխարհը: Աւանդական թերթերը դադրած են ամէնէն տարածուն տեղեկատուական աղբիւրները ըլլալէ: Նորութիւններու ներկայացման բովանդակային եւ թեքնիք փոփոխութիւններուն հետ փոխուած են ընթերցանութեան ծէսերն ու սովորութիւնները: Փոխուած են նաեւ ընթերցողներու սպասումներն ու պահանջները՝ մամուլ սպասաւորներէն:

Փոփոխութեան տեւական ընթացքով, մէկ կողմէ քաղաքացիական եւ բջիջային մամուլը կը զարգանայ, իսկ միւս կողմէ՝ ելեկտրոնային եւ աւանդական մամուլը կատարելագործման նոր ուղիներ կ'որոնէ: Առաջին երկուքը թիրախ ընտրած են թուային արհեստագիտութեան օրերուն ծնած սերունդը: Ելեկտրոնային մամուլը կը հետաքրքրէ միջին սերունդը, իսկ աւանդական մամուլը՝ համեմատաբար տարեցները, որոնք տարիներու վարժութեամբ մինչեւ վերջ կառչած կը նման թուղթին ու մելանին:

Յեղաշրջումը մամուլ աշխարհին մէջ կը շարունակուի անվերջ եւ յեղաշրջումին առաջնորդները լաւապէս կը գիտակցին, որ փոփոխութիւնը անխուսափելի է, յառաջդիմութիւնը՝ պարտադիր: «Այն օրը որ փոփոխութեան կը դադրիս, կը նշանակէ թէ՛ վերջացած ես», պիտի ըսէր Պենճամին Ֆրանքլին:

Հետեւաբար, այսօր հարցը այլեւս այն չէ, թէ՛ կ'ամ կը յարմարիս կ'ամ կը մեռնիս: Հարցը այն է, թէ՛ կ'ամ կը փոխուիս կ'ամ կը մեռնիս:



# ՀԱՄԱՑԱՆՑ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՑԱՆՑԵՐ. ԴԵՊՒ Ո՞ՒՐ



## Թորգոմ Քինյ. Չորպածեան ՌՄՍՏԸ, ՄԱՍԱՉՈՒՄԵՑ

**Կ**ար ժամանակ, երբ մարդկային յարաբերութիւնները այնքան պարզ էին եւ այնքան անմիջական, որ հարցը երբեք անոնց տեսակին կամ որակին հետ առնչութիւն չունէր, որքան՝ բովանդակութեան, խօսուած նիւթերուն եւ առհասարակ ընդհանուր ոգիին հետ: Հիմա այսպիսի ժամանակի մը մէջ ենք, ուր մարդկային յարաբերութիւնները՝ իրենց տեսական իմաստով ու մանաւանդ ներկայացուցած պատկերով, ո՛չ միայն յեղաշրջում ապրած են, այլեւ՝ իսկական յեղափոխութիւն, որ անպայման պիտի ազդէ ո՛չ միայն առհասարակ մարդկային յարաբերութիւններու հասկացողութեան, այլեւ՝ նոյնիսկ մեր գոյութեան նպատակին եւ իմաստին:

Նորութիւն մը չէ պատահածը: Մարդկային հաղորդակցութեան միջոցները միշտ նոյնը չէ որ մնացած են: Հազար տարի առաջ մարդկային հաղորդակցութիւնը տարբեր էր բաղդատմամբ ո՛չ միայն այսօրուան իրականութեան, այլեւ՝ նոյնիսկ քանի մը հարիւր տարի առաջ եղածին: Այնքան ատեն որ մարդկային միտքը կը բանի եւ բոլոր մակարդակներու վրայ նոր իրագործումներու պատճառ կ'ըլլայ, անոր հետ նաեւ պիտի փոխուի ամէն բան, որ կ'առնչուի մարդ-աշխարհ եւ մարդ-մարդ յարաբերութիւններուն: Ինչո՞ւ համար, սակայն, մտահոգութիւնը, զոր շատ մը մարդիկ կ'ունենան ի տես ընկերային ցանցերու եւ համացանցի միջոցով մարդկային յարաբերութիւններուն եւ հաղորդակցութեան նորութեան: Արդեօք այս մէկը մարդկային յառաջդիմութեան եւ նորութեան հետամուտ ըլլալու տուրքերէն մէկը չէ՞:

Հարցը քիչ մը տարբեր է այս պարագային: Նախապէս, հաղորդակցութիւնը, որքան ալ տարբեր ըլլար եւ անցեալին բաղդատելով նոր, իր մէջ տակաւին ունէր յատկութիւն մը,

որ բնաւ չէր փոխուեր: Անիկա ըլլար լրաբեր աղանի, սուրհանդակ թէ նամակ՝ միեւնոյնն է, միջոց մըն էր միայն: Նոյնիսկ երբ տան ու հետագային ըմբռնելու հետաձայնները հաղորդակցութեան գլխաւոր միջոց եղան, տակաւին չէին զիջեր բունին, այսինքն՝ մարդկային բնական կապին: Համացանցի գալուստով, որ անշուշտ բարիք մըն է ու միաժամանակ երկասարի սուր, կ'ակնկալուէր արագութիւնը հաղորդակցութեան միջոցներուն: Եւ այդ է որ պատահեցաւ: Հետագային ծնունդ առին ընկերային տարբեր ցանցեր, որոնք նոյն ուղիին է որ կը հետեւէին ու կը խոստանային նոր բարիքներ: Ի՞նչ պատահեցաւ:

Ճի՛շդ է, խոստացուածը կատարուեցաւ: Մարդիկ վերագրուան իրենց նախկին ընկերները, բարեկամներն ու դրացիները՝ օգտագործելով ընկերային ցանցերուն առաւելութիւնները: Ճի՛շդ է, շատ մը հաստատութիւններ եւ կառույցներ կ'օգտագործեն նոյն ցանցերը, իրենց խօսքն ու պատգամը ուղղելու երիտասարդութեան ու քիչ մըն ալ բոլոր տարիքի մարդոց: Սակայն, այս ընթացքին բան մը տեղի ունեցաւ. հաղորդակցութեան այս միջոցը սկսաւ դառնալ նպատակ ու ամէն բանի հանդիսաւայր:

Այսօր ընկերային ցանցերը վերածուած են իրենց օրէնքներով եւ մշակոյթով կառավարուող աշխարհի: Մարդիկ իրենց ամբողջ կեանքը կը տեսնեն անոնց մէջ: Մարդիկ այնքան կապուած են անոնց, իբրեւ թէ անոնք ինքնութիւն մատակարարող եւ սնուցանող աղբիւրները ըլլային: Բայց կը թուի թէ այդ հանգրուանը արդէն գլած-անցած ենք: Ինչ որ ստեղծուած էր իբրեւ բարիք՝ մարդիկը իրարու մօտեցնելու եւ արագութեան դարէն օգտուելու, սկսած է վերածուել չարիքի, որ իր մէջ կը կլանէ մարդկային բոլոր ընկերութիւնները, առանց որեւէ խտրութեան: Երբ բան մը, որ կոչուած է ըլլալու պարզ միջոց, կը դառնայ այնպիսի նպատակ, որմէ կախեալ կ'ըլլայ մեր ուրախութիւնը, որուն կապուած կ'ըլլայ մեր

տրամադրությունը եւ որուն վրայ կը հիմնուի մեր յոյսը, կը նշանակէ թէ սխալը վար գլտորած է ու հսկայ ճիւղնազնդակի վերածուած:

Այս չարիքներէն մէկը անգլերէն կը կոչուի «Վախ՝ մոռցրելու վտանգէ», եւ անիկա կ'առնչուի բազմամիլիոն մարդոց այն մտայնութեան, ըստ որուն՝ եթէ ուրիշներ նկար, տեղեկութիւն կամ յատուկ գրութիւններ կը տեղադրեն ընկերային ցանցերու մէջ, ուրեմն կարեւոր բան մը կը պակսի դիտողներու կեանքին մէջ: Այս կը նշանակէ, թէ իրենց կեանքը դատարկ է եւ ո՛չ մէկ արժէքաւոր ու մնայուն բաներով լեցուն: Այս տազնապը ունեցողները կը կարծեն թէ իմաստալից եւ ուրախ կեանք ունենալու համար պէտք է որ ուրիշներուն նման միշտ ու մնայուն ներկայութիւն ըլլան ընկերային ցանցերու մէջ: Եւ հետեւանքը կ'ըլլայ մեր անձնական կեանքերը փոխադրել ընկերային ցանցերու աշխարհ. բան մը որ մեզ տակաւ առ տակաւ կը հեռացնէ մարդկային, բնական եւ կենդանի հաղորդակցութենէն, առանց որուն կարեւոր բան մը պակասած կ'ըլլայ մեր կեանքերուն եւ ինքնութեան մէջ:

Վերեւ յիշուած մտածումին դիմաց ոմանք կրնան հարց տալ եւ ըսել. «Մեզի ի՞նչ»: Այո՛, մեզի ի՞նչ, եթէ հարցը չ'ունենար իր անախորժ եւ վտանգաւոր հետեւանքները: Երբ վերջին ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, թէ երիտասարդներու մէջ անձնասպանութեան եւ իր սեփական անձը վտանգի ենթարկելու համեմատութիւնը աճած է, երբ այս բոլորին մէջ կը յիշուին ընկերային ցանցերու դերն ու տեղը՝ իբրեւ ուղղակի ազդեցութիւն, ա՛յլ կարելի չէ ձեռնածալ մնալ կամ լաւագոյն պարագային «ամէն մարդ ազատ է» արտայայտութիւնը ունենալ: Եթէ ընկերային ցանցերու լայն գործածութիւնը ըսկաւ արհեստագիտական նորարարական շարժումներու եւ յատուկ մշակոյթի իբրեւ պտուղ, ուրեմն պէտք է հաւաքական գիտակցութիւնը արթնցնել եւ անոր դիմաց ստեղծել այնպիսի մշակոյթ եւ մտայնութիւն, յայտարարելով թէ կեանքը ընկերային ցանցերէն դուրս աւելի երջանիկ է, մարդկային կենդանի յարաբերութիւնները՝ դրական, եւ մարդու անմիջական միջավայրն ալ արժանի է մեր ուշադրութեան:

Անոնք որոնք կը կարծեն, թէ ընկերային ցանցերը մարդոց կ'օգնեն աւելի ընկերային դառնալու եւ հաւաքականութեան շահերն ու արժէքները հետապնդելու՝ չարաչար կը սխալին: Ընկերային ցանցերը կը ստեղծեն այնպիսի մթնոլորտ, ուր մարդիկ դիւրին զանազան դիմակներու ետին կանգնած՝ շինծու եւ ինքնահնար աշխարհներ եւ ինքնութիւններ կը յերիւրեն եւ իրենց բարեկամներուն եւ «ընկերներուն» այդ բոլորով կը հրապուրեն: Այս պատճառով, շատեր մեծ յուսախաբուցութիւն կ'ապրին, երբ ընկերային ցանցերու ընդմէջէն իրենց ճանչցած անձը ամբողջութեամբ տարբեր կը թուի՝ ե՛ւ իբրեւ արտաքին պատկեր, ե՛ւ իբրեւ նկարագիր:

Ընկերային ցանցերու մէկ այլ ժխտական երեսը մարդս «հուշակաւոր» դարձրնելու եւ այդ սին յոյսերով ու խաբուսիկ պատկերով հրճուելու յայտնութիւնը տալն է: Մարդիկ անձնական եւ խմբային

նկարներ կը տեղադրեն, յատկապէս՝ սէլֆիներ, որոնք հոգեբանական վերջին ուսումնասիրութիւններու համաձայն, այս դարու եսապաշտութեան գերագոյն արտայայտութիւնն են: Այս ձեւով մարդիկ կը կարծեն որ իրենք դարձած են նշանաւոր, ճանչցուած՝ հազարաւոր «բարեկամներու» եւ «ընկերներու» կողմէ: Նախապէս, կարելի էր ենթադրել, թէ հուշակ ունենալն ու մարդոց կողմէ ճանչցուելը կախեալ էր անձի մը իսկական որակէն եւ ունեցած ներդրումէն: Հիմա, սակայն, անիկա կը թուի կախեալ ըլլալ անձին ունեցած «բարեկամներու» եւ «ընկերներու» թիւէն, հրապարակ նետած անձնական կեանքի ամէնէն անհեթեթ եղբուրթիւններէն ու նկարներէն, ինչպէս նաեւ աջէն-ձախէն քաղուած եւ տեղադրուած հազար ու մէկ մտածումներէն-մէջբերումներէն, շատ անգամ տեղադրող անձին կողմէ իսկ ոչ լրիւ կարդացուած եւ հասկըցուած:

Ընկերային ցանցներու եւ համացանցի գործունէութեան, եթէ կարելի է այս բառը գործածել, ամէնէն խտտագին երեւոյթը մարդուն իբրեւ Աստուծոյ պատկերով ստեղծուած արարածի արժէքին անկումն է: Համացանցի եւ ընկերային ցանցերու մարդը՝ յատուկ եզրերով եւ սահմաններով մարդն է, գեղեցիկ նկարի մը պէս, որ սակայն ոչինչ կ'ըսէ այդ անձին ներաշխարհին եւ ինքնութեան տարբեր գաղտնիքներուն մասին: Այս առիթով, Ճան Կորքի իր «Facebook and the End of Civilization» յօդուածին մէջ կը գրէ. «Դիմատետրը, մարդիկը ուրուագիծ-նկարի (profile) մէջ պարփակելով, կարելի դարձուցած է ընել այն, ինչ որ անկարելի էր որեւէ դար, բացի մերինէն: Հիմա կարելի է ուրիշին մասին մտածել իբրեւ առարկայ, գեղեցիկ պատկեր կամ պարզապէս գործիք»: Երբ «ընկերներու» քանակը կ'աճի, բայց ճիշդ չի թափուիր որակին ու մտերմութեան առջեւ կանգ առնելու, ալ ի՞նչ ընկերութիւն եւ բարեկամութիւն: Երբ «ընկեր» ունենալու ամբողջ նպատակը մնայուն կերպով իմ մտածումներս եւ նկարներս սիրելն է, եթէ բարեկամութեան կորիզը կը կազմէ իմ «մոտեք» իս ու «եկք» իս դրական արտայայտութիւններ՝ ուրեմն երեւակայեցէք այս յարաբերութեան տափակութիւնն ու մակերեսայնութիւնը:

Արհեստագիտութիւնը մարդկութեան ձեռքը սքանչելի գործիք մըն է: Անով կարելի է հնարել ու մարդկային բարիքին համար երեւան բերել այնպիսի բաներ, զորս հարիւրաւոր տարիներ առաջ մարդիկ զայն ունենալու նախանձէն կրնային մատ խածնել: Սակայն, ինչպէս բառը գործածուեցաւ, անիկա գործիք մըն է: Գործիքը եղած է, որպէսզի մենք տիրենք անոր եւ ո՛չ թէ անոր տիրութիւնը ընդունինք, որքան ալ գիշեր ու ցերեկ ուրանանք զայն: Կեանքը աւելի երջանիկ ու բնական պիտի ըլլայ, աւելի հանգիստ ու լաւ բաներով լեցուն, երբ կ'առնենք զայն ու կը վայելենք այնպէս, ինչպէս որ է: Արհեստագիտութիւնն ու շինծու բաները մեր չորս դին են, ամէն օր: Ինչո՞ւ բարեկամութիւնն ալ վերածենք անիրականի, խաբէականի ու խաբուսիկի...:





«Մարզիկ»ի անց-  
եալ թիւով (թիւ 423, էջ  
80-83) գումեցինք մա-  
հր Հ.Մ.Ը.Մ.Ի «Արժա-  
նեաց» շքանշանա-  
կիր, «Մարզիկ»ի եր-  
կարամեայ աշխա-  
տակից եղբ. Սամուէլ

Մկրտիչեանի, որ իր գիրակցական կեանքին ըն-  
թացքին Հ.Մ.Ը.Մ.ին նուիրեց աւելի քան 200 գրու-  
թիւն՝ յուշ, ակնարկ եւ յօդուած: Մկրտիչեան գրեց  
միութենական մարդու վառ ապրումներով, գլխաւոր  
նիրք ունենալով Հ.Մ.Ը.Մ.ական կեանքին երգն ու  
վերքը, մարդն ու փառքը, նուիրումն ու զեղեցկութիւ-  
նը, այնպէս ինչպէս ան պիտի բնորոշէր իր երկերէն  
մէկուն մէջ («Հ.Մ.Ը.Մ.ական մարդու ապրումներ»,  
Պէյրութ, 2002):

Իբրեւ վերջին յարգանք իր վաստակին եւ մշա-  
կած գրականութեան, «Մարզիկ»ի այս թիւով կը  
ներկայացնենք շուրջ քառորդ դար առաջ, Մարտ  
1998-ին, «Մարզիկ»ի թիւ 189-ին մէջ լոյս ընծայած  
եւ Հ.Մ.Ը.Մ.ի 80-ամեակին նուիրուած իր մէկ գրու-  
թիւնը, որուն պատգամները այժմեական ու թելադ-  
րական կը մնան այսօրուան եւ վաղուան սերունդ-  
ներուն:

Լո՛յս իր հոգիին, խոնարհում իր յիշատակին:

1918-ին մանուկ մը ծնաւ հայոց ցաւէն, տառապանքէն:  
Ջարդին արիւնով մկրտեցին այս մանուկը եւ զայն կոչեցին  
Հ.Մ.Ը.Մ.: Իսկ այս մանուկին պարտականութիւն տուին՝ ծա-  
ռայել հայ ժողովուրդին:

Այսօր, Հ.Մ.Ը.Մ.ի ծնունդէն 80 տարի ետք, երբ կանգնած  
ենք 80-ամեակի տօնակատարութիւններու սեմին, պարտք կը  
զգանք հաշուետու ըլլալ եկող սերունդին: Բայց թէ Հ.Մ.Ը.Մ.  
ի՞նչ տուաւ հայ կեանքին, թող այդ մասին խօսի ինքը՝ հայ ժո-  
ղովուրդը: Գալով մեզի, մենք կ'ուզենք ըսել, թէ ի՞նչ պէտք է  
ընենք եւ ի՞նչ պէտք է տանք Հ.Մ.Ը.Մ.ին:

Տարիներ առաջ անդրադարձած ենք այս նիւթին՝ Հ.Մ.-  
Ը.Մ.ական մարդուն ինքնաճանաչման հարցին, թէ ո՞վ է ինք՝  
Հ.Մ.Ը.Մ.ական մարդը եւ ի՞նչ պարտաւորութիւններ ունի  
հանդէպ իր անձին, իր պատկանած միութեան եւ ազգային լի-  
նելութեան:

Այո՛, Հ.Մ.Ը.Մ.ական մարդը նախ պէտք է ճանչնայ ինք-  
զինք ու յետո՛յ՝ պէտք է գիտակցի իր միութենական պարտա-  
կանութիւններուն եւ ուղեգիծին, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ական  
մարդը պարզ, սովորական անհատ մը չէ: Ինքնագլուխ, ան-  
պատասխանատու, անհոգ ու աննպատակ արարած մը չէ:  
Այլ, Հ.Մ.Ը.Մ.ական մարդը կը պատկանի ինքնագիտակից  
մարդոց այն հաւաքականութեան, նուիրեալներու այն փա-  
ղանգին, որ ունի իր ազգային տեսլականը, նպատակը, ուղե-  
գիծը եւ այդ հանգամանքներու բերումով՝ կանոնադրային



# ԾԱՆԻՐ ՉՔԵՉ

թէ բարոյական իր պարտաւորութիւնները՝ հանդէպ իր ազ-  
գին, հայրենիքին ու միութեան:

Հ.Մ.Ը.Մ.ի նշանակին երկու թեւերուն վրայ՝ դէպի վեր,  
դէպի վեհը սլացող երկու բառեր կան՝ «Բարձրացի՛ր-բարձ-  
րացու՛ր»: Երկու պարզ բառեր են, բայց հնչուն ոսկիի պէս  
մաքուր, աղամանդի պէս բլրեղ եւ այնքան իմաստալի, որ  
կարծէք աստուածային պատգամներ ըլլան: Երկու պարզ բա-  
ռեր են, որոնք շատ զեղեցկօրէն կը բնորոշեն Հ.Մ.Ը.Մ.ական  
մարդուն կեանքի ուղեգիծն ու փիլիսոփայութիւնը: Այդ եր-  
կու պարզ բառերը կը պատգամեն.- Ո՛վ Հ.Մ.Ը.Մ.ական  
մարդ, ազնուօրէն, պարկեշտօրէն նուաճէ բարոյական թէ  
նիւթական բարձունքներ եւ քեզի հետ բարձրացուր եղբայրդ,  
միութիւնդ եւ հայրենիքդ:

Ահա բարոյական ա՛յս հասկացողութենէն կը բխի Հ.Մ.-  
Ը.Մ.ի ուժին վեհութիւնը, մեծութիւնն ու յաղթանակելու  
կամքը: Այս երկու բառերով է, որ Հ.Մ.Ը.Մ.ը կ'առաջնորդուի  
դէպի կեանք, դէպի ազգային նշանաբան: Այս երկու բառե-  
րուն խորհուրդովն է, որ Հ.Մ.Ը.Մ.ը կը դարբնէ ու կատարե-  
լութեան կը հասցնէ հայն ու մարդը:

Բնականօրէն այս հանգամանքները կը թելադրեն եւ ի  
հարկին կը պահանջեն, որ Հ.Մ.Ը.Մ.ական մարդը՝ մեծ թէ պզ-  
տիկ, պատասխանատու թէ վարչական անդամ, ամէն տեղ եւ  
ամէն առիթով՝ խաղի դաշտերուն վրայ թէ հանրային հանդի-  
պումներու ընթացքին, ըլլայ գիտակից իր կոչումին ու խօս-  
քին, ու իր կարգապահ եւ օրինակելի կեցուածքով ըլլայ տի-  
պարը հոգեկան զեղեցկութիւններուն: Նաեւ հարկ է, որ  
Հ.Մ.Ը.Մ.ական մարդը գիտնայ յարգել մեծն ու մեծաւորը՝  
օրուան վարիչն ու երէկուան Հ.Մ.Ը.Մ.ականը, որ նուիրուած  
ու տուած է այս միութեան, որ քրտնած ու ընծայաբերուած է  
այս միութեան համար, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի ներկան ու ան-  
ցեալը կը կազմեն մէկ ամբողջութիւն, շողկապուած են նո՛յն  
տեսլականով ու կը հետապնդեն նոյն նպատակները: Այլա-





պէս, ՀՄԼՄ-ի նշանաբանին ու կարգ-կանոնին անյարիր ամէն կեցուածք ու ելոյթ պիտի վնասէ ՀՄԼՄ-ի վարկին, անունին ու հետապնդած նպատակներուն: Ուստի,

Այս օտար ակերտուն վրայ, ուր գետինը լարծուն է եւ բարքերը՝ խաթարուած, հարկ է յաճախ խօսիլ ինքնաճանաչման մասին: Հարկ է յաճախ յիշեցնել պարման-պարմանուհիին, թէ ո՞ւր կը կայանայ ՀՄԼՄ-ական մարդուն դերը, պարտականութիւնն ու պարտաւորութիւնը ՀՄԼՄ-ի տարագին հանդէպ: Այլապէս,

Ձի բաւեր գնդակը տալ եւ տղան վագեցնել գնդակին ետեւէն: Այլ, պէտք է բացատրել, թէ ո՞րն է գնդակին դերը եւ ի՞նչ է այդ վագքին նպատակը: Ձի բաւեր հայ տղուն յիշեցնել իր հայ ըլլալը, այլ անհրաժեշտ է ըլլալ պատանիին հետ, մտնել անոր հոգիին մէջ ու բացատրել հայու գոյութեան իմաստը, դերը՝ հայ ըլլալուն ու հայ մնալուն հրամայականը, որովհետեւ ՀՄԼՄ-ի համար սկաուտութիւնը թէ ֆուլթպոլը, պասքէթը թէ մարզական այլազան խաղերը ընտրեալ միջոցներ են, մտքի եւ հոգիի գեղեցիկ ու ազնիւ դպրոցներ են հայ պարման թէ պարմանուհին հայօրէ՛ն դաստիարակելու՝ անոր նկարագիրը ազնուացնելու, ազգային գիտելիքներ սորվեցնելու, գիտակից եւ պահանջատէր հայը կերտելու համար:

Թէեւ մեր օրերու մարդկային կեանքը զարգացման արտակարգ հոլովոյթներու կ'ենթարկուի, գիտութիւնը սրաթուիչ արագութեամբ կը յառաջդիմէ, համակարգիչը հրաշքներ կը գործէ, մարդը տիեզերքը կը նուաճէ:

Բայց հակառակ գիտութեան այսքան զարգացման, մարդկային կեանքը դարձած է անտանելի, ընտանիք թէ ընկերութիւն հասկացողութիւնը գրեթէ կորսնցուցած է իր վեհ ու սրբազան խորհուրդը, սերունդ դաստիարակելը դարձած է դժուար, իսկ օտարութիւնը արդէն կը կրծէ եւ արագ թափով կը ջլատէ ազգային դիմագիծ պահելու ոգին:

Մինչ, կեանքի այս իրադարձութիւններուն դիմաց, ՀՄ-

ԼՄ-ի տեսլականը՝ մեր պապերուն արեան եւ ինչքին պահանջատիրութիւնը դեռ կը մնայ անիրագործելի ՀՄԼՄ-ի նպատակները դեռ կը մնան անկատար, իսկ ՀՄԼՄ-ի ազգային պարտականութիւնները տակաւ կը դժուարանան ու կը դառնան մտահոգիչ:

Իսկ մենք՝ հայ ազգին տարտղնուած գաւակները, կը գրտնուրիք դժուար հարցումի մը առջեւ. ի՞նչ ընել, ո՞ւր կառչիլ ազգային այսքան կարիքներու եւ այսքան պատասխանատուութեան առջեւ:

Այսօր ՀՄԼՄ-ի 80-ամեակի տօնակատարութիւններու սեմին, այս է հրամայականը. ի՞նչ ընել...: Օտարէն չկայ յոյս, կը յուշէ ներքին ձայն մը:

Համոզուած ենք, որ կեանքի այս իրողութիւններուն առջեւ մեզի կը մնայ մէկ ելք՝ ապաւինիլ մեր սեփական ուժերուն: Ուստի,

ՀՄԼՄ-ական մարդ, ծանիր զքեզ, չափէ՛ ուժերդ եւ աւելի սէր ու գուրգուրանք, աւելի ջանք ու հոգածութիւն ներդրէ ՀՄԼՄ-ական սերունդ պատրաստելու գործին, որովհետեւ մեր նպատակին հասնելու ճամբան դեռ երկար կ'երեւի, իսկ այդ ճամբուն վրայ մեզմէ պահանջուած գոհողութեան կարիքը շատ ծանր է:

Բայց, «Նպատակս տկարութիւն չի՛ ճանչնար...»:

Ուստի, ՀՄԼՄ-ական եղբայր, ճակատագիրի ընկերներ, մեր միութեան 80-ամեակին ընդառաջ, այս գիտակցութեամբ ու հաւատքով կառչինք մեր տեսլականին, սուրբ ու սրբազան մեր նպատակներուն, որոնք ամուր կուռաններ են, վրէժի բոցեղէն լոյսեր են ՀՄԼՄ-ը դէպի գոյութեան պայքար, դէպի ազգ ու հայրենիք առաջնորդելու համար:

Ուրքի՛, մեր պապերուն հաւատքով քալենք դէպի նպատակ:

«Մարզիկ», Մարտ 1998:



## Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՄ ԵՒ ՔՈՅՐԵՐՈՒՄ

### Սերոբ Սահակեան ԵՐՈՒՍԱԴԵՍ

Հոս-հոն, ամէնուրեք:

Անկասկած, որ չեր աշխարհներ միայն գնահատականի արժանի է: Ան միայն իրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի հպարտութեան մնայուն սկունքն է:

Ան միայն իմ նմանին հոգիի անոյշ բերկրանքն է:

Ես լաւ գիտեմ, թէ ինչպիսի՞ մարտահրաւերներու դիմաց էք:

Ես լաւ գիտեմ, թէ չեր առօրեան ինչպիսի՞ դժուարութիւններու մէջ է:

Ես լաւ գիտեմ, թէ Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալը, աւելին մնալը ինչպիսի՞ պայքար է:

Ու ես լաւ գիտեմ, թէ որո՞նք, ի՞նչ սկաններ կը տեղադրեն չեր ճապրուն վրայ:

Ես լաւ գիտեմ, թէ որո՞նք, ի՞նչ փորձարկութիւններ կը կատարեն չեր շարքերուն մէջ:

Ես լաւ գիտեմ, թէ ի՞նչ որոգայթներ, մանաւանդ այս օրերուն, տեղ կը գրաւեն, շարքեր կը շլացնեն չեր անմիջական շրջանակին մէջ:

Սիրելիներ,

Դուք կրնաք չեր շրջապատին լաւագոյն մարզական շարժումը ըլլալ:

Դուք կրնաք չեր շրջապատին լաւագոյն շեփորախումբը ունենալ:

Դուք կրնաք չեր շրջանին լաւագոյն սրահը կամ լողաւազանը իբրեւ միութեանական սեփականութիւն ունենալ:

Բայց գիտցէք, թէ ոչինչ ունիք, եթէ այդ բոլորին կողքին դուք կորսնցուցած էք հիւլէ մը չեր ազգային ինքնասիրութենէն:

Ոչինչ ունիք, եթէ կորսնցուցած էք քող մը հայերէնէն, էջ մը չեր պարմութենէն, պարզամ մը Շաւարշ Քրիսեանէն:

Վերջապէս, ոչինչ ունիք, եթէ ամէնէն թէժ վերիվայրումներու ընթացքին կորսնցուցած էք Հ.Մ.Ը.Մ.ի չեր ոգին:

Հեղեւաբար, ԶԳՕՆ,

Այնպէս ինչպէս իմ Աքելլաս,

Հ.Մ.Ը.Մ. անդասարանի մուտքիս առաջին տնային ու վկան:

Ուրեմն, օ՛ն, Հ.Մ.Ը.Մ.ական եղբայր:

Չկասկածիս,

Դուն ես ու պիտի մնաս հայուն լաւագոյն տեսականին, պարնէշի վրայ ու անդուլ պայքարի վկայ:

### Վիզէն Գեորգեան ՅԱԼԷՊ

Անգուգական անձնաւորութիւն մը, որ անցաւ Հայէպ քաղաքէն, դարձաւ Սուրիոյ մարզական երկնակամարի անկրկնելի տիրաններէն, միաժամանակ սերունդներու մարզական մշակ՝ Ազգային Քարէն Եփփէ Ճեմարանին մէջ իր երկարամեայ ուսուցչական նուիրեալ աշխատանքով: Դժբախտաբար, ան իր արժանի տեղը չգտաւ ո՛չ իր կեանքի տեւողութեան, ոչ ալ՝ յետ-մահու:

Սուրիոյ մարզական եւ մարզասէր ամբողջ Հասարակութիւնը Ֆուլթայրի աշխարհին մէջ գինք կը ճանչնայ 1950-ական թուականներէն: Ան գերազանցած է համարեա՛ իր ժամանակաշրջանի բոլոր մարզիկները: Յիշողութեանս մէջ տակաւին թարմ է առիթով մը իր պատմած հետեւեալ եղելութիւնը. օրուան մարզական պատասխանատու գրասենեակը որոշած է գինք եւ այլ երկու մարզիկներ ուղարկել Պրազիլ՝ յաւելեալ մարզումներու համար, յատուկ գումար յատկացուցած է այդ ճամբորդութեան: Դժբախտաբար, սակայն, ճամբորդութիւնը չէ իրականա-



### Սերոբ Սահակեան ԵՐՈՒՍԱԴԵՍ

Կ՛ըսեն, թէ եղբայր Գառնիկի մահուան տարեկիցն է:

# ՄԵՐ ՄԵԾԵՐԸ. ԱԲՐԱՀԱՄ ՔԷՇԻՇԵԱՆ, ԾԱԾԿԱՆՈՒՆՈՎ՝ ԱՅՐԱՆՃԻ



ցած՝ զանազան պատճառներով:

Աբրահամ Քէշիշեանը անգուգական կը նկատենք այն պատճառով, որ ան իր մարզական կեանքը չաւարտեց իր յառաջացած տարիքին բերումով, ինչպէս սովորաբար կ'ըլլայ բոլոր մարզիկներուն, նոյնիսկ՝ աստղերուն պարագային: Եղբայր Աբրահամին մարզական բնածին կարողութիւնն ու ձիրքը գինք յառաջացած տարիքին իսկ մղեցին այլ մար-

զախադի: Ան մուտք գործեց թենիսի աշխարհ՝ իր լայն դռնէն եւ արձանագրեց երկարատեւ ախոյեանութիւններ՝ շճմեցնելով Սուրիոյ մարզական հասարակութիւնը: Անոր աշխարհը կլանած էր մարզանքը:

Անգուգական էր նաեւ այն իմաստով, որ իր դիպուկ եւ հե-

տեւողական, բծախնդիր ու յամառ աշխատանքով Սուրիոյ մակարդակի ախոյեաններ շնորհեց Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան, երբ Սուրիոյ հաւաքականը ներկայացուց արաբական եւ միջագոյն մրցաշարքերուն: Իր մարզիկները երկիւղածութեամբ կը յիշատակեն մեծ մարզասէրն ու մարզիկ կերտող մշակը: Այդ ախոյեաններու փաղանգին մաս կը կազմեն հետեւեալները՝ Մարի Սուրատեան, Շուքրի Սուրուրեան, Դաւիթ Դաւիթեան եւ ուրիշներ:

Պարոն Աբրահամին մենք հանդիպեցանք Ճեմարանի շրջափակին մէջ՝ իր եռուն ներկայութեամբ, ոչ իբրեւ լոկ մարզանքի սովորական տեսուչ, այլ՝ մարզական միութեան մը մարզիչ, որուն կորովը սպառելի չէր գիտեր: Ան աշակերտութեան մէջ կ'ուզէր սերմանել մարմնամարզի սէրը, Ֆութպոլի, վոլիպոլի եւ պասքեթպոլի կողքին կը կատարէր ակտիւ իւրաքանչիւր մարզումներ, որոնց կողքին ան անհատական մարզումներու կ'ենթարկէր մարզիկները: մէկ խօսքով՝ կը նմանէր մեղուի մը, որ հանգստանալ չէր գիտեր:

Դպրոցական օրուան աւարտին կը սկսէին դասարանային մրցաշարքները, որոնք դպրոցական ամբողջ տարեշրջանին կը շարունակուէին: Մեր վարժարանի զանազան մարզախաղերու հաւաքականները կը մասնակցէին Հայկազի միջ-դպրո-

## ՆԱԵՒ ՄԱՀԷՆ ԱՆԳԻՆ...

Կ'ըսեն, թէ եղբայր Պատրիկի տարեւիցն է նաեւ: Ինչ որ մէկը յարմարցուցած է այնպէս մը, որ Հ.Մ.Լ.Մ.ական անբաժան երկու եղբայրներու հոգեհանգստեան արարողութիւնները կատարուին միաժամանակ եւ միատեղ:

Ըստ երեւոյթին այդ մէկը նպատակադրած է երկուքին եղբայրութեան գորդեան հանգոյցին գուրգուրալ նաեւ մահէն անդին:

Այս պահուն ո՛ր է եղբայր Պատրիկը, ո՛ր է եղբայր Գառնիկը, ես չեմ գիտեր, այնուհետեւ մէկ բան վստահ գիտեմ, թէ ո՛ր ալ են, անպայման իրարու հետ են:

Ուր ալ են, անպայման նոյն «տարտերով» են:

Ուր ալ են, անպայման նոյն պայքարին՝ նոյն ճակատին լուռ զինուորեալներն են:

Նոյն զինուորեալներն են՝ մէկը միւսին իրարու աչքերով խօսող:

Մէկը միւսին տասը լեռնէ անդին իսկ իմացող:

Մեծ գործի դաշտին մէջ մէկը միւսը ամբողջացնող:

Վերջապէս, այս նկարը շատ կը խօսի այդ հոգեւոր թէ ընկերային կապին մասին:

Շատ կը խօսի Հ.Մ.Լ.Մ.ական մարդու իր եղբօր հանդէպ ունեցած հաւատարմութեան թէ անեղծ շողախին մասին:

Ի վերջոյ կը խօսի Գառնիկի թէ Պատրիկի եղբայրական անկեղծ սիրոյ մասին:

Ու նկարն է, որ կը խօսի հոգեբարոյական արժէքներու տէր մեծահարուստ Պատրիկ Կիւլպէնկեանի մասին:

Նկարն է, որ եթէ չեմ սխալիր կը վերաբերի նոյն մեծահարուստ եղբայր Պատրիկի Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան զբասենեակ վերջին այցին:

Նկարն է, որ կը վերաբերի եթէ չեմ սխալիր, շատ իմաստով մնաք բարովի մասին:

Նկար, ուր Գառնիկին աչքերը կը խօսին նուիրեալ Պատրիկներու նկատմամբ ունեցած խոր երախտագիտութեան մասին:

Վերջապէս նկար, որ կը խօսի մահէն անդին իսկ եղբայրութեան մասին:

Աստուած ձեր հոգիները լուսաւորէ Պատրիկ ու Գառնիկ:

Ձեր նմաններուն փնտուտուքը կ'երեւի վերջ չունի:

ցական մրցաշարքներուն, վարժարանը ողողելով ախոյեանական բաժակներով: Տակաւին դպրոցական կիսօրեայ դադարներուն ականատեսը կ'ըլլայինք այլ վարժարաններու այցելու խումբերու բարեկամական մրցումներուն: Ահա այս բոլոր ծրագիրներուն նուիրուած էր պարոն Աբրահամ: Անոր վաստակը նիւթական փոխարժէքով կարելի չէ գնահատել, բառին ամբողջական իմաստով գործի մարդ էր ան եւ ցայտուն օրինակ՝ բոլոր ժամանակներու համար:

Հալէպահայ մարզասէրներն ու իր աշակերտները վստահաբար կը յիշեն այդ յաղթանդամ մարզիկն ու մարզիչը, որ իր երթեւեկը միշտ կը կատարէր հեծանիւով՝ Նոր Գիւղի տունէն ձեմարան, ապա՝ Հ.Մ.Ը.Մ.ի պարտէզ (Ազիզիէ): Սովորական օր մը իրարու հանդիպեցանք պարտէզին դրան առջեւ: Տարիքով բաւական յառաջացած էր. բարեւեցինք զիրար, իր որպիսութիւնը հարցուցի, հետաքրքրական ու անհասկնալի հոգեվիճակ մը կ'ապրէր՝ արցունքով փայլող աչքերով ու դողդոջուն շրթներով ըսաւ. «Ծանօթներս, հարազատներս բոլորը մահացան, ա՛լ ես մէկը չեմ ճանչնար, մնացի մինակ...»: Խօսքերը ճակատի տխուր անդրադարձ մը ունեցան վրաս: Դժբախտաբար, այդպէս ալ մինակ, տան մէջ մահացաւ՝ աշխար-

հէն կտրուած, անտէր, անտիրական: Ափաշափ միութենական ներկայացուցիչներ ներկայ գտնուեցան յուղարկաւորութեան:


Այսօր, հազարաւոր մղոններ հեռուէն կ'ուզենք քուլիսային յուշարարութիւն մը կատարել. արդեօք կարելի՞ է տարեշրջանի մը շրջանաւարտ փաղանգը անուանակոչել պարոն Աբրահամին անունով, ինչպէս այլոց, իբրեւ նուազագոյն խղճի պարտք ու հոգեկան բաւարարութիւն:

Մեր կարծիքով, պարոն Աբրահամ, իբրեւ ժամանակակիցը հայերէնաւանդ ուսուցիչ պարոն Մկրտիչ Մկրտիչեանին, համարժէք էր, որովհետեւ եթէ վերջինս կրթական մշակ էր, ան՝ մարմնամարզումի մշակ: Մերունդներ բախտաւորուեցան ճաշակելու նման հսկաներու խանդն ու անսպառ կորովը, չենք զիտեր, սակայն, թէ ան ինչո՞ւ իր արժանի տեղը չէ գտած: Պարտք կը նկատենք, որ նման տիտաններու անուան վրայ կուտակուած փոշին մաքրենք եւ փորձենք զիրենք պահել իրենց արժանի բարձունքին վրայ: Կը հաւատանք, որ սերունդի մը դաստիարակութեան մէջ կարեւոր նշանակութիւն ունի արժանաւոր մարդը մեծարելու արուեստը, եթէ կ'ուզենք մենք մեզ դասել քաղաքակիրթ հաւաքականութիւններու շարքին:

ՄԱՀՈՒԱՆ 50-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

ՏՈՔԹ. ԱՏՈՒՐ ԳԱՊԱԳԵԱՆ

**20** 22 թուականը կը նշէ մահուան յիսնամեակը Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի եւ Միջին Արեւելքի երբեմնի կարկառուն դէմքերէն տղքթ. Ատուր Գապագեանի, որուն կը պատկանի պատիւը Հալէպի մասնաճիւղին հիմնադիրը ըլլալու: Խօսիլ տղքթ. Ատուր Գապագեանի մասին կը նշանակէ խօսիլ աւելի քան կէս դարու ազգային-հասարակական ծառայութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.ական բեղուն գործունէութեամբ մարդու մը մասին, որուն բովանդակ կեանքը եղաւ անսահման նուիրաբերում իր ժողովուրդին եւ անոր անժամանցելի դատին:



ուսումնաստենչ երիտասարդը կը մեկնի Պէյրութ՝ հետեւելու Պէյրութի Ամերիկեան Համալսարանի աստամբուժական ճիւղին:

1924-ին, վկայուելէ ետք, տղքթ. Ատուր Գապագեան կը վերադառնայ Հալէպ եւ մինչեւ Պէյրութ տեղափոխութիւնը կը հանդիսանայ Սուրիոյ ազգային կեանքի ամէնէն տիրական դէմքերէն մէկը: Արդարեւ, 1925-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի նորակազմ մասնաճիւղը իրեն կը դիմէ՝ Հալէպի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը հիմնելու համար:

Դիմումին ընդառաջելով, ան իր տան մէջ խորհրդակցութեան կը հրաւիրէ մինչ այդ Հալէպի մէջ գործող մարզական հինգ միութիւններն ու խումբերը՝ «Համազասպ», «Ուսումնասիրաց», «Կայծակ», «Տալուրիկ» եւ «Արարատ»: Կը ներկայանան առաջին չորս միութիւններու ներկայացուցիչները եւ կ'որոշեն հանդիպիլ երկրորդ անգամ: Երկրորդ հանդիպումին, 1 Նոյեմբեր 1925-ին, կը ներկայանան «Համազասպ», «Կայծակ» եւ «Տալուրիկ» միութիւններու ներկայացուցիչները միայն եւ տեղույն վրայ իրենք զիրենք լուծուած յայտարարելով՝ առժամեայ մարմինի մը կը վստահին Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը հիմնադրութեան պարտականութիւնը:

Իսկ ո՞վ էր տղքթ. Ատուր Գապագեան մարդն ու Հ.Մ.Ը.Մ.ականը:

Տղքթ. Ատուր Գապագեան ծնած է 1895-ին, Այնթապ: Փոքր տարիքէն ան ճաշակած է որբութեան դառնութիւնը, որովհետեւ ծնած պահուն մայրը յաւիտեան իր աչքերը փակած է ծննդաբերութեան ընթացքին: Նախնական ուսումը ան ստացած է Կեսարիոյ Ս. Կարապետ վանքը, որմէ ետք ան յաճախած է ծննդավայրի Այնթապ քոլէճը:

1915-ին, տարագրութեան ալիքը դեռատի Ատուրը կը հասցնէ Համայնի շրջան, Սուրիա: 1918-ին, Յեղասպանութենէն փրկուած՝ ան կը վերադառնայ Այնթապ: Տարի մը ետք,

«Համազասպ», «Ուսումնասիրաց», «Կայծակ», «Տալուրիկ» եւ «Արարատ»: Կը ներկայանան առաջին չորս միութիւններու ներկայացուցիչները եւ կ'որոշեն հանդիպիլ երկրորդ անգամ: Երկրորդ հանդիպումին, 1 Նոյեմբեր 1925-ին, կը ներկայանան «Համազասպ», «Կայծակ» եւ «Տալուրիկ» միութիւններու ներկայացուցիչները միայն եւ տեղույն վրայ իրենք զիրենք լուծուած յայտարարելով՝ առժամեայ մարմինի մը կը վստահին Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը հիմնադրութեան պարտականութիւնը:

Այսպէս, մասնաճիւղին հիմնադրութիւնը կը կատարուի



**15 Փետրուար 1947. Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ, Լիբանանի, Պաղեստինի եւ Անդր-Յորդանանի 9-րդ Պատգամաւորական ժողովի մասնակիցներ: Տոքթ. Ատուր Գապագեան կեդրոնը, Բ. շարք, ձախէն 8-րդը:**

17 Նոյեմբեր 1925-ին եւ վերոյիշեալ երեք միութիւններու 48 անդամները կ'արձանագրուին Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի անդամ եւ կ'ընտրեն իրենց անդրանիկ վարչութիւնը՝ ատենապետութեամբ եղբ. Լուտեր Մասպանաճեանի:

1948-ին, տոքթ. Ատուր Գապագեան կը հաստատուի Պէյրութ եւ երկու շրջան՝ 1949-1954 ան կը վարէ Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան ատենապետութիւնը, առաջին շրջանին գործակիցներ ունենալով Յակոբ Աշճեանը, Վահրամ Կիւրճեանը, Մանուկ Տէտէեանը եւ Միսաք Պրժեանը, իսկ երկրորդ շրջանին՝ վերջին երկուքին կողքին Ալպէր Յակոբեանը, տոքթ. Յակոբ Պէրպէրեանը, Հրանդ Մուրատեանը եւ Յովհաննէս Շահինեանը:

Նուիրեալ Հ.Մ.Ը.Մ.ական մը ըլլալու կողքին, տոքթ.

Ատուր Գապագեան հաւատաւոր Դաշնակցական մըն էր: 29 տարեկանէն սկսեալ եւ մինչեւ 1960-ական տարիներ ան մաս կը կազմէ Հ.Յ.Դ. Սուրիոյ եւ Լիբանանի Կեդրոնական Կոմիտէներուն: Կը մասնակցի Հ.Յ.Դ. ԺԵ., ԺԶ., ԺԼ. եւ ԺԹ. Ընդհանուր Ժողովներուն: 1963-ին կ'ընտրուի Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ եւ մինչեւ մահը կը մնայ պատասխանատու դիրքի վրայ:

Իր համբերատար, հանդարտ եւ հանդուրժող բնավորութեամբ, հաւասարակշիռ եւ արդար դատողութեամբ, տոքթ. Ատուր Գապագեան կ'արժանանայ չընդապատի խոր յարգանքին եւ համակրանքին:

Ազգային-կուսակցական երեք քառորդ դարու վաստակով մը բեռնաւորուած՝ տոքթ. Ատուր Գապագեան կը մահանայ 22 Ապրիլ 1972-ին եւ կը թաղուի Հ.Յ.Դ.դաշնակցութեան պանթէոնը, Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատան մէջ, Լիբանան:



Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի երբեմնի ակումբին մէջ. ձախէն աջ՝ Լուտեր Մասպանաճեան, ..... , տոքթ. Ատուր Գապագեան, տոքթ. Գասպար Գասպարեան, Հրաչ Փափագեան, տոքթ. Լեւոն Ենիգոմշեան, Միհրան Յերարտեան, Եուսուֆ Շիթիլեան, Կարապետ Աղճեան եւ Յարութիւն Պազարպաշեան:

# ՄԵՐ ԵՐԹԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ ՀԱՒԱՏԱՐԻՄ ՄԻՈՒԹԵԱՆ «ԲԱՐՉՐԱՑԻՐ-ԲԱՐՉՐԱՑՈՒՐ» ՆՇԱՆԱԲԱՆԻՆ, Հ.Մ.Ը.Մ.Ի ՁԱՀԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՎ ՄԵՁԻ ՅԱԶՈՐԴՈՂ ՄԵՐՈՒՆԳՆԵՐՈՒՆ

## ԿԸ ՀԱՍՏԱՏԻ ԵՂԲ. ՅԱԿՈՒ ՌԻՐԻՇԻԿԵԱՆ

### Ժիրայր Կարապետեան ՀԱԼԷՊ

**Ս**կառուտական շարժումը մարդկային, ազգային եւ միջազգային շարժում է: Նպատակն է պատրաստել երիտասարդներ, որոնք կը յատկանշուին առողջ մարմինով, ամուր նկարագիրով եւ ազնիւ կենցաղով:

Հ.Մ.Ը.Մ.ական սկառուտը, իր կարգին, այլ սկառուտներէ կը գատորոշուի իր ազգային արժէքներով, հայրենասիրութեամբ եւ «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին հաւատարմութեամբ, միշտ պատրաստ՝ ծառայելու ազգին, հայրենիքին եւ ժողովուրդին:

Փետրուար ամիսը, ինչպէս հայ ժողովուրդին, այդպէս ալ Հ.Մ.Ը.Մ.ական սկառուտներուն համար յատկանշական ամիս է, որովհետեւ այդ ամսուան մէջ Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական կառույցը, իր 111 մասնաճիւղերով, կը սօսնէ «Հայ սկառուտին օր»ը: Պատահականութիւն չէ սօսին յիշատակումը այս օրը, որովհետեւ ան կը զուգահիւսի Վարդանանց ճակատամարտին:

Հ.Մ.Ը.Մ.ի Հայկալի մասնաճիւղը, 1925-ին, իր հիմնադրութեան օրէն կը հանդիսանայ այն աշխոյժ մասնաճիւղը, որ հայ կեանքին հասցուցած է զանազան մարզերու մէջ պատասխանատուութիւն ստանձնող ղեկավարներ:

Այս առիթով, Հայկալի «Գանձասար» շաբաթաթերթը հարցազրոյց մը ունեցաւ սկառուտական պետական ֆետերասիոնի 7-րդ վաշտի վաշտապետ եւ Հայկալի մասնաճիւղի խմբապետ եղբ. Յակոբ Ուրիշիկեանին հետ:

Եղբ. Յակոբ միութեան նպատակին եւ ներկայ պայմաններու գործունէութեան անդրադառնալով ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտութեան նպատակն է պատրաստել ամուր նկարագիրի եւ բարոյական բարձր արժանիքներու տէր, հաւատաւոր եւ անձնուէր հայեր, ծառայելու ազգին եւ հայրենիքին ու նուիրուելու հայ ժողովուրդի ձգտումներուն իրագործման: Այս շարքերուն մէջ կը պատրաստուին չարքաշ ու արի անհատներ, որոնք տարուէ տարի կը զարգացնեն իրենց մտահորիզոնն ու ծառայելու ոգին»:



Երբ հարց տուինք անոր, թէ մասնաճիւղը քանի՞ տարազաւոր անդամ ունի, քանի՞ միաւոր եւ ինչպիսի՞ աշխատանքներ կը տարուին մասնաճիւղէն ներս, եղբ. Ուրիշիկեան նախ անդրադարձաւ միաւորներու պատկերին ըսելով.-

«Ներկայիս ունինք չորս միաւորներ.-

«- Յովհաննէս Հինդլեան» երէց-պարման միաւոր, որուն մաս կը կազմեն

17-18 տարեկան պարմաններ: Անոնք դաստիարակչական յատուկ ծրագիրի հետեւելով ամիսներ ետք կը ղեկավարեն խումբերը:

«- «Շաւարշ Քրիսեան» արի-արեւոյշ միաւոր, որուն մաս կը կազմեն միջնակարգ ուսման տարիքին հասած պատանիներ: Անոնք կը հետեւին սկառուտական՝ տեսական եւ գործնական ծրագիրներու:

«- «Գրիգոր Յակոբեան» գայլիկ-արծուիկ միաւոր, որուն մաս կը կազմեն նախակրթարանի տարիքի փոքրիկներ: Անոնք ունին յատուկ յայտագիր, որ յազեցած է երգի, խաղի եւ պատմութեան ուսուցումով: Անոնք կը ստանձնեն նաեւ իրենց խումբին մակարդակով պարտականութիւններ:

«- Մոկլի միաւոր.- ամէնէն ուրախ եւ գունեղ միաւորը, որ կազմուեցաւ ամիսներ առաջ, Կեդրոնական Վարչութեան թելադրանքով: Միաւորին կրնան մաս կազմել երեք տարեկանէն սկսեալ մանուկներ: Հայկալի մասնաճիւղը առաջին մասնաճիւղն է, որ հիմնեց այս միաւորը եւ ունեցաւ մանկական յատուկ սրահ: Ասիկա կը նկատեմ ամէնէն կարեւոր միաւորը, որովհետեւ երբ աշխատինք փոքրիկներուն հետ, իրենց ծնողքին գործակցութեամբ, հետագային կ'ունենանք արի եւ անձնուէր անհատներ: Մոկլի միաւորն ալ ունի իր ծրագիրը, որ կ'ընդգրկէ մանկական խաղեր՝ գոյներու եւ ձեւերու օգտագործումով: Ներկայիս մասնաճիւղին մաս կը կազմեն 375 տարազաւոր քոյրեր ու եղբայրներ:

«Կեդրոնական Վարչութիւնը կը հրատարակէ իւրաքանչիւր տարիքի յատուկ գիրքեր, որոնցմով կը մատուցուին դաստիարակչական տեսական եւ գործնական ծրագիրներ: Կը կազմակերպենք նաեւ կարգերու զանազան սեմինարներ,

տարեկան բանակում եւ գիշերային ու միջօրեայ գործունէութիւններ:

«Նկատի ունենալով, որ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը մաս կը կազմէ սկաուտական պետական ֆետերասիոնին, հետեւաբար, աշխոյժ եւ օրինաւոր մասնակցութիւն կը բերենք ֆետերասիոնի կազմակերպած տողանցքներուն, բանակումներուն, մարզական մրցաշարքերուն եւ ժողովներուն:

«Այս բոլոր աշխատանքներուն կողքին, իբրեւ տարագաւորներ կը հրաւիրւինք փրոթոքոլային աշխատանքներու, եկեղեցական կամ ազգային տօներու, ձեռնարկներու եւ հանդիսութիւններու: Այսինքն, մենք միշտ ներկայ ենք, ուր որ անհրաժեշտ է եւ այսպէս ալ կը սորվեցնենք մեզի յաջորդողներուն»:

Երբ հարց տուինք եղբօր, թէ երիտասարդութիւնը ի՞նչ կը փնտռէ եւ ի՞նչ կը գտնէ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ, ան պատասխանեց. «Պահանջները շատ են, սակայն անոնք Հ.Մ.Ը.Մ.ի մէջ կը գտնեն սէր, յարգանք: Անոնք հաւաքական աշխատանքի փորձառութիւն ձեռք կը ձգեն՝ մարզական եւ սկաուտական մարզերու մէջ:

«Հ.Մ.Ը.Մ.ը մեծ դպրոց մըն է, որ կը խնամէ, կը զարգացընէ եւ կը կերտէ հազարաւոր սերունդներ: Հ.Մ.Ը.Մ.ը մեր յոյսն ու լոյսն է:

«Հ.Մ.Ը.Մ.ը միակ միութիւնն է, ուր մարմնակրթութեան եւ մարզակերտումի աշխատանքը կը սկսի փոքր տարիքէն՝ երեք տարեկանէն: Այդ փոքրիկը մեր մթնոլորտին մէջ մեծնալով կը դառնայ վաղուան ղեկավարը եւ առաջնորդը՝ ծառայելով ազգային, եկեղեցական եւ նոյնիսկ պետական մարզերու մէջ: Անոնք կը սորվին կեանքի դժուարութիւնները յաղթահարել փախտով, միասնակամութեամբ եւ բարձր ոգիով»:

Այս աշխատանքներուն ընթացքին վստահաբար կը յառաջանան դժուարութիւններ: Ի՞նչ կ'ըսէք այդ մասին», հարցուցինք:

«Մեր հիմնական դժուարութիւնը 18 տարիքը ամբողջացը-



նող եղբայրներուն զանազան պատճառներով գաղթի դիմելն է: Այս պատճառով ալ մեր խմբապետական կազմին անդամները կը ծանրաբեռնուին՝ ծառայելով տարբեր մարզերու մէջ:

«Ներկայ սերունդը համացանցի եւ արդիական խաղերու գերին դարձած է, այս ալ դժուարութիւն մըն է, զոր կը ջանանք յաղթահարել՝ զիրենք երբեմն այդ մթնոլորտէն դուրս բերելով, փոխարէնը խմբային կամ դաշտային խաղերու մասնակից դարձնելով:

«Երկրի տնտեսական իրավիճակին բերումով ունինք նաեւ նիւթական դժուարութիւններ, սակայն մասնաճիւղին վարչութիւնը միշտ սատար կը հանդիսանայ մեզի՝ իր կարելիութեան սահմաններուն մէջ փարատելով այս դժուարութիւնները:

«Ունինք նաեւ մնայուն կեդրոնի դժուարութիւն, նկատի ունենալով մեր մեծ թիւը եւ ծրագիրը, որ դաշտային եւ դասարանային միջավայր կը պահանջէ: «Միմոն Վրացեան» շէնքը տրամադրուած է մեզի: Այնտեղ կը կատարենք մեր շաբաթական ժողովները: Մոկլի միաւորին սրահն ալ այդ շէնքին մէջ կը գտնուի:

«Ազգ. Կիւլպէնկեան վարժարանը տրամադրուած է գայլիկ-արծուիկներուն, իսկ Հ.Մ.Ը.Մ.ի դաշտը երէց պարմաններուն եւ արիական բոլոր խումբերուն, որպէսզի դաշտային աշխատանք տանին այդտեղ:

«Շաբաթներ առաջ, այս դժուարութեան պատճառով, Համագայինը եւս «Ձաւարեան» մշակոյթի կեդրոնը տրամադրեց մեզի: Ներկայիս արիական քանի մը խումբեր իրենց գործունէութիւնը այնտեղ կը կատարեն: Շնորհակալ ենք Համագայինին:

«Մեր երթը կը շարունակենք հաւատարիմ միութեան «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին, կը գոյատեւենք եւ կը փորձենք յաղթահարել բոլոր դժուարութիւնները՝ Հ.Մ.Ը.Մ.ի ջահը փոխանցելով մեզի յաջորդող սերունդներուն»:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԷՁ. 1918-1927 (Զ. ՄԱՍ)



Հ.Մ.Ը.Մ.Ի պատմության նշանակալից ու անձանօթ մեկ հանգրուանին վրայ կարելու լոյս սփռող աշխատասիրութիւն մըն է ստորեւ տըրւած պատմական ակնարկը, գրուած՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Յարութ Չէքիճեանի կողմէ:

Ակնարկը վեցերորդ մասն է երկար ուսումնասիրութեան մը, որ մաս առ մաս կը հրատարակուի «Մարզիկ»-ի յաջորդական թիւերով:

Նիւթը կ'անդրադառնայ Ա. Հանրապետութեան եւ անոր յաջորդող շրջանին Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.Ի ծաւալած գործունէութեան: Այս մասին միութեանական պատմագիտութիւնը գրեթէ բան չէ հաղորդած մեզի:

Չէքիճեան նիւթը ուսումնասիրած եւ ներկայացուցած է Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակի գիտաժողովին, ապա զայն վերամշակելով եւ յաւելեալ նիւթերով հարստացնելով, զայն պատրաստած է հրատարակութեան:

Կարօ Գէորգեանի «Ամէնուն Տարեգիրքը»-ի 1965-ի եւ 1967-1968 տարիներու թիւերուն մէջ կը հանդիպինք հետաքրքրական եւ արժէքաւոր երկու վկայութեան: Առաջինը՝ Հայաստան մեկնած Հ.Մ.Ը.Մ.Ի պատուիրակութեան ղեկավար,

Գերմանիա գիւղատնտեսութիւն ուսանած, մասնագէտ Կոպեռնիկ Թանտրըճեանի [հետագային ազգային-կուսակցական գործիչ, տես՝ ծանօթագրութիւն թիւ 1- այս եւ նմանօրինակ փակագիծերով տրուած բոլոր բացատրութիւնները կը պատկանին յօդուածագիրին- «Մ.»] «Ողիսական Արմաշի գիւղատնտեսական վարժարանին» գրութիւնը<sup>2</sup>, որ որբանոցին ամփոփ պատմութիւնն է: Թանտրըճեան գրութիւնը Տիթրոյթէն տարեգիրքին յղած է Փետրուար 1964-ին: Ան կը պատմէ (հատուածներ).-

- Սկիզբը «...Որբերը, որոնց տարիքը կը տարուբերէր 14-20-ի միջեւ, 200 հոգի, հաւաքեցինք որբանոցներէն եւ փոխադրեցինք Արմաշ [նշանաւոր Չարխափան Սուրբ Աստուածածիւնի ուխտավայրը]: Մայրենի լեզուն չէին գիտեր հաւասար չափով եւ շատերուն խօսածը թրքերէնի, քրտերէնի, արաբերէնի եւ հայերէնի խառնուրդ մըն էր: Ասկէ զատ, կարգապահութեան մասին ալ գաղափար չունէին: Հինգ-վեց ամիսէն սակայն, դարձան կարգապահ ու հայրենիքի գաղափարը զօրացաւ իրենց մէջ, շնորհիւ [Հ.Մ.Ը.Մ.Ի] սկառուական կրթութեան: Շատ կը սիրէին ֆուլթպոլը եւ անով կապուեցան ինծի: - Փախուստ Արմաշէն. «...Երբ քեմալականները մօտեցան,

## Յարութ Չէքիճեան ՊԵՅՐՈՒԹ

Այս յօդուածաշարքին վեցերորդ մասով ժամանակագրական կարգը պիտի խախտենք՝ նոր նիւթերու յայտնաբերման լոյսին տակ: Պիտի կատարենք ժամանակագրական որոշ ետդարձ, որպէսզի ընդհանուր գաղափար մը փոխանցենք, թէ Հայաստանի Հանրապետութեան կորուստէն ետք ի՞նչ վիճակի մատնուեցաւ երկիրը պուլշեւիկեան տիրապետութեան տակ:

- Վերադառնալով Հ.Մ.Ը.Մ.Ի Արմաշի սկառուներուն, որոնց անդրադարձած էինք մեր յօդուածաշարքին Բ., Գ. եւ Ե. մասերով, անհրաժեշտ է իմանալ մեր սկառուներուն ապրած գաղթականութեան փորձառութեան մասին: Նախ՝ անոնք դաժանօրէն որբացան, ապա զանազան վայրերէ հաւաքուեցան Պոլիս՝ երթալու համար Արմաշ, ապա կրկին Պոլիս՝ երթալու համար Հայաստան, դարձեալ վերադառնալու համար Պոլիս...: Պոլիսէն ետք ոմանք կրկին Հայաստան ներգաղթեցին, սակայն իրենց քաջ իմբապետին նման՝ անոնք Սիպերիա աքսորուեցան...



**Փողոցն հալաքուած բոկոտն որբեր,  
որոնք սկաուտ պիտի դառնան:**



մեր փախուստը իզմիթի ճամբով ծրագրեցինք: Նախ չափահաս որբերէն զատեցինք 20 կտրիճ տղաք եւ իւրաքանչիւրին տուինք մատուցել ատրճանակ մը եւ 500-ական փամփուշտ:

Անոնց հետ պիտի մնայինք ես, Զաւէնը [«Քաջ»՝ Սարունի, սկաուտապետ], Գեղեցիկը, Մարտիկը, ղեղազորձ Սիմոնը [Թիւթէլեան] եւ Մարտիրոսը: Պիտի մնայինք մինչեւ վերջին պահը եւ եթէ հարկադրուէինք, հետիոտն պիտի փախչէինք Սկիւտար: Մանրամասն քարտէսը պատրաստած էինք:

«...Ունէինք ընդարձակ բանջարանոցներ եւ խոզերու ագարակ: Մթերանոցը լեցուցած էինք ամիսներ բաւելիք [մեր բերքէն] պաշարով: Այս բոլորը քեմալականներուն պիտի չձգէինք: Որոշեցինք նախ 180 որբերուն եւ 4 ընտանիքներուն փոխադրուելունը, շուրջ 120 քլմ., իզմիթի ճամբով՝ փոքրերն ու ընտանիքները քանի մը կառքերով:

«Երբ պահը հասաւ, տղաքը շարեցինք սկաուտական կարգով, անուն-անուն կանչելով եւ մնացողները զատելով: Հոն էր, որ ցարդ խղճիս խայթ պատճառող ղէպք մը պատահեցաւ: Մնացողներուն անունները կարդալէս ետք, որք մը պո-

ռաց. «Պարո՛ն, ես ինչո՞վ պակաս եմ այսինչէն եւ այնինչէն, անունները տալով... սկաուտ մըն էր եւ այս արարքը թոյլատրելի չէր, մանաւանդ նման պահուն: Կանչեցի զինքը եւ խստիւ



Հողագործութիւն սորվող Հ.Ս.Ս.ի Արմաշի սկաուտ որբերը եւ ուսուցիչները: Նկարը՝ կողմերը պատռուած, առնուած է Հայաստան մեկնելու նախօրեակին, Պոլսոյ Առնաուտքոյի հայոց վարժարանին բակը, Սեպտեմբեր 1920-ին: Կեդրոնը՝ տիկին Յակոբեան, որուն ձախիմ՝ Հայկ Սէրէն-կիլեան եւ դեղագործ Սիմոն Թիւթէլեան:



Ձախին՝ Գալառի այժմու թիւ 1 դպրոցը: Աջին՝ Կոպեռնիկ Թանտրոճեան (ծախէն երկրորդը), Կեդրոնը՝ Փոլիկոն որբանոցի ամերիկացի տնօրէն եւ սկաուտութիւնը քաջալերող Ռէյ Օկտրն, Ալեքսանդրապոլ, 1920:

յանդիմանեցի եւ ապտակեցի: Լուռ համակերպեցաւ այս տղան, որ հետագային իր գրական տաղանդով հռչակուած Վազգէն [Օննիկ] Շուշանեանն էր:

«Վերջապէս կարաւանը ճամբայ ելաւ դէպի Պոլիս, ուր ողջ-առողջ հասաւ: Մենք մնացինք շուրջ մէկ ամիս, մառանը պարպեցինք ամբողջութեամբ, մաս մը աժան գինով ծախեցինք, իսկ մնացեալը Պոլիս դրկեցինք: Մեր բոլոր ցանքերը թունաւորեցինք, տեղեակ պահելով թաղապետ Ներսէսը, գիւղացիներն ու հովիւները՝ արտերուն շուրջ գետեղելով նշաններ: Մեր գործը վերջացած էր եւ քեմալականներուն հասնելէն մէկ-երկու օր առաջ ճամբայ ելանք եւ հասանք Պոլիս»:

- Հայաստանի մէջ. Թանտրոճեան Հայաստան կը գործողւի՝ Արմաշի որբերուն գիւղատնտեսական դպրոցին հայրենիք փոխադրութեան կարգադրութիւնները կատարելու համար: Պոլիսէն Շաւարշ Միսաքեան յանձնարարական նամակ մը կը գրէ Սիմոն Վրացեանին, որ այդ օրերուն Հայաստանի գիւղատնտեսութեան նախարարն էր: Վրացեան սիրալիցաբար եւ աւելիով ընթացք կու տայ ծրագիրին: Դպրոցը կը բացուի Նոր Պայազիտի մէջ [այժմ՝ Գալառ, Սեւանի արեւմտեան կեդրոնի փոխին շուրջ 7 քմ. դէպի արեւմուտք], որ քաղաքին կեդրոնը քարաշէն մեծ շէնք մըն էր: Դպրոցը կը կոչուի «Նոր Պայազիտի միջնակարգ դպրոց» եւ Թանտրոճեան կը նշանակուի վերատեսուէ [տնօրէն]:

«Տեղական շուրջ 200-250 աշակերտներուն կը միանան [126] որբերը [որոնք Երեւան կը հասնին 13 հոկտեմբեր 1920-ին]: Անոնց հետ եկած էին ուսուցիչներ եւ պաշտօնեաներ՝ Ռաֆայէլ Ապտուլլահ, Հայկ Սէրէնկիւլեան, Սիմոն Թիւթէլեան, Յարութիւն Արըճեան, հսկիչ սկաուտապետ՝ Զաւէն Սարունի [Քաջ Զաւէն], Փարթամ Պասմաճեան, որ դարձաւ գոյքապահ, Զարմայր Մարտիրոսեան մեծ մօրը հետ, որ գալառի մը գիւղատնտես նշանակուեցաւ եւ Թանտրոճեանի կինն ու երկու զաւակները: Միջանկեալ՝ Սիպերիա քարտուած խմբապետ Զաւէն Սարունիի մասին. եղբայրը՝ Գուրգէն Սարունի գրած է<sup>3</sup>. «Ո՞վ պիտի չուզէր ըլլալ եղբօրս Զաւէնին մօտ, որ իր

անվախութեամբ եւ անչափելի ընկերասիրութեամբ ու դառնութիւնները մոռցնել տուող գուարթախօսութիւններով, ամէնէն յուսահատ մարդուն անգամ կեանքը տանելի կը դարձնէր»: Զուարթ ու խանդավառ՝ իրական չ.Մ.Ը.Մ.ի սկաուտ մը:

«...Դպրոցի շէնքին ապակիներուն մեծ մասը կոտրած էին 1920-ի Մայիսեան կռիւներուն ընթացքին: Արհեստաւոր չկար, ո՛չ ալ ապակի ձեւերու աղամանդ. Երեւանէն վանեցի ոսկերիչ մը ձեւիչ ճարեցի եւ փոխան երկու երեսի՝ մէկ ապակիով պատուհանները նորոգեցինք:

«Աղքատութիւն էր ամէն կողմ. դռնէ դուռ մուրալով 20 հազար բնակիչ ունեցող այս քաղաքի հայերէն անկողինի կազմածներ ճարեցինք եւ չոր խոտերով եւ եգիպտացորենի չոր տերեւներով անկողիններ շինեցինք: Լաւ էր, որ տղաքը իրենց հետ առատ ճերմակեղէն բերած էին, եւ Ամերիկեան Նպաստամատոյցէն պահածոյ ուտելիքներ ստանալով, աղքատ՝ բայց երջանիկ էինք, քանի որ հայրենիքին մէջ էինք:

«Մարսափելի է Նոր Պայազիտի ձմեռը: Սեպտեմբերին կը սկսի ձիւնը: Ափսո՛ս, որ շատ կարճատեւ եղաւ (շուրջ 3 ամիս) մեր բնակութիւնը Նոր Պայազիտի մէջ եւ ստիպուեցանք 18 Յունուար 1921-ին այստեղէն ալ փախչիլ [Արմաշի մէջ թուրքերէն, այստեղ՝ պոլշեիկներէն]: Պոլշեիկները քաղաքը Յունուար 6-ին գրաւեցին: Անօթի էինք եւ սկսանք հաց մուրալ գիւղերէն, տեղացի ուսուցիչները մէկիկ-մէկիկ սկսան հեռանալ:

«Տեղական չեկիստը [պոլշեիկ լիազօր «ոստիկան»], որուն «հաւու գող» Հայկ կը կոչէին, խիստ հետապնդումի ենթարկած էր գիս եւ տեղույն պատուական առաջնորդ Եզնիկ վարդապետը, որ նաեւ վարժարանին գրաբարի ուսուցիչն էր: Օր մը, կէս գիշերին, հարսանիքէ մը վերադարձին, ուր ներկայ եղած է նաեւ չեկիստ Հայկը, տունս եկաւ եւ յայտնեց, որ Հայկը երկուքս կ'ամբաստանէ «հակայեղափոխական» [հակապոլշեիկ] գործունէութեամբ: Ես իրեն թելադրեցի այդ գիշեր իսկ էլ միտածին մեկնիլ եւ հոն ապաստանիլ, քանի որ երկուքս կեանքը վտանգի տակ էր: Մտիկ չըրաւ:

«Այդ օրերուն էր, որ քաղաքին [նահանգին] հրամանատարը՝ քաջարի հերոս Համազասպը [Սրուանձտեան] հաւատալով պոլշեւիկ պարագլուխներէն [տրխրահոչակ] Աւիս Նուրիջանեանի [դաւադիր] հրակէրին, մեկնեցաւ Երեւան, ուր բանտարկուեցաւ եւ բանտին մէջ կացինահար սպաննուեցաւ 17 Փետրուար 1921-ին, Փետրուարեան ապստամբութեան նախօրեակին»:

«Ես մեր փախուստը ծրագրած էի արդէն, սակայն դիմումներ ալ կատարած էի Երեւան՝ Կասեանին, որ ոչ միայն Յեղկոմի [պոլշեւիկ յեղափոխական կոմիտէ, բարձրագոյն մարմին՝ կառավարութիւն] նախագահն էր, այլ նաեւ՝ գիւղատնտեսական գործավար: Գրաւոր դիմումներս արժէք չունեցան: Երրորդ դիմումիս ըսի, որ Հայաստան եկած ենք գիւղատնտեսութիւն սորվելու համար, կա՛մ մեզի հաց տուէք եւ կա՛մ ալ թոյլ տուէք, որ Պոլիս վերադառնանք: Թէեւ կրկին խոստացաւ, սակայն ապարդիւն»:

«Կասեանին մօտ ըրած դիմումներս տեղույն Յեղկոմի նախագահ Ենկոյեանը թելադրեց, պատուական մարդ մը, որ «անուշ ջուրի պոլշեւիկ» էր [մեղմ], մեզի հանդէպ համակրանք ունէր եւ կ'ուզէր որ իրիկունները, մութէն ետք տունը երթայի: Վերջապէս իրիկուն մը ըսաւ. «Փախէ՛ք, միայն թէ ճամբայ ելէք կէս գիշերէն ետք»:

«Երկար մտածելու ժամանակ չկար: Սեւանայ լիճին եզերքէն մինչեւ Երեւոյկա [այժմ Սեւան քաղաք], այնտեղէն մինչեւ Դիլիջան լաւ խճուղի էր, ճամբան ինծի ծանօթ էր եւ քարտէսն ալ ունէի: Կազմակերպեցի տղաքը, որոնք գաղտնապահ եւ հակահամայնավար էին: Մառանին մէջ մնացած էր աղուճա [ընտիր աղ], Կաղզուանի հանքերէն: Միջանկեալ՝ Կողբն էր Հայաստանի մեծագոյն եւ լաւագոյն աղի հանքը, որ թուրքերուն ձեռքը անցաւ 1920-ի հայ եւ թուրք կռիւներուն ընթացքին: Այնտեղ էր, որ նահատակուեցաւ Սասունցի Մանուկը (Փեթարա), 1920-ի Սեպտեմբերի սկիզբը [10-ին]: Երեւանի մէջ կատարուեցաւ ազգային թաղում: Դազաղին առջեւէն առանձին կը քայլէր Ռուբէնը [Տէր Մինասեան, ռազմական նախարար], հնոտի հագուստներով եւ տաբատին մաշած ծայրերէն թեւեր կախուած»:

- Փախուստ պոլշեւիկներէն. «Ուրեմն, [չուրջ 400 քմ.] քաղաքով պիտի փախչէինք դէպի Վրաստան՝ Պաթում եւ այնտեղէն նաևով՝ Պոլիս: Յանդուրթի՞ւն թէ յիմարութիւն, չեմ գիտեր, սակայն անօթի մարդը երկուքն ալ կրնայ ընել, մանաւանդ մեր պարագային, տղոց բազմութիւնը մեզի ոյժ կու տար»:

«Կէս գիշերին հաւաքուեցանք քաղաքին ծայրը: Մալական [ուռն աղանդ] կառապաններուն դրամի տեղ աղ տուինք եւ կիներն ու փոքրերը տեղաւորեցինք չորս ձիակառքերուն մէջ ու ճամբայ ելանք»:

«Մեր փախուստին մասին տեղացի ուսուցիչներէն միայն



Գաւառը՝ Նոր Պայագիտը այժմ:

երկուքին լուր տուած էինք, մէկը ռուսական դաստիարակութեամբ ուսողութեան ուսուցիչ, ազնուական եւ չէզոք Պուտաքճեանն էր, միւսը՝ դպրոցին քարտուղար Հայրապետը, Ժողովրդականի անդամ ազնիւ պաշտօնեայ մը: Այս վերջինը ինձմէ ուզեց դպրոցին մեծ, մետաքսեայ դրօշը [Եռագոյն], գոր տղաքը Պոլիսէն բերած էին եւ ըսաւ. «Ես կը պարզեմ այս դրօշը այն օրը, երբ մերինները նորէն կու գան եւ քու տեղդ դրօշին հովանիին տակ ե՛ս ճառ կը խօսիմ»: Սակայն ափսո՛ս, իմացանք, որ պոլշեւիկները Եզնիկ վարդապետն ու Հայրապետը Սեւանի սառած ջուրին մէջ խեղդամահ ըրած են»:

«Սառած մատներով եւ ուռած ականջներով հասանք Օրտաքըլու հայկական գիւղը: Գիւղացիները սրտաբաց ընդունեցին մեզ, իսկ գիւղին կոմիսարը քննեց՝ կազդուրուեցանք, հակառակ որ շատ աղտոտ էր գիւղը: Առտուն հասանք Երեւոյկա, ապա սքանչելի բնութեամբ Դիլիջան: Դիլիջանի մէջ բոլորս ձերբակալեցին եւ երկու ամիս մնացինք Չեկայի բանտը: Բախտը եւ մեր ճարպիկութիւնը օգնեցին, որ կարենանք փախչիլ եւ Ղարաքիլիսէի [Ստեփանաւան] ճամբով ի վերջոյ հասնիլ Պաթում»:

«Պաթումի մէջ վերագտանք Հայկ Սէրէնիկիւեանը եւ Սիմոն Թիւթէլեանը, որոնք Երեւան զրկած էի օգնութեան դիմելու Կասեանին: Երեւան հասնելով, անոնք կը զգան վտանգը եւ իսկոյն Ղարաքիլիսէ կը վերադառնան՝ Թիֆլիս երթալու համար: Հայկը կը յաջողի, իսկ Սիմոնը կը մնայ Ղարաքիլիսէի սահմանը, ուր կը հանդիպի իրեն ծանօթ համազիւղացի չէկիստի մը, որուն կ'ըսէ. «Սիրելի՛ս, ռուսահայերուն պոլշեւիկ ըլլալը կը հասկնամ, բայց իբրեւ հիւսէյնիկցի քու կարմրիւղ ինչպէ՞ս բացատրեմ»: Չէկիստը կը մատնէ գինք, ու ձեւական դատէ մը ետք մահուան կը դատապարտուի: Մահապատիժ գործադրելիք երկու զինուորները, սակայն, Սանահին կը տանին եւ վրացական սահմանին մօտ ազատ կ'արձակեն»:

«Պաթումի մէջ Ամերիկեան Նպաստամատուցի տնօրէն Քեփթըն [էրնէսթ] Շարօ [եւ Գ. Ֆ. Կրէյնթ] ամերիկեան շոգենաւի մը մէջ կը տեղաւորէ զանոնք, նաեւ 8-10 փախստական կամաւոր մարտիկներ, որոնք բոլորը հանգիստ կերպով Պոլիս կը հասնին»:

- Համազասպը եւ Հ.Մ.Ը.Մ-ի սկառուները. «Վերջին օրերը



**Հայկ Սերենկիւլեան, սկաուտապետ Զաւեն (Քաջ) Սարունի եւ Վազգէն Շուշանեան:**

Նոր Պայագիտի մէջ» խորագիրով, Լոնտոնէն Հ.Մ.Ը.Մ.ի Արմաշի սկաուտ որբերէն Յովհաննէս Կ. Չալքեան կը գրէ (հատուածներ)՝- «...Արմաշի որբերս Նոր Պայագիտ փոխադրուած ըլլալով, հոն պիտի շարունակէինք մեր կիսատ մնացած ուսումը: ...Սկիզբի օրերուն, 1920-ի աշնան, երբ դասաւանդութիւնը տակաւին կանոնաւորուած չէր, մեր ազատ ժամերուն ընկեր-ընկերուհիներուն հետ տաքուկ դասարաններուն մէջ յուշեր կը պատմէինք:

- Ի՞նչ այսպէս պարապ նստեր էք, օր մը ըսաւ ներքին տեսուչ՝ Հայկ Սերենկիւլեանը, գացէք տղաքս, խոհանոց եւ գետնախնձոր մաքրեցէք:

«Հրամանէն դժգոհ էինք, սակայն պիտի օգտուէինք խոհանոցի սամովարին [Թէյնիկ] պատուական թէյէն: Շուրջ 10 ընկերներ, խոհարարին տուած փոքր դանակները մեր ձեռքը, գետնախնձորի պարկին շուրջը ծալապատիկ նստած՝ սկսանք գործի: Հազիւ սկսած էինք, հաստ մուշտակով եւ գլխուն փափախ դրած յաղթանդամ մէկը ներս մտաւ, եւ՝

- Մըսում եմ, ըսաւ, ինձ մի բաժակ թէյ տուէք... Ու սկսաւ թօթուել բարձրավիզ մոյկերուն ձիւնը:

Քանի որ եկողը մեզի անձանօթ էր, չկատարեցինք իր հրամանը, խոհարարն ալ քիչ մը անդին իր կաթսայով զբաղած էր:

- Է՛յ, ձեզ եմ ասում, կրկնեց, այս անգամ աւելի շեշտելով բառերը,- Ի՞նչ է, չէ՞ք լսում, մի բաժակ թէյ եմ խնդրում ձեզանից: Եթէ չտաք, ես ալ այսուհետեւ վառելիք փայտ չեմ տար...  
- Էդ դո՞ւ ես, Համազասպ ջան, յանկարծ կանչեց խոհարարը, ես քու հոգուն դուրպան [մատաղ], ոչ թէ մէկ, այլ տասը բաժակ լեցնեմ քեզ համար... Ներողութիւն կը խնդրեմ, ձեռքս գործ կար, քեզ չտեսայ...  
- Էլ ինչո՞ւ ես փչում նորից, պատասխանեց ժպտելով, գիտես չէ՞ որ կատակ կ'ընեմ...  
«Մինչ այդ, մենք, լսելով Համազասպ անունը, ուղղակի շքամած էինք: Ամօթէն, մեր գլուխները վար ծռած, պապանձեցանք: Սակայն յանկարծ սկսանք երգել:-  
Խնուսից գալով հայ զինուորները քաջ,

Արեան դաշտից եկած եւ պարտաճանաչ, Հին հին վրէժներ առնել էր նոցա պահանջ, Քաջի պէս վազեցին թշնամու առաջ:

Սօս թուով տասն ու չորս եւ իրենք անվախ, Ղեկավար Տիգրանն էր, գործում էր անկախ, Անմահ Սուշեղ հերոս, Շապուհ եւ Մելիք, Համազասպ, Մարտիրոս կանգնած էին դիրք:

- Շնորհակալ եմ, ըսաւ Համազասպը յուզուած: Քանի որ երգել կ'ուզէք, ուրեմն իմ շատ սիրած երգն ալ երգեցէք:

- Ո՞ր երգը, պարո՞ն Համազասպ, ուրախացած հարցուցինք:

- Է՛ն, մեր Անդրանիկի երգը, որ երգում էիք անցած օր տղանցքի ատեն:

Մենք, աւելի խանդավառ եւ աւելի բարձր ձայնով սկսանք երգել:

Հերոս մռնչեց, Սուլթան դողողաց, Վիլիելմի աչքից արտասուք ցողաց, Սուրդ թշնամու կրծքին շողշողաց, Հայոց Ղեկավար, հերոս Անդրանիկ:

Մեր երգեցողութեան ամբողջ ընթացքին, Համազասպ, կունակը տակաւին տուած եւ հայեացքը կէտի մը կեղրոնացած, ձեռքը բռնած թէյի բաժակը՝ առանց շրթունքին տանելու, կարծես արձանացած էր:

- Վարպէ՛տ, կանչեց մէկէն սթափելով. էս կէսօրուան ի՞նչ ես եփում մեր տղոց համար:

- Մտով գետնախնձոր, պատասխանեց:

- Ի՞նչ, այսօր Իշխան չե՞ս եփում:

- Իշխանը երէկ կէսօրուան ճաշին էր. ախր, ես ի՛նչ գիտնամ, ինչ որ բերեն այդ կ'եփեմ:

- Տղերք ջան, ըսաւ Համազասպը, խօսքը մեզի ուղղելով. սիրո՞ւմ էք Իշխան ձուկը: Իշխանն ու Գեղարքունին աշխարհի ոչ մէկ ջրի մէջ կը գտնուին, բացի մեր գեղեցիկ Սեւանէն:

«Երբ Համազասպ մեզմէ հրաժեշտ կ'առնէր, թնդացուցինք այս անգամ իրեն ձօնուած երգը:-



Սասունցի Սանուկ, Ռուբէն Տէր Մինասեան եւ Սիմոն Վրացեան:

Ծագեց արեւ ազատութեան,  
Փախէք ամպեր երկնքից,  
Համազասպը իր խմբովը  
Կու գայ խաչէն գաւառից:

...Հայերիս տէր Դաշնակցութիւն,  
Քաջեր ունի սրտալի,  
Ամբողջ աշխարհ հռչակուեցաւ  
Համազասպը պանծալի ...

«Դեկտեմբեր մէկ [1920]... անկախ Հանրապետութեան վերջին օրը...

«Մեր դասերը բոլորովին դադարեցան: Շուկաներուն մէջ եւ փողոցները խուճապ-խուճապ մարդիկ հաւաքուած կ'արտասուէին: Նոր Պայագիտ քաղաքը սուգի մէջ էր: Եկեղեցիին մօտ, տեսանք Եզնիկ վարդապետը, որ կը յորդորէր Համազասպին հեռանալ:

- Ինչպէ՞ս թէ հեռանամ... Իսկ դո՞ւք հայր սուրբ, հարցուց Համազասպ:

- Դու մեզ մի նայիր, որդի՛, այս երեկոյ դու անպայման կը հեռանաս:

- Ո՛չ, ո՛չ, ես ժողովուրդս չեմ լքեր:

- Ծիչդ ժողովուրդիդ սիրոյն պէտք է հեռանաս... հայ ժողովուրդը քեզի դեռ շատ պէտք ունի:

- Չէ՞ որ անոնք [պոլլեւիկները] մեր կառավարութեան հետ համաձայնած են եւ պատուի խօսք տուած, որ իշխանութիւնը իրենց յանձնուելէ ետք, ոչ մէկ հայու քիթը պիտի արիւնի:

- Ի՞նչ պատուի մասին կը խօսիս, որդի՛, երեխա՞յ ես... եթէ անոնք պատուի գզացում ունենային, թուրք բանակը չէին առաջնորդեր իրենց հարազատ երկիրը: «Ափսո՛ս, որ Եզնիկ վարդապետ չկրցաւ համոզել Համազասպը, որ օրեր ետք, քաղաքի հերոսը ծուղակը ինկաւ եւ բանտին մէջ սպաննուեցաւ»: Ժամանակ մը ետք Եզնիկ վարդապետն ալ սպաննուեցաւ:

- Սիմոն Վրացեան սկստուեցանք մասին կը գրէ հետեւեալը<sup>5</sup>. «Չմոռնամ այստեղ արձանագրել Արմաշի աշակերտ-

ներուն գալը Հայաստան, գիւղատնտես ուսուցիչ Կոպեռնիկ Թանտրըճեանի գլխաւորութեամբ: Պոլսոյ Ազգային մարմինները Հայաստան ուղարկած էին Արմաշի որբանոցին աշակերտութիւնը: Թանտրըճեանը ներկայացաւ մօտս, գիւղատնտեսութեան նախարարութեան շէնք, յայտնելով, որ կը փափաքին գիւղատնտեսութեան դպրոց դնել տղաքը: Իմ ալ փափաքս այդ էր. հիմնել օրինակելի գիւղատնտեսական վարժարան: Արմաշի տղաքը Նոր Պայագիտի չըջանը ուղարկեցի, տրամադրելով յարմար շէնք եւ ընդարձակ հողամաս, ապահովեցի անոնց նիւթականը:

«Շուտով, սակայն, տղոց գլխուն փոթորիկը պայթեցաւ՝ Հայաստանը խորհրդայնացաւ: Նորեկ Յեղկոմը վայրագութեանց դիմեց: Հալածանքը խիստ էր, մանաւանդ արեւմտահայերուն դէմ: Թանտրըճեանը հագիւ կրցաւ ճողոպրիլ եւ տղոց մէկ մասին հետ վերադառնալ արտասահման [Այստեղ թիւրիմացութեան մէջ է Վրացեանը, քանի որ թէ՛ Թանտրըճեանը եւ թէ՛ «Հայ Սկստու»-ը կը վկայեն, որ բոլոր տղաքը վերադարձան, սակայն հաւանաբար ուսուցիչներէն ոմանք մնացին]:

«Նոյն եւ աւելի վատ վիճակի արժանացան [Հ.Մ.Ը.Մ.ի] սկստուապետ Վահան Չերագն ու ընկերները: Երեւանի մէջ բազմահազար սկստուներուն երեւիլը, անոնց տիպար կազմակերպութիւնն ու կարգապահութիւնը, անոնց փայլուն շքերթները, մարզահանդէսները եւ այլն, մեծ տպաւորութիւն գործեցին հասարակութեան վրայ: Կարելի է ըսել, որ անոնք հիմը դրին նորանկախ Հայաստանի մարզական շարժումին: Կառավարութիւնը սիրով եւ մեծ հոգածութեամբ ընդունեց զանոնք եւ տեղաւորեց Ալեքսանդրապոլի Փոլիկոն զինուորական թաղամասին մէջ»:

Դաւիթ Բէկեան արիներ. Առաջին անգամ ըլլալով կ'իմանանք Ձանդեզուրի մէջ կազմուած գայլիկ սկստուներու մասին, որոնք Սիւնիքի պատմական հերոս՝ սպարապետ Դաւիթ Բէկի (1669-1728) անունը կը կրեն: Այս պատանիները յար եւ նման են Դ. մասին մէջ նկարներով ներկայացուած Վանի փոքրիկ զինուորներուն:



**Ձախին՝ սկաուտները տողանցքե՛ մը կը վերադառնան, շեփորախու՛մը՝ առջելը ձախին, Ալեքսանդրապոլ: Աջին՝ սկաուտները անասուններուն համար ծմբան պաշար՝ խոտ եւ յարդ կ'ապահովեն:**

- Մայիս, 1921. գայլիկ սկաուտներ Ջանգեղուրի մէջ: Փետրուարեան ապստամբութենէն ծնած «Հայրենիքի Փրկութեան Կոմիտէ»ի նախագահ Սիմոն Վրացեան Մայիս 1921-ին Պարսկաստանէն ձեռնունայն վերադարձին, ուր գացած էր դիմելու Եւրոպայի, յատկապէս Անգլիոյ օժանդակութեան, կը գրէ՞. «Գորիսի մուտքին, այգիներու մէջ, անակնկալ մը կը սպասէր: Սպարապետին կարգադրութեամբ [Գարեգին Նրժդեհ] մեզի ողջունելու եկած էին մէկ ջոկատ զինուորներ եւ Դաւիթ Բէկեան գայլիկ պատանիները: Զոկատը զինուորական պատիւ կու տայ՝ չխկացնելով հրացանները: «Պատուի՛ ա՛ն... կը կանչէ գայլիկներուն հրամանատարը, 10-12 տարեկան աչքաբաց պատանի մը՝ հպարտ իր համազգեստով եւ իրեն վիճակուած բացառիկ դերով: «Պատուի՛ ա՛ն... գայլիկները կը բարեւեն՝ չխկացնելով իրենց փայտէ հրացանները: Ամէնքը միաձեւ հագուած են, կարմրաթուշ եւ լուրջ դէմքերով, խմբապետին մէջքին կարմիր գօտի՝ սպարապետին նման ողութեամբ:

«Պարտաւոր եմ ճառ խօսիլ [դիմաւորողներուն]: Ապա, ջոկատին եւ գայլիկներուն, նաեւ հաւաքուած բազմութեան ուղեկցութեամբ, կեցցէներով ու ծափերով կը մտնենք Գորիս, որ այժմ դարձած է Լեռնահայաստանի մայրաքաղաքը: Քանի մը օր ետք, 28 Մայիս 1921-ին, Հայաստանի հողին վրայ անկախութեան մեր վերջին տօնակատարութեան ներկայ գտնուեցանք...»:

- Անհրաժեշտ է իմանալ պոլշեւիկներուն իշխանութեան առաջին շրջանին Հայաստանի ժողովուրդին վիճակին նաեւ որբանոցներուն հանդէպ անոնց դաժանութիւններուն մասին, ինչպէս նաեւ գաղափար մը կազմել, թէ Վահան Չերազ, որ մասնակցած էր պոլշեւիկներու դէմ Փետրուարեան ապստամբութեան, ի՛նչ պայմաններու մէջ ստանձնեց որբանոցի պահակապետի պաշտօնը:

Վերադառնալով որբանոցներու ամերիկացի պատասխանատուներու պարենաւորման դժուարութիւններուն, Նիրիսի Ռիլիֆի՝ Նիի-ի 4 Յունիս 1921-ի թիւին մէջ՝ հետեւեալ

հեռագիրները հիմք ծառայած են նախորդ՝ Ե. մասին մէջ ներկայացուած սնունդի փոխադրութեան արկածախնդրութեան:

«20 Ապրիլ 1921-ին Միլթըն Պրատուն Ալեքսանդրապոլէն թիֆլիս կը ղրկէ հետեւեալ հեռագիրը. «Ղարաքիլիսէն Երեւան ուղղուող Պարթընէն [H.B. Barton] լուր մը կա՞յ: Ղարաքիլիսէի եւ Ալեքսանդրապոլի միջեւ հեռագրակապը կտրուած է: Ուտեստեղէնի մեծ կարիք ունինք: Ամէնէն անհրաժեշտն են՝ ալիւր, ձէթ, իւղ, կաթ, լուբիա, շաքար եւ բրինձ: Բոլոր ուտեստները բաժնուած են: Կրնանք 3-4 օր դիմանալ: Եթէ 3 օրէն պարէն չստանանք՝ բացարձակ անօթութիւն պիտի տիրէ: Ինչո՞ւ տեղեկութիւն չէք տար»:

«Ծանօթ-Պարթընը Երեւան գացած եւ Ղարաքիլիսէ վերադարձին թոքափառատապով (pleurisy) հիւանդացած եւ ջղաքին անկում ունեցած է: Կարողութիւնը չէ ունեցած հաղորդակցելու: Ռէյ Օկտըն Ղարաքիլիսէն երկու բեռնակառք պաշար պատրաստ է ղրկելու, իսկ Կրէնթը ճիգ չի ինայեր եզնալու՝ կառքերով կամ երկաթուղիով ուղարկելու ունեցած պարէնը:

«21 Ապրիլ 1921-ին Եարօ թիֆլիսէն Ղարաքիլիսէ կը ղրկէ հետեւեալ հեռագիրը. «Ալեքսանդրապոլէն, Պրատունէն հեռագիր ստացայ (տես՝ աւելի վարը), որ 18 հազար որբերուն ուտելիքը բոլորովին սպառած է: Անմիջապէս պարէն ղրկէ եզասայլերով կամ երկաթուղիով: Երկու յաւելեալ սայլեր թիֆլիսէն երկաթուղիով ճամբայ ելան: Նպաստի նաւը Պաթում հասաւ:

«Ծանօթ- Բոլոր քաղաքական եւ զինուորական գրասենյեակները [պոլշեւիկ դարձած Վրաստանի] այցելեցի եւ շուրջ 12 հեռագիր ալ ղրկեցի, որպէսզի պարէնին տեղաշարժը ապահովեմ:

«26 Ապրիլ 1921-ին Կրէնթ հետեւեալ հեռագիրը կը ղրկէ թիֆլիս [Կեղրոն]: «24 Ապրիլին Ալեքսանդրապոլ հասաւ պարէնը, որ միայն քանի մը օր կը բաւէ: Աղիքներու բորբոքումի պատճառով Կազաչի փոստի փոքրերուն մահացութեան թիւը շատ բարձրացաւ: Բժիշկի մը անհրաժեշտութիւնը ունինք:



**Ձախին՝ Ջորավար Համագասպ: Աջին՝ Համագասպի կամաւորական Գ. գունդին հեծեալ եւ հետեւակ ուժերու զօրահանդէսը Էջմիածին, հարաւային դարպաս, 1914-ին:**

Նաեւ անհրաժեշտ է մէկ ամսուան պարէն ղրկել բոլոր կեդրոններուն՝ ալիւր, իւղ, լուբիա եւ մագուլթ՝ վառելանիւթ: [Պոլշեւիկներու հալածանքէն] Երեւանէն Ջանգեղուր փախչած գաղթականներուն վիճակը ամէնէն դժուարն է: Պարթընը տկար է, սակայն վտանգը անցուց:

«Մանօթ- Ֆելփը (Phelp) այս երեկոյ Պաթումէն հասաւ երկաթուղիի 30 սալ պարէնով, զոր Չարլզ Ուայթ բերաւ Կոստանդնուպոլիսէն: Վաղը այս գնացքին հետ կեդրոնները պիտի մեկնինք՝ պարէնը բաշխելու համար: Ապահովեցի 18 թոն մագուլթ, որ նաեւ պիտի բաշխենք:

«Վերջին 6 ամիսներուն [պոլշեւիկներու լուծին տակ] շատ լուրջ դժուարութիւններ ունեցանք: Երբեմն նոյնիսկ անյոյս, սակայն ՆիՌ-ի անձնակազմին խոր հաւատքն ու նուիրումը, որ հազարաւոր անտէր որբերուն կեանքը իրենցմէ կախեալ էր՝ մեր կամքը զօրացուց: Մեր փոքրիկները շատ տառապեցան յարմար սնունդի պակասէն»:

- ՆիՌ-ի 11 Յունիս 1921-ի թիւը գրեթէ յատկացուած է Հա-

յաստանի որբերուն, ուրեմն նաեւ՝ մեր սկառտներուն: Գաղափար ունենալու համար Արեքսանդրապոլի որբախնամի կարիքներուն մասին՝ ստորեւ ընդհանուր վարիչ Միլթըն Պրատունի 8 Ապրիլ 1921-ի պարենաւորման տեղեկագիրէն հատուած մը<sup>8</sup>, որ ցոյց կու տայ պոլշեւիկներուն թալանէն ու արգելքներէն ետք պարենաւորման վիճակը, երբ Փետրուարեան ապստամբութեան յաջորդող ժամանակամիջոցին անոնք ըսկասան վերակազմակերպուիլ-:

«Ալիւր- Մեծաքանակ ալիւրի պէտք ունինք: Ամիսը 2300 պարկ կը գործածենք եւ 10 օրուան պաշար մնացած է: Այժմ օրաբաժինը այնքան փոքր է, որ որբերն ու պաշտօնէութիւնը սնունդի պակաս ունին:

Ճարպ- Ամիսը շուրջ 40 տակառ կը սպառենք: 6 տակառը որ մնացած է, իբրեւ քոսի՝ քեռուրտուքի դարման կը գործածուի, խոհանոցը ճարպ չմնաց: Առանց ճարպի, առանց միսի, առանց կաթի եւ քիչ ալիւրով, հրաշք պէտք է ըլլայ, որ երեխաները առողջ մնան:

Կաթ- Ամիսը 1875 սնտուկ [թանձրացած, տուփով կաթ] կը գործածենք, այժմ բնաւ չունինք: Փոշի կաթը, որ մնացած է, իբրեւ աղետապի՝ աղիքներու բորբոքումի դարման՝ մածուն շինելու վերապահած ենք: Իսկ անհրաժեշտ է աւելի փոքրերուն համար, որոնց մէջ մահացութեան թիւը շատ բարձրացաւ: Նոյնիսկ փոքր քանակ մը մահերուն թիւը կը նուազեցնէ:

Լուբիա- Ամիսը Շուրջ 49 հազար քիլօ կը սպառենք:

Շաքար- Ամիսը շուրջ 16 հազար քիլօ: Չնչին քանակ մնացած է:

Բրինձ- Ամիսը շուրջ 28 հազար քիլօ կը սպառենք: Շատ անհրաժեշտ է մեր հիւանդանոցներուն համար, նաեւ՝ աղետապէն դարմանումի:

Միս- 1921 Յունուար 1-էն ի վեր բնաւ թարմ միս չունեցանք: Կրնա՞ք երկու ամիս բաւելիք տաւարի պահածոյ միս ղրկել մեր 18,000 պատիկներուն եւ պաշտօնէութեան համար:

Բանջարեղէն- Խիստ կարիքը ունինք: Բացի Ղարաքիլիսէի մեր կեդրոնէն խոստացուած շուրջ 33 հազար քիլօ գետնախըն-



**Ձիւնի վրայ փրկարարութեան վարժութիւններ:**



**Ձախին՝ Վահան Չերազի նշած որբանոցի նուագախումբին մէկ փորձը: Աջին՝ Սեւաչեայ որբուկը, նապաստակը եւ հիւանդապահութիւն ուսանող պարմանուհին:**

ձորէն՝ ոչինչ կը գտնուի: Այդ գեանախնձորէն մաս մըն ալ կըրնայ սառած ըլլալ եւ աւրուած:

Ասեղ-Շուրջ 30 ասեղ մնացած է, ներառեալ՝ Կարսէն եկածը: Շատ մը կարի մեքենաներ անգործածելի դարձան: Նաեւ ձեռքով կարելու ասեղներ ալ անհրաժեշտ են:

Կաշի-Շատ անհրաժեշտ է յաջորդ ձմեռուան կօշիկները շինելու համար: Երկրին մէջ արջառ չմնաց [պոլշեւիկներուն կողմէ Ագրպէյճան դրկուեցան]:

Ներկ-Շատ անհրաժեշտ է Կազաչի փոստի եւ Փոլիկոնի թիթեղեայ ժանգոտած տանիքներուն համար: Եթէ չնեղրւին՝ շուտով աննորոգելի պիտի դառնան:

Ապակի- 38x46 սմ. պատուհաններուն համար:

«Մանօթ. 20 Ապրիլ 2021-ին սաստիկ պայթում տեղի ունեցաւ Քրեպիտի մէջ [Crebis բոյս մըն է՝ կարելի չեղաւ գտնել Փոլիկոնի մօտակայ նոյնանուն վայրը]: Հսկայական Փոլիկոնի գրեթէ բոլոր ապակիները փճացան, նոյնիսկ աւելի հեռու՝ Կազաչի փոստի ապակիներէն մաս մըն:

- ՆԻՌ 11 Յունիս 1921. «Սակարանի գիները 8 Ապրիլ 1921-ին. 1 թրքական լիրան = 125,000 հայկական ուրբլի, = 5000 կովկասեան ուրբլի, = 70 սէնթ, \$ 0.7 ամերիկեան տոլար, ուրեմն մէկ տոլարը կ'արժէր 178,750 հայկական ուրբլի»:

«Փողոցէն հաւաքուած որբեր» խորագիրով կը գրէ. «Այժմ 800 որբեր կը գտնուին Ալեքսանդրապոլի բարեսիրտ մարդոց տունները. անոնց վիճակը աւելի լաւ չէ: Կարճ միջոցին որբերուն թիւը կրնայ 1500-ի հասնիլ: Այս փոքրերը գիշերները փողոցներէն կը հաւաքուին՝ իրենք ալ կարիքաւոր ընտանիքներու քով: Եթէ կարելի է, զանոնք մեր որբանոցները պէտք է տանինք: Անցեալ շաբաթ երկու յանձնախումբեր մեզի դիմեցին, որ 15 օր Ալեքսանդրապոլի բնակչութեան օժանդակենք: Ստիպուած էինք մերթել, քանի որ մեր 18,000 որբերուն համար երեք շաբթուան պարէն մնացած էր:

«Մշակման համար օգտագործելի հողեր» խորագիրով կը գրէ. «Այժմ հողեր մշակելու համար չենք կրնար հաստատ արտօնութիւն ստանալ [պոլշեւիկներէն]: Սակայն ենթադրելով

կարելիութիւնը, պիտի ցանենք, իսկ բերքը մեզի պիտի մնա՞յ թէ ոչ՝ չենք գիտեր: Ծրագրած ենք Կազաչի փոստին մէջ 10 հեկտար ցանել, եթէ հունտ ունենանք: Հողը ցանելի չէ, սակայն մէկ շաբաթէն պատրաստ կ'ըլլայ:

«Բոլոր հունտերը կերած են» խորագիրով կը գրէ. «Տեղական շուկայէն յարմար քանակով հունտ չի գտնուիր, իսկ եղածն ալ վատորակ է: Բոլոր հունտերը որոնք ուտելի են՝ սպառած են:

«Բժշկական տեղեկագիր բժ. Ռասըլ Պ. Մէյնի կողմէ» խորագիրով կը գրէ. «Այժմ աղետալը (enteritis) մեծ թիւով մահեր կը պատճառէ: Գլխաւոր պատճառը սնունդի պակասն է, որ հասցուցած է կէս սովամահ վիճակի, առաւել՝ պաղ ու խոնավ միջավայրը: Նաեւ տիֆի (typhus) թեթեւ համաճարակ ըսկած է եւ ծաղկախտի (smallpox) պարագաներ ալ կան: Բոլոր բնակիչները՝ մեծեր եւ պզտիկներ Փոստի որբանոցներուն մէջ, Ալեքսանդրապոլը:

«Ապրիլ 13-ին «Քէքուէն» նաւը Կոստանդնուպոլիսէն ճամբայ ելաւ 350 թոն ալիւր, բրինձ, լուբիա եւ կաթով բեռնաւորուած, այս առաջին փորձն էր, քանի որ դէպի Պաթում նաւերով փոխադրութիւնը կասեցուած էր [պոլշեւիկներուն կողմէ]: Այս յաջողութենէն ետք, 3 նաւեր 2005 թոն յաւելեալ ապրանք կը փոխադրեն Ամերիկեան Նապաստամատոյցին»:

- ՆԻՌ 2-9 Յունիս 1921. Ղարաքիլիսէ [այժմ Վանաձոր] կեդրոնի կացութիւնը՝ շրջանի վարիչ Կրէնթի տեղեկագիրէն հատուածներ<sup>10</sup>. «800-է աւելի որբեր ունինք ձեւալ Օղլիի [այժմ Ստեփանաւան] մէջ առանց ուտելիքի: Անոնք լրիւ խոտակերութեամբ կը սնանին: Ռուս գինուորները իրենց օրական մէկ ժումը անոնց կը նուիրաբերեն, սակայն իրենք ալ շուտով պիտի մեկնին:

«Լաւ վիճակի մէջ սքանչելի զօրանոցներ կան, 3-5000 որբերու յարմար, եւ չնչքերէն ոմանք լաւ կահաւորուած են: Այս վայրը Ղարաքիլիսէէն շուրջ 37 քմ. հեռու է եւ միացած է լաւ ճամբայով: Ժողովուրդէն օժանդակութեան շատ մը խնդրանքներ ստացանք:





**Ձախին՝ առօրեայ բժշկական քննութիւններ: Աջին՝ դուրսը՝ նորեկներուն եւ քաղաքէն եկած փոքրերուն բժշկական քննութիւն:**

«Ղարաքիլիսէէն շուրջ 10 քլմ. հեռու՝ Խաճի Քարայի մէջի փոքր համայնքը օժանդակութեան կը կարօտի: Մարտին [1921], այնտեղ շատ բարեմասն տեղի ունեցան: Մեզի դիմեցին, որ շուրջ 150 փոքրեր սովամահ ըլլալու վտանգին ենթակայ են: Գացի եւ աչքովս տեսայ:

«Այժմ Ղարաքիլիսէի փողոցներէն 550 երեխաներ հաւաքեցինք, իւրաքանչիւրը 1-էն 5 հիւանդութիւններով վարակած: Վերջերս հասած մէկ վակոն այլուրը մեզի միայն երկու ամիս կը բաւէ: Յարմար հագուստեղէնի մեծ պահանջ կայ, նաեւ՝ առողջապահական եւ բժշկական խնամքի:

«Իրիջանէն թէ՛ որբերուն եւ թէ՛ ալ գաղթականներուն համար օժանդակութիւն կը խնդրեն: Այս քաղաքը եւ շրջանը շատ տառապանքներ կրեցին: Մեծ թիւով զօրքեր [պոլշեիկ] հաստատուած էին այստեղ, այժմ գացած, իրենց ետին միայն վիշտ եւ սովամահութիւն ձգած են: 2800 որբեր կան այստեղ: Եթէ անոնք պիտի ապրին՝ ուտելիքի մեծ կարիք կայ»:

«Վարդանի» խորագիրով կը գրէ. «Վերջերս դիմում ստացանք թիւով 150 որբերէ եւ այրիներէ, Վան նահանգի Սասունի շրջանէն եկած. անոնց այր մարդիկը սպաննուած են, անոնք Ղարաքիլիսէէն շուրջ 5 քլմ. հեռու կը գտնուին եւ օգնութեան կը կարօտին: Այս է վիճակը շրջանին մեծ ու փոքր համայնքներուն: Մահացութիւնը շատ բարձր է, սնունդ, դեղեր եւ այլն անհրաժեշտ է: Այս ընթացքով ժողովուրդին կէսը շուտով պիտի ոչնչանայ:

«Անհրաժեշտ է միտի եւ իւղերու պաշար ունենալ: Ուստի կ'առաջարկուի կաթնեղէնի մեծ ագարակ մը սկսել գուրեցերիական կովերով՝ որ կարենայ օրական շուրջ 4500 քիլօ կաթ եւ կարագ հայթայթել: Կը շինենք նապաստակի փարախ մը, որ կարենայ 500-800 հազար նապաստակ պահել: Ոչխարներ ալ պիտի ապահովենք:

- ՆՈՒ 16 Յուլիս 1921. Օրդ. Ֆէնի Սթրոկերի (Fanny Strowger) նամակէն հատուածներ<sup>11</sup>. «Կազաչի փոստէն կը գրեմ: Մեղուներու նման կ'աշխատինք: Մեր կայանը ընդարձակ դաշտավայրի մը վրայ կը գտնուի, հանգստաւէտ եւ մա-

քուր է օդը մեր 20 հազար երեխաներուն համար:

«Ես 19 շէնքերու, երեխաներով լեցուն որբանոցին տեսուչն եմ: Երեխաները Նոյեմբերէն ի վեր իւղ չեն կերած, որուն պատճառով արեւէն անոնց մորթը կը ճաթոտի, ուստի օրուան մէկ մասը շէնքերէն ներս պէտք է անցնեն:

- ՆՈՒ 30 Յուլիս 1921. ՆՈՒ-ի Կովկասի ընդհանուր տնօրէն Էռնէսթ Եարոյի հեռագիրէն հատուած մը<sup>12</sup>. «Կովկասի ամէնէն փոքր մեր կայանին՝ Ղարաքիլիսէի մէջ 5000-է աւելի անտուն եւ անօթի երեխաներ կան: Նաեւ նպաստի պահանջներ՝ այլ շրջաններու մէջ: Գրեթէ անկարելի է ցորեն ցանել, քանի որ հունտերը կերած են, ուստի բաւարար բերք պիտի չունենանք յաջորդ եղանակին: Պարտադիր է ճիգ չխնայել Կովկասի յատկացուելիք պարէնին քանակը աւելցնելու համար: Ստիպողական կարիքը կայ գործածուած հագուստի անսահման քանակի»:

- ՆՈՒ 10 Սեպտեմբեր 1921. Եարոյի 1 Սեպտեմբեր 1921-ի հեռագիրէն հատուածներ<sup>13</sup>. «Ամբողջ Հայաստանի մէջ բնակարանային պայմանները սարսափելի են, անցնող ձմեռուան [պոլշեիկներու կողմէ] զիւղերու քանդումին պատճառաւ: Տանիքի գերաններ իբրեւ վառելանիւթ գործածուած են, շատ մը բնակարաններ ձմեռուան ձիւնին առանց տանիքի մնացին, մինչ կառավարութիւնը կ'ըսէ, որ կէս միլիոն ժողովուրդ անտուն է:

«Հնդախտը (cholera) սկսած է ամբողջ երկրին մէջ տարածել՝ ուտեստեղէնի պակասին պատճառով, որ ժողովուրդին մէջ հիւանդութեանց դէմ դիմադրողականութիւնը նուազեցուց: Միջին հաշուով օրական 25 տարեցներ եւ փոքրեր Ալեքսանդրապոլի փողոցներուն մէջ կը մահանան հնդախտէն կամ անօթութեանէն: Դիակները սայլերով շարունակաբար կը հաւաքուին եւ երկաթուղիին կողքին, երկար խրամատներու մէջ, առանց արարողութեան, հաւաքաբար կը թաղուին:

«Նոյն թիւին մէջ, 3 Սեպտեմբեր 1921-ի հեռագրով Եարօ կը գրէ. «Ամերիկեան Նպաստամատոյցը հարիւրաւոր՝ գրեթէ մերկ մանուկներ ներս կ'առնէ իր արդէն գերիճողուած Կով-



**Ալեքսանդրապոլի որբանոցներուն ընդարձակ տարածութիւնը, ֆուօպոլի դաշտն ու կեդրոնը, ճերմակ ուղղանկիւնը՝ գնդակին բերդը:**

կասի որբանոցներուն մէջ, գանոնք պատասպարելով կիսաբաց մթերանոցներու մէջ, մինչեւ որ անոնց յարմար չէնքեր ապահովուին: Ալեքսանդրապոլի որբանոցներէն երկու շէնք իբրեւ հականեխիչ մաքրանոցի (quarantine) վերածեցինք հնդախտէ վարակուողներուն համար՝ 1200 փոքրեր նաեւ շատ մը ամբրիկացի պաշտօնեաներ: Ղարաքիլիսէի մէջ միայն 4 հնդախտի պարագայ եղած է 585 որբերուն մէջ, կանխարգելիչ միջոցներուն պատճառով»:

- ՆԻՌ 8 Հոկտեմբեր 1921. «ՆԻՌ-ի նոր որբանոցներ» խորագիրով Եարոյի տեղեկագիրէն հատուած մը<sup>14</sup>. «Այժմ, Ալեքսանդրապոլի մէջ, 10 տարուան համար, մեզի ճրիօրէն ուսական այլ նախկին զօրանոց համալիր մը տրամադրեցին:

«Սեւերսքին [հիւսիս] անունով այս զօրանոցները մեր տրամադրութեան տակ երրորդն են. անոնք Ալեքսանդրապոլը կեդրոն ունենալով իրարմէ շուրջ 2 քմ<sup>2</sup>. հեռու եռանկիւն մը կը կազմեն: Փոլիկոնի համալիրը 80 շէնքերէ կը բաղկանայ, մօտաւորապէս նոյնքան ալ՝ Կազաչի փոստի պարագային, իսկ այս նորը՝ 50 շէնքեր, բոլորը տաշուած քարերով, հաստ պատերով կառուցուած են: Սեւերսքին ընդհանուր նորոգութեան կը կարօտի՝ զանազան ազգութեան բանակներուն կեցութեան [թուրք, թաթար եւ պոլշեիկ] եւ աւերին պատճառով: Ոչ մէկ ապակի մնացած է եւ նոյնիսկ դուռեր եւ պատուհաններ իրենց շրջանակներով կը պակսին, առաւել՝ կարգ մը շէնքերուն տանիքը չկայ: Վիճակը անյոյս կը թուի, սակայն պիտի նորոգենք:

«Այս նոր շէնքերէն մաս մը իբրեւ որբանոց-հիւանդանոց պիտի ծառայեն յատկապէս մանրախտի (trachoma) աչքի հիւանդութեան, որ վարակած է գրեթէ 2000 որբեր: Բփիշկ Ուհլզ (Uhls), որ մանրախտի մասնագէտ է, պիտի ղեկավարէ այս որբանոցը: Ան յաջող փորձառութիւն ունեցաւ Կազաչի փոստի եւ Փոլիկոնի նման խճողուած պայմաններուն մէջ, այստեղ բուժումը աւելի դիւրին պիտի ըլլայ:

«Այս նոր որբանոցը 3500 որբեր պիտի պատասպարէ, եւ մինչեւ ձմեռ 2000 հոգիի համար նորոգուած շէնքեր պիտի ունենանք»:

Նոյն թիւին երկրորդ էջին մէջ «ՆԻՌ-ի Կովկասի շրջանի ազարակը» խորագիրով կը գրէ. «Ալեքսանդրապոլի մէջ ՆԻՌ-ին շուրջ 200 հեկտար երկրագործական հող տրամադրուեցաւ: Նիւ Եորքի երկրագործական գոլէճի տնօրէն էյ. էյ. Ճոնսոն (A. A. Johnson) յարմար գտաւ այս արտը, եւ իրեն ընկերակցող պ. Նիումըն (Newman) իսկոյն բաճկոնը հանեց եւ գործի անցաւ: 40 ջորիները [տես՝ Դ. մաս], որ Յունիսին ընդհանուր տնօրէնը Պոլիսէն բերաւ՝ գործի լծուեցան: 3 շաբթուան մէջ, արտին կէսը՝ շուրջ 100 հեկտար հերկուեցաւ եւ աշնան ցորենով ցանուեցաւ: Յոյսով եմ, որ մնացեալ արտն ալ ժամանակին կը ցանենք, ըսաւ Նիումըն:

«Բանակցութիւններ կը վարենք՝ Հայաստանի այլ վայրերու մէջ հողեր ցանելու համար, որպէսզի 2-3 տարիէն սնունդի կողմէ ինքնաբաւ դառնանք: Մեր հողագործութեան արդիական միջոցները օրինակ պիտի ծառայեն եւ Հայաստանի հողագործութիւնը պիտի յառաջդիմէ:

- ՆԻՌ 5 Նոյեմբեր 1921. «Ալեքսանդրապոլի արտերը» խորագիրով կը գրէ<sup>15</sup>. «...Կառավարութիւնը Փոլիկոն որբանոցի



Այժմու Դիլիջանէն տեսարան մը:



**Ձախի՞ն՝ երեք ժպտուն հիւանդապահուի՞ցներ: Աջի՞ն՝ հիւանդապահուի՞ցներու խմբա՞նկար:**

չըջակայքէն տրամադրեց 810 հեկտար երկրագործութեան հող, որ գարնան պիտի մշակենք:

«Ալեքսանդրապոլի գաղթականները» խորագիրով կը գրէ «Մեր հոգատարութեան տակ աւելցան 6-7000 գաղթականներ, որոնց 2000-ը որբեր են, զանոնք ներս պիտի առնենք, երբ որ տեղ պատրաստուի: Այժմ Ալեքսանդրապոլի մէջ շուրջ 20 հազար գաղթական ժողովուրդ կը կերակրենք:

«Ճելալ Օղլիի զօրանոցները» խորագիրով կը յայտնէ, որ այնտեղի ցարական զօրանոցները իրենց տրամադրուեցան, ինչ որ պիտի պատսպարեն 2500 որբեր: Կը յայտնէ նաեւ, որ այնտեղի բնութիւնը սքանչելի եւ խոշալական է»:

Որբանոցներուն առողջապահական վիճակին մասին նամակներ.- ՆԻՌ 12 Նոյեմբեր 1921. «Ալեքսանդրապոլի Կազաչի փոստի հիւանդանոցէն օրիորդ Քաթերին Փելոյի 19 Հոկտեմբեր 1921-ի նամակը» խորագիրով կը գրէ<sup>16</sup>. «Երբ օրիորդ Կիլիսփին հետ Կազաչի փոստ հասանք, երեխաներուն վիճակը այնքան զէշ էր, որ չեմ կրնար նկարագրել: Միայն 3 ամերիկացիներ կը խնամէին 10 հազար որբեր: Փետրուարին եւ Մարտին Կարսէն եկած 6000 [6400] որբերը տեղացիներուն հետ բաղդատած՝ շատ աւելի խղճալի վիճակ ունին:

«Անոնք Կարսի մէջ վառելիքի առատ չունէին, եւ կը սնանէին սառած կաղամբով եւ կիսեփ բրինձով եւ լուբիայով, որոնց քանակը երթալով կը նուազէր: Կարսէն Ալեքսանդրապոլ փոխադրութիւնը [գրաւոր թուրքերուն հրամանով] ցուրտ եղանակին՝ Փետրուար-Մարտ ահաւոր եղած է, շատեր ճամբան մահացած են:

«Կազաչի փոստը արդէն խճողուած էր, որուն վրայ աւելցաւ 6000-ը, երեւակայեցէք՝ իւրաքանչիւր անկողինի մէջ 6 կամ 8 որբ: Պարէնի պակասի պատճառով սնունդի քանակը կէսի իջեցուցինք Մարտին, քանի որ տեղական շուկային մէջ ալ ոչինչ կը գտնուէր: Երբ Ապրիլի վերջաւորութեան պարէնը հասաւ, արդէն յաջորդ օրուան համար ալիւր չէր մնացած: Երեխաները սնունդի պակասէն հիւանդանալու հակամէտ դարձած էին:

«Երկու հիւանդանոց շէնքեր ունէինք շուրջ 350 անկողինով: Անհրաժեշտ եղաւ շտեմարանի մը մէջ յաւելելու 600 ան-

կողինով հիւանդանոց բանալ, որ կրկին խճողուեցաւ: Հիւանդներուն մեծամասնութիւնը աղետապէ եւ աղիքային այլ հիւանդութիւններէ վարակուած էր, սնունդի եւ դեղորայքի պակասին պատճառով: Քանի մը վայրկեան արեւին տակ մնալով արեւահար կ'ըլլային, քանի որ իրենց սնունդին մէջ ամիսներով ձէթ եւ իւղ՝ ճարպ չկար:

«Մեր հասած շաբաթը հիւանդանոցին մէջ 2329 հիւանդ կար եւ 110 մահացած: Նախորդող քանի մը շաբաթներուն շաբաթը 200-է աւելի մահեր կը պատահէին: Մեր գալէն ետք, առաջին ամիսն իսկ մահացուածներն թիւը շաբաթական 50-ի իջաւ: Կացուցութիւնը երթալով բարելաւուեցաւ եւ անցեալ շաբաթ միայն մէկ մահ ունեցանք եւ 404 հիւանդ հիւանդանոցին մէջ:

«Քոսով եւ գոնջութեամբ (favus) վարակուածները տարբեր շէնքերու մէջ կը խնամուին, այսօր քոսով՝ 106 հիւանդ, իսկ գոնջով՝ 270 հիւանդ ունինք: Մանրախտը ամէն տեղ տարածուած է՝ 2240 միայն Կազաչի փոստին մէջ: Շուտով առանձին շէնք մը պիտի յատկացուի աչքի այս հիւանդներուն համար:

Հիւանդապահուիչներու դպրոց.-

Փելօ կը շարունակէ. «Այսքան հիւանդներուն մարգուած հիւանդապահուիչներ գտնելը շատ դժուար է: Այժմ ունինք 30 քոյրեր եւ շուրջ 75 որբեր, որոնք մեր հիւանդանոցներուն մէջ կ'աշխատին: Ուստի օրիորդ Կիլիսփին անոնց մարգելու ըսկաւ եւ վաղը հիւանդապահուիչներուն յատուկ տուն մը պիտի յատկացնենք, որպէսզի անոնք որբանոցի առօրեայ միջավայրէն դուրս գան: Պիտի փորձենք անոնց ամերիկեան հիւանդապահուիչեան կրթութիւն տալ:

«Ամենամեծ դժուարութիւնը գործիքներու եւ սարքերու պակասն է: Օրինակ՝ մաքրութեան տաշտեր եւ հականերխիչ սարքեր [գործիքներու եւ հագուստներու, սաւաններու] չկան: Ապսպրած ենք, սակայն դեռ չհասան:

«Ռոլանտ Պիլթն է (Rowland P. Blythe) գաւառին բժիշկը: Ան թոքախտի հիւանդանոց մը բացաւ եւ փոքրերուն վիճակը սքանչելիօրէն բարելաւուեցաւ: Այս նպատակով Դիլիքանի մէջ հաստատուեցաւ մնայուն բուժարան մը, ուր մեր հիւանդներն ալ պիտի դրկենք եւ զիս հրաւիրեցին վաղն իսկ այնտեղ բժիշկ Կրաֆին (Graff) հետ աշխատելու»:



**Ձախին՝ Քալիֆորնիոյ սկաուտներէն մեծ խումբ մը, փոքրիկ դերասան Գեքի Քուկընի (ապակեգործ Չարլի Չափլինին հետ ապակիներուն քար նետողը) մասնակցութեամբ, Հայաստանի սկաուտներուն համար հաւաքած նպաստը բեռնակառքէն շոգեկառքի սայլ կը փոխադրեն: Աջին՝ Տիթթոյթի մէջ եւս Քուկընի մասնակցութեամբ՝ ամերիկացի սկաուտներ թաղերէն բեռնակառքով նպաստ կը հաւաքեն: Ընդհանրապէս գործածուած հագուստներ եւ վերմակներ՝ պլանքէթներ:**

- ՆԻՌ 12 Նոյեմբեր 1921. «էլիզապէթ Թոմէն (Elizabeth Thom) նամակ Ալեքսանդրապոլի Փոլիկոնի հիւանդանոցներուն մասին» խորագիրով կը գրէ<sup>17</sup>. «Փոլիկոնի որբանոցները առաջուրնէ շատ աւելի լաւ պայմաններու մէջ են, թէեւ շատ մը պակասներ կան, սակայն գալիք ձմեռուան համար լաւատես եմ: Եթէ մեր ապսպրածները այս ձեռով շարունակեն հասնիլ եւ տաքնալու համար փայտ կարենանք ամբարել շատ գոհ կ'ըլլամ:

«Ինչպէս նախորդիւ գրած էի, աղետապի շատ մը պարագաներ երիկամատապի վերածուեցան եւ քիչեր կըցան ապաքինիլ ու մեծամասնութիւնը մահացաւ: Այս պարագաներուն յարմար դեղորայք չունինք: Խղձալի վիճակի մէջ նորեկներ ալ ներս կ'առնենք, եւ այժմու աւելի լաւ սնունդին պատճառով մահացութիւնը պակսեցաւ:

«Թիւ 1 հիւանդանոցին մէջ 20 թոքախտ տղաք կան, որոնք Դիլիջանի բուժարանը պիտի դրկուին 150 այլ տղոց հետ, որոնք նոյնպիսի խնամքի պէտք ունին: Փոլիկոնի հիւանդանոցներուն մէջ ամերիկացի բժիշկներ չկան, սակայն 4 հայ բժիշկները հիանալի հաւատարմութեամբ կը խնամեն երեխաները:

«Անցնող Օգոստոսին 15-17 տարեկան 24 որբ աղջիկներ Փոլիկոն եկան աղջկանց որբանոց՝ կազաչի փոստէն, իբրեւ հիւանդապահութեան աշակերտներ: Անոնցմէ 12 հոգին պիտի կազմեն մեր առաջին դասարանը: Անոնք շատ հետաքրքրուած են եւ նուիրումով կ'աշխատին, եւ ի վերջոյ ինքնաբաւ պիտի դառնան [ամսավճար պիտի ստանան]: Անոնք իրենց կարի վարպետութեամբ հին հագուստներ հիւանդապահութեան նոր տարագի վերածեցին:

«Յուլիս, Օգոստոս եւ Սեպտեմբեր ամիսներուն Փոլիկոնի հիւանդանոցներուն մէջ 3597 հիւանդ ընդունեցինք՝ անոնց 2462-ը բուժուեցաւ: Այս ժամանակամիջոցին 136 մահեր ունեցանք, մեծամասնութիւնը՝ աղետապէն»:

- ՆԻՌ 19 Նոյեմբեր 1921. «Օրիորդ Մապլէլ Ֆիլիփսի (Mabelle Phillips) 2 Հոկտեմբեր 1921-ի Փոլիկոնէն ղրկած նամակէն հատուածներ» խորագիրով կը գրէ<sup>18</sup>. «Այստեղ եղանակը ճիշդ թուականին կը փոխուի, Սեպտեմբեր 21-ի առաւօտուն նկատեցինք, որ մեր ամենամօտ լեռը նոր ձիւնով ծածկուած էր: Արդէն ընտիր կաշին մեր աշխատանոցները հասան՝ ձմեռուան կոշիկները շինելու համար: Վերարկուներու եւ ձմեռնային հագուստներու ապրանքը տակաւին չհասաւ:

«Մինչ այդ, քաղաքի մեր կարի աշխատանոցին մէջ կ'աշխատին 81 կիներ, որոնք շապիկներ, տաբատներ եւ փոքրերու հագուստներ կը կարեն, մոխրագոյն եւ կապոյտ ասուեակէ: Երանի աւելի փոքրերուն համար գուլարթ գոյներ ունենալինք: Սեպտեմբերի ընթացքին այս եւ Փոլիկոնի աշխատանոցէն 7069 հագուստ եւ 225 զոյգ գուլարայ արտադրուեցաւ: Սակայն ամէնէն աւելի ուրախութիւն պատճառեց հիւանդներուն համար 700 լոգանքի՝ դուրսը մոխրագոյն, ներսը կապոյտ, անձեռոց պատմուճանները (bathrobe): 700 հիւանդ փոքրիկներ հագնելով զանոնք, ուրախութիւնով դուրս վազեցին, արեւուն տակ, ոմանք ալ գրեթէ մերկ: «Իրենց համար այս նորութիւնը դեղէն աւելի օգտակար եղաւ», ըսաւ բժիշկ մը:

«Շաբթուան մեծ եղելութիւնը՝ մանրախտով վարակուած տղոց փոխադրութիւնն էր որբանոց համալիրին մայր ճամբուն վերջին երկու շէնքերը: Մինչեւ մանրախտի յատուկ հիւանդանոցի պատրաստութիւնը, այս 875 տղաքը իրենց դասարաններով, ճաշարաններով եւ աշխատանքով առանձին պիտի ապրին: Շնորհիւ իրենց հայ պատասխանատուներուն՝ այս բաժանումը խանդավառութեամբ տեղի ունեցաւ: Տղաքը իրենց անկողինները շալկած, տողանցեցին դէպի իրենց նոր շէնքերը դրօշակներ ձօճելով եւ երգելով:

«Երկրորդ մեծ պատահարը «մեծ ներկայացում»ն էր մեր փոքր թատրոնին մէջ: Առաջին անգամ ըլլալով գործածուե-

ցան Ամերիկայէն նոր հասած 6 խոշոր լուսարձակները: 20 հոգինոց տղոց երգչախումբ մը, դեկավարութեամբ աւելի երէց տաղանդաւոր տղու մը, ջինջ ձայներով հիանալի քառաձայն երգեր երգեցին:

«Սեպտեմբերի վերջաւորութեան 240 որբեր աւելցած էին: Քէփթըն Եարօ արտօնած էր, որ Փոլիկոնի մէջ նոր որբեր ընդունինք, մինչեւ որ ընդհանուր թիւը 6000-ի հասնի: Այս կը նշանակէ, որ երկյարկանի անկողիներն պիտի ունենանք, կամ՝ մէկ անկողիներ մէջ մինչեւ 4 հոգի պիտի պառկի: Ամսըւան վերջին օրը 105 նոր որբեր դիմեցին:

«Այս տղոց մեծամասնութիւնը կը դրկուի ուղղակի հիւանդանոց, ուր 999 հոգի ունինք այժմ: Մահացութիւնը նուազեցաւ, այս ամիս միայն 17 հոգի մահացաւ: Երկար զրկանքէ ետք, այս ամիս տեղական շուկայէն կըրցանք թարմ բանջարեղէն գնելը»:

- ՆԻՌ 3 Դեկտեմբեր 1921. «Երեւանի մէջ գաղթականներուն կացութիւնը ճգնաժամային է, ՆԻՌ-ը մեծ ծրագիր կը ստանձնէ» խորագիրով Սի. Էֆ.Ռոլանտ (C. F. Roland) կը գրէ՝ ամփոփ<sup>19</sup>. «...Երեւանը, որուն բնակչութիւնը 20 հազար էր, այժմ ողողուած է գաղթականներով, այս թիւը հասնելով 225 հազարի: Անոնք իրենց գիւղերը լքած եւ իրենց ունեցածով քաղաք եկած էին [քանի որ պոլշեիկները գիւղերը թալանած ու քանդած էին], հացի համար ունեցածնին ծախած եւ ցնցոտիներով մնացած: Կառավարութիւնը անկարող պատասպարելու եւ կերակրելու այս ժողովուրդը՝ Ամերիկեան Նպաստամատոյցին դիմեց եւ մենք ընդունեցինք, քանի որ այդ ժողովուրդը սովամահ, կամ ցրտահար պիտի ոչնչանար:

«Երեւանի մէջ դատարկ բնակարաններ չըլլալուն համար, հետեւեալը ծրագրեցինք եւ գործադրեցինք: Իւրաքանչիւր ընտանիքի լոգանքէ, մագերը կտրելէ եւ հագուստ տալէ ետք, ՆԻՌ-ի քարտ կը շնորհուի անոնց եւ մէկ շաբթուան պարէն կը տրուի, որպէսզի իրենց գիւղերը վերադառնան եւ քանդուած տունները նորոգեն եւ հողեր մշակեն, իւրաքանչիւր գիւղին համար պետական հսկիչի մը հսկողութեամբ: Այս ձեռով, ամէն շաբթի կրկին պարէն կը բաշխուի անոնց, մինչեւ որ բերք ունենան եւ ինքնաբաւ դառնան: Այժմ 3300 որբեր ունինք Երեւանի մեր որբանոցներուն մէջ»:

- Նոյն թիւին մէջ. «Ալեքսանդրապոլի ընդհանուր Նպաստամատոյցի յայտագիրը» խորագիրով քէփթըն Ճորճ Ի. Սմիթ (George E. Smith) կը գրէ<sup>20</sup>. «... Ալեքսանդրապոլի շրջանին մէջ 25 հազար խեղճ ու լքեալ այրիներու եւ մանուկներու կը հոգանք:

«Երկու հազարէ աւելի գաղթական եկած փոքրերուն եւ մեծերուն օրական երկու ժում ճաշ կը տրուի: [Հայ] Գաղթականներու մեծ խումբ մը եկաւ Վրաստանէն, կէս սոված վիճակի մէջ. անոնց 600-էն 200-ը մէկ ամսուան մէջ մահացան: Մեծ մասը մալարիայով վարակուած էին, սակայն լաւ սնունդով եւ գինինով երկու շաբթուան մէջ անոնք ապաքինեցան:

«Ալեքսանդրապոլի մարզը, շուրջ 30 քլմ. տրամագիծով՝ 6 նպաստամատոյց շրջաններու բաժնեցինք, իւրաքանչիւրը շուրջ 27 գիւղերու համար: Հանրային սնունդի բաշխումի 17 խոհանոց ճաշարաններ հաստատեցինք. անոնք ճաշ կը մատար-

կարարեն 162 գիւղերէն 13,000 թշուառներուն, օրական երկու ժում ճաշով: Այս թիւին կ'աւելնան նաեւ 10,000 գիւղացիներ, որոնք շաբթական պարէն կը ստանան՝ տունը եփելու եւ ճաշելու համար:

«Իսկ Ալեքսանդրապոլ քաղաքին մէջ 3 խոհանոց ճաշարաններ՝ կը խնամեն եւ կը մատակարարեն 1152 աղքատ երեխաներու, որոնք գիւղերը կը վերադառնան իրենց տունները: Ստնտու մայրերուն նաեւ կաթ եւ քաքաօ կը տրուի:

«Փոլիկոնի եւ Կազաչի Փոստի կողմին ստանձնեցինք նաեւ քաղաքին մէջի 3 փոքր որբանոցները, ուր կը խնամուին 670 տղաք եւ 591 աղջիկներ»:

### (Շար. 6)

### ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. «Ազգակ», 4 Սեպտեմբեր 2014, <http://archive.aztagdaily.com/archives/202294>
2. «Ամէնուն տարեգիրքը», 1965, Կարօ Գէորգեան, ԺԲ. տարի, տպարան «Մշակ», Պէյրութ, էջ 307-319:
3. <https://www.aztagdaily.com/archives/516539>
4. «Ամէնուն տարեգիրքը», 1966-1967, Կարօ Գէորգեան, ԺԳ. տարի, տպարան «Մշակ», Պէյրութ, էջ 241-245:
5. «Կեանքի ուղիներով» Սիմոն Վրացեան, Ե. Հատոր, Գ. տպագրութիւն, Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, Պէյրութ, 2007, էջ 94:
6. «Կեանքի ուղիներով» Սիմոն Վրացեան, Ա. Հատոր, Գ. տպագրութիւն, Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, Պէյրութ, 2007, էջ 220-221:
7. «Near East Relief», vol. 3 No. 22, June 4, 1921, p 1-2:
8. «Near East Relief», vol. 3 No. 23, June 11, 1921, p 1:
9. Նոյնը, էջ 2:
10. «Near East Relief», vol. 3 No. 25-26, July 2-9, 1921, էջ 3-4:
11. «Near East Relief», vol. 3 No. 28-29, July 16, 1921, էջ 3:
12. «Near East Relief», vol. 3 No. 30-31, July 30, 1921, էջ 4:
13. «Near East Relief», vol. 3 No. 36-37, September 10, 1921, էջ 1:
14. «Near East Relief», vol. 3 No. 40, October 8, 1921, էջ 1:
15. «Near East Relief», vol. 3 No. 44, November 5, 1921, էջ 1:
16. «Near East Relief», vol. 3 No. 45, November 12, 1921, էջ 1-2:
17. Նոյնը, էջ 3-4:
18. «Near East Relief», vol. 3 No. 46, November 19, 1921, էջ 1:
19. «Near East Relief», vol. 3 No. 48, December 3, 1921, էջ 1:
20. Նոյնը, էջ 2:



# ՇԱՐՔԱՅԻՆ ԷՐԻԿ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ, ԿԱՄ ՊԱՐԶԱՊԷՍ ԷՐՈՅԻՆ

(ԱՐՑԱԽԵԱՆ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ  
ՆԱՀԱՏԱԿ՝ ԵՂԲ. ԷՐԻԿ ԳԱԼՍՏԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

## Միեր Իսրայելեան ԵՐԵՄԱՆ

**Ե**րբեմն սիրտն էլ է քարանուծ, ու բացուած վէրքից արիւն չի ծորում, էլ չեմ ասում զսպուած արցունքի մասին: Չգիտես ինչու, ամենալաւ Ֆիլմերը պատերազմի մասին են: Գուցէ գրքերն էլ: Գուցէ հենց այն պատճառով, որ պատերազմը պատուում է մարդկանց դիմակները ու ո՛չ թաքցնելու բան է թողնում, ո՛չ էլ իմաստ: Իսկ մի գուցէ պունկէ պունկ յոյգերով է լցնում մարդկանց սառած հոգիները, ու մահուան առատութիւնից կեանքը դառնում է աւելի գեղեցիկ: Շատ Ֆիլմեր ու գրքեր են զմուսուել իմ մթագնած յիշողութեան խորխորատում, բայց երբեք չեմ մոռանայ շարքային Ֆորեսթ Գամբին, իր սեւամորթ ընկեր Բուբային: Չեմ մոռանայ Բուբայի անկատար մնացած երազանքը, չկառուցած ձկնորսանան ու ուռկաններում այդպէս էլ չյայտնուած որսացու ծովախեցգետիններին, որ թաղուեցին մնացին Վիէթնամի անանցանելի շունգիներում: Չեմ մոռանայ պատերազմից յետոյ Ֆորեսթին նաւապետի օգնական նշանակելու Բուբայի շուրջ խոստումը:

Գուցէ մոռնայի, եթէ այսօր քարացած սրտից արիւն չծորար ու մի քանի կաթիլ ցողէր գրասեղանին թափուած սպիտակ թըղթերը: Սպիտակ ու մաքրամաքուր, ինչպէս տղերքն ու իրենց երազանքները, լինեն ովկիանոսից այն կողմ, թէ այս կողմ: Երեւի մոռանայի, եթե զսպուած արցունքը վերջապէս դուրս չյորդէր կարծրացած ակնախոռոչից: Թուում է, թէ բան չկայ գրելու, դատարկ դատարկութիւն է: Միայն յորդառատ արցունքներն են անխղճաբար թրջում դատարկութիւնը, գրիչը տալիս ձեռքս ու աղաչում տաք-տաք ծեծել երկաթը:

Ճիշդ այն օրը, երբ Վիեննայի փողոցում ագուաւը ընկոյզը գցեց գըլխիս, հասկացայ, որ պատահական


ոչինչ չի լինում, ինչքան էլ անհաւատ չլինես: Ի՞նչ էր գուժում միջադէպը: Կամ՝ ո՞ւմ համար էր ղօղանջում գանգը, ինչպէս կը հարցնէր պատերազմի ու խաղաղութեան մեծ գրագիր Հեմինգուէյը: Ագուաւը դժբախտութիւն է, ասաց մի գործընկեր: Յաջողութիւն է, առարկեց մէկ ուրիշը: Հասարակ միջադէպ է, պարզապէս լինելով իմաստուն կենդանի՝ ընկոյզը բարձրացնում է վեր, բարձրունքից նետում սալայատակին, կոտորելու ու միջուկին տիրանալու յոյսով՝ վերջապէս գաղտնիքը կը մեկնի ոչ պակաս իմաստուն մի պապիկ: Եթէ ընկոյզը կոտորում է, ագուաւը, որպէս յաղթանակի տիրակալ, ըմբոշխնում է աւարը, եթէ չի կոտորում, գլխիկոր հեռանում է: Փաստօրէն, այդ տեսութեան համաձայն, փակելով ընկոյզի ազատ անկման ճանապարհը, ես գրկել էի ագուաւին յաղթանակից: Գլխիս ծլած այտուցի հաշուին: Ջրկել էի, թէ չէի գըրկել, այլեւս կարեւոր չէ: Դէպքից մի քանի ժամ անց սկսուեց պատերազմը: Մնացածը կը պատմեմ որդուս աչքերով:

Մենք 2000-2002-ի սերունդն ենք, թէ կ'ուզէք՝ պրիզիվը՝ մենք ծնուելուց չէինք էլ պատկերացնում, որ կը կոչուենք պատերազմի սերունդ: Մեր մայրերը իրենց մղձաւանջային երազներում էլ նման բան չէին տեսնի: Ոմանք մեզ կ'ասեն կորսուած սերունդ, այլք՝ քաջերի սերունդ: Շուտով կը խփի մեր տասնութը, ու կը սկսենք ցըրուել: Ռազը կ'ընկնի «Եղնիկներ», Մուրտն Քելբաջար, Պոպսը՝ Ջերբայի, էրոն՝ Մատաղիս: Ես՝ Տիկը (տղերքն են ինձ այդպէս կոչում) կը միանամ «Պատիւ ունեմ» ծրագրին՝ իբր համալսարանից յետոյ որպէս սպայ ծառայելու համար: Չէ, մենք գնանք շուտ ծառայենք, գանք, կ'ասեն տղերքը: Գնանք, գանք, պրծընենք: Գնանք, գանք, հանգիստ սովորենք: Գնանք, գանք, պիզնես անենք: Գնանք, գանք ամուսնանաք: Ապրենք պարզապէս:

Հենց այն օրը, երբ Վիեննայում



ագուալը ընկոյզը գցեց հօրս գլխին, սկսուեց պատերազմը: Հիմա, տանը նստած, սրտի տրոփիւնով ամէն օր հերթով գանգուամ եմ տղերքին: Ես պատերազմի ու խաղաղութեան կապաւորն եմ: Սովորաբար առաջինը գանգուամ եմ էրոյին: Բանակից առաջ հասցրինք լեւի գնալ, ասեց՝ մարդ ես, աշխարհ մեռնել կայ: Էրոն սկսուեալ է, ամէն ինչից գլուխ է հանում, բայց ամենալաւը խորովածն է ստացուում մօտը: Էնպէս է շուրջ, մատներդ հետը կ'ուտես: Ամէն ինչ գիտի, թէ ինչ է ուզում, ուր է գնում: Ամբողջ կեանքը ճանապարհային քարտէսի պէս գծազրուած է, եթէ ի հարկէ արտառոց բան չպատահի: Հենց բանակից գայ, միասին ընկուզենիների ալիք ենք տնկելու, վաճառենք միջուկն ու ստացուած իւրը ու միլիոնատէր դառնանք: Ինձ գիւղատնտեսութիւնը չի հետաքրքրում, բայց էրոյին խաբել եմ, թէ կ'օգնեմ իրեն, որ ուրախ սրտով գնայ բանակ, գայ: Մուռոյին խաբել եմ, թէ միասին աւտոյի պիզնես կ'անենք, ինքը աւտոյի սիրահար է: Ռազը համոզուած է, թէ իբր միասին Ամերիկա ենք գնալու ու քաղինօ բացենք: Միայն Պոպսին բան չեմ խոստացել, ինքը դեռ պլաններ չունի: Հլը սպասի ողջ-առողջ յետ գանք, մի բան կ'անենք էլի: Միայն ես եմ պլստացել էս պատերազմից, ասի՝ գնամ տղերքին հասնեմ, չտարան, թէ բա՝ դու պիտի սպայ դառնաս, յետոյ:



- Յետոյ ո՞ւր է չի լինի,- հարցրի:
- Տղա՛յ ջան, հազար տարի կուռի մէջ ենք, մի հազար տարի էլ հաստատ կուռի մէջ ենք լինելու, բոլորին էլ հերթ կը հասնի,- ասաց զինկոմիսարիատի պաշտօնեան,- մի՛ անհանգստացի, գնա՛ սպասի:

Եւ այսպէս, որպէս պատերազմի ու խաղաղութեան, կամ ռազմական բառապաշարով ասած՝ առաջնագծի ու թիկունքի կապաւոր, անցնում եմ իմ պարտականութիւնների անմիջական կատարմանը: Ինչպէս ասաց զինկոմիսարիատի փոխ գնդապետը՝ դեռ մի հազար տարի ժամանակ ունեմ: Իսկ մինչ այդ, արիւն կը տամ՝ գուցէ մի հոգի մեր սերնդից փրկուի: Չորս հարիւր կրամ՝ երկրորդ դրական, ինչպէս կարգն է: Կապի մէջ է շարքային էրիկ Գալստեանը կամ պարզապէս էրոն:

- Էրօ՛, ո՞նց ա վիճակը,- հարցնում եմ ես:
- Տի՛կ, երկնքից թափուում ա Կրատն ու Սմերչը, հրետանին դադար չունի, էլ չասած անօդաչուների մասին:
- Էրօ՛, դիմացի՛, ընկոյզ ենք թափ տալու, համաձայն եմ, կը միանամ, իրար հետ կ'անենք, դու մենակ արի:
- Այ, էս անօդաչուի չափ որ ընկոյզ թափուելի գլխներին, հաշուելի, որ միլիոնատէր ենք:
- Սկսուտ ախպեր, դիմացի՛, դու հօ գիտես ձեւերը:
- Ինչ սկսուտ, ինչ բան, գոյատեւման մեր սովորած հրմտութիւնները սունկ հաւաքելու համար են, Տի՛կ, կապի վերջը:
- Պո՛պս, ո՞նց ես:
- Տի՛կ, գումարտակը կոտորուեց:
- Ո՞նց կոտորուեց, Պո՛պս, դուխը չգձես, յաղթելու ենք:
- Հա, հաստատ յաղթելու ենք, մորթ ա, ապե՛ր, երեւի էլ չտեսնենք իրար:

- Էշ-էշ մի դուրս տուր:
- Տի՛կ, մերոնց բան չասես, դժուար փրկուեմ ես:
- Պո՛պս, դիմացի:
- Կողքս մարդ ա մեռնում, չեմ էլ յուզում, պէտքս չի արդէն, կապի վերջը:
- Մուռօ՛, ի՞նչ կայ:
- Ապե՛ր, թշնամու երես չենք տեսնում, ուզում եմ տեսնեմ, բան ունեմ ասելու, բայց չկայ, անտեսանելի ա: Էս ուրիշ կուռ ա, ապեր, կապի վերջը:
- Ռա՛գ, ի՞նչ կայ:
- Տի՛կ, մորթում ենք, ապեր, հասնելու ենք Կուռ:
- Ապե՛ր, վա՛տ ես, ի՞նչ Կուռ, ի՞նչ բան, ասում են՝ նահանջում ենք:
- Չէ՛, լուրջ եմ ասում, ախպե՛ր, քաղինոյի պահը չմոռանաս, Ամերիկա, Ամերիկա: Յաղթելու ենք:
- Ռա՛գ, դու արի, մի բան կ'անենք:
- Կապի վերջը:
- Էրօ՛:
- Չաստը չկայ, քրոջս լաւ կը նայես, եթէ չգամ, Ամանորին Ձմեռ Պապի անունից անպայման նուէր կ'ուղարկես, քանի դեռ երեխէն հաւատում ա Ձմեռ Պապին:
- Էրօ՛, դեռ ընկոյզ ենք թափ տալու:
- Է՛, Տի՛կ, Տի՛կ, որ սպայ դառնաս, կը հասկանաս, կապի վերջը:

Ես եմ՝ պատերազմի եւ խաղաղութեան կապաւորը, Տիկը: Մուռօ՛, հա: Պո՛պս, հա: Ռա՛գ, հա: Էրօ՛, էրօ՛, էրօ՛, վերցրու հեռախօսը, էրօ՛, էրօ՛... արա վերցրու, ո՞վ ա խորոված անելու, ո՞վ ա ծառ տնկելու... արա, սկսուտ ես, իբր, ինչ ես, ձեւերը գիտես, ո՞ւմ հետ եմ լեւի գնալու... կապի վերջը, պատերազմի ու խաղաղութեան կապաւոր՝ Տիկ:

Ոչ մի խոստում անկատար չի մնում, ինչպէս խոստացել էր Բուբան, ծովախեցգետինների նաւը մի օր կառուցուեց: Թէեւ ինքը չկար, բայց իր ընկեր Ֆորեսթն էր վերջին պահին փակել աչքերը ու աչքերի խորքում նշմարել ձկնորսական նաւի ուրուականը: Ինքն իրեն նաւապետի օգնական նշանակեց, քանի որ իրական նաւապետը Բուբան էր: Վիէթնամի



Ջունգլիներում թաղու-  
ած-մնացած ծովախեց-  
գետինները գետնի տա-  
կից դուրս եկան ու որ-  
սացու դարձան: Ծաղ-  
կեց Բուբայի երազան-  
քը, եկամուտից էլ նոյ-  
նիսկ մօրը բաժին հա-  
սաւ՝ ի մխիթարութիւն

կորցրած որդու անանց կսկիծի:

Ովկիանոսից այս կողմ էլ նոյնը կը լինի: Արցախի անտառ-  
ներում գետնի տակ թաղուած ընկոյզները մի օր դուրս կը  
գան հաստատ, կը բարձրանան երկինք ու կը թափուեն մեր  
գլխին: Այդ ընկոյզները սերմնացու կը դառնան ու կը սրբա-  
գօծեն արնաշաղախ հողը: Ընկուզենու ազգին անտէր չի  
մնայ, տղերքը թոյլ չեն տայ: Տիկը՝ խաղաղութեան եւ պատե-  
րազմի երբեմնի կապաւորը, ընկուզենու ազգի կը տնկի,  
տղերքն էլ կ'օգնեն՝ 2000-2002-ի պրիզիվի փրկուած մասը:  
Մատաղացու չղառած մասը: Յաղթած մասը: Ռազը: Մոզոն:  
Պոպսը: Մի կողմ կը նետեն իրենց եղած ու չեղած պլանները  
ու կը կերտեն մեր երազների ազգին: Էրոյի մայրը ընկոյզի  
մուրաբա կը փակի ու նրա ծննդեան օրը ամէն տարի տղեր-  
քին չայ խմելու կը հրաւիրի: Էրոյի տասնամեայ քոյրիկի նոր  
տարուան նուէրը՝ կամուֆլաթով տիկնիկը, Ձմեռ Պապի  
անունից չի գնայ, այլ՝ Էրոյի, թող մտածի բանակից է ուղար-  
կել: Միայն, երբ տասնվեցը լրանայ, հայրը ձեռքը բռնած կը  
տանի Եռաբլուր:

Քառասունչորս օր յետոյ գլխիս ծլած այտուցը կը ներ-  
ծծուի: Հենց գարունը բացուի, ես ու տղաս Եռաբլուրի բար-  
ձունքին մի ընկուզենի կը տնկենք, հենց Էրոյի կողքը: Որ ծա-  
ռը մեծանայ, ու ընկոյզը հասնի, մի օր կ'ընկնի տապանաքա-  
րին: Քամին կ'օգնի կամ մի սեւ ագռաւ: Ու քանի որ տապա-  
նաքարը կարծր է, ու էրոն էլ՝ սկառուտ, ընկոյզը հաստատ կը  
կոտրուի, ու միջուկը իր ամբողջ հմայքով կը բացուի ի տես  
աշխարհին: Այդ ընկոյզը կը լինի Էրոյի բաժին յաղթանակը:



Շաբաթ, 26  
Փետրուար  
2022-ը յիշա-  
տակելի օր մը եղաւ  
Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի  
«Շաւարշ Քրիսեան»  
մասնաճիւղին համար,  
որուն նահատակ սկա-  
ռուտներէն եղբ. Գրիգոր  
Ղազարեանի անունով

անուանակոչուեցաւ Armenian Airways օդանաւային ընկե-  
րութեան օդանաւերէն մէկը:

Անուանակոչութեան արարողութիւնը կատարուեցաւ  
«Ձուարթնոց» օդակայանի շրջափակին մէջ, ներկայու-  
թեամբ նահատակ սկառուտին ծնողքին եւ մասնաճիւղի սկա-  
ռուտ քոյր-եղբայրներուն:

Այս առիթով իր արտասանած խօսքին մէջ, օդանաւային  
ընկերութեան ներկայացուցիչ Արլէն Տաւուտեան յայտնեց,  
որ այսուհետեւ ընկերութեան օդանաւերէն մէկը պիտի կրէ  
անունը 19-ամեայ հայ գինուոր Գրիգոր Ղազարեանին, որ իր  
կեանքը հերոսաբար նուիրեց հայրենիքին:

Տաւուտեան իր խօսքին մէջ ըսաւ. «Արցախեան 44-օրեայ  
պատերազմին ունեցանք բազմաթիւ զոհեր, որոնց միակ  
երազանքն ու նպատակը հզօր ու պաշտպանուած հայրենիք  
ունենալն էր: Նման հայրենիք կ'ուզէր ունենալ նաեւ մեր 19-  
ամեայ Գրիգորը:

«Գրիգոր, որ ազգային մշակոյթի կրողն ու քարոզիչներէն  
մէկն էր, ձիարշաւի մեծ սիրահար էր, ինչպէս նաեւ սկառու-  
տական շարժումի աշխոյժ մասնակից: Անոր համակարգիչին  
մէջ գտնուեցան ազգային ոճով բազմաթիւ նկարներ, հայ  
ազատամարտիկներու նուիրուած նիւթեր եւ ինչ որ ամէնէն  
կարեւորն է այս երկտողը:





# ARMENIAN AIRWAYS ԻՐ ՕԴԱՆԱԻԵՐԷՆ ՄԷԿԸ Կ'ԱՆՈՒԱՆԷ ԱՐՑԱԽԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱՀԱՏԱԿ ԵՂԲ. ԳՐԻԳՈՐ ՂԱԶԱՐԵԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ

«Միրոյ բոլոր դրսևորումները, որոնց մենք կրնանք հանդիպել մեր կեանքին մէջ, միայն հայրենիքն է, որ կրնայ ներառուել իր մէջ:

«Թո՛ղ մեր այս օդանաւը ճախրէ հայոց կապոյտ եւ ջինջ երկինքին մէջ՝ մեր զինուորներու անմահացած հոգիներուն պէս՝ պարտաւորեցնելով մեզ ապրիլ եւ արարել իրենց երազներուն համահունչ:

«Խաղաղութիւն հայոց աշխարհին»:

Յայտնենք, որ Արցախեան պատերազմի նահատակ, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Երեւանի «Շաւարշ Քրիս-

եան» մասնաճիւղի սկաուտ եղբ. Գրիգոր Ղազարեան ծնած է 2001-ին, Երեւան: Ապրիլ 2012-ին ան կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի «Շաւարշ Քրիսեան» մասնաճիւղի սկաուտական «Աղթամար» խումբին:



2019-ին եղբ. Գրիգոր կը գորակոչուի հայկական բանակ: Ծառայութիւնը կը կատարէ հակաօդային պաշտպանութեան գորքին մէջ: 2020-ի Արցախեան պատերազմի առաջին օրէն ան կը մեկնի առաջնագիծ:

Սկաուտական իր երդումին հաւատարիմ, եղբ. Գրիգոր իր ամէնէն թանկագինը՝ իր սեփական կե-

անքը կ'ընծայաբերէ հայրենիքի բազմին եւ կ'երթայ միանալու անմահներու փաղանգին: Իր օրինակելի կեանքով եւ սրբազան նահատակութեամբ ան կը դառնայ ներշնչման աղբիւր՝ գալիք սերունդներուն:

Եղբ. Գրիգոր Ղազարեան կը նահատակուի 30 Սեպտեմբեր 2020-ի բուռն մարտերուն ընթացքին: Յետ-մահու ան կը պարգևատրուի «Մարտական ծառայութիւն» մետալով:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԳԱՀԻՐԷ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

**18**-20 փետրուար 2022-ին, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան այցելեց Գահիրէ եւ ներկայ գտնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի անդամական 22-րդ Ընդհանուր Ժողովին:

Ժողովը քննեց ընթացաւարտ վարչութեան գործունէութիւնը եւ յառաջիկայ հանգրուանի համար իր առաջարկները ներկայացնելով՝ ընտրեց հնգանդամ նոր վարչութիւն, բաղկացած հետեւեալ եղբայրներէն.- Լեւոն Դեյրիեան՝ ատենապետ, Արա Քէօհնեյեան՝ ատենադպիր, Դանիէլ Քիւրքեան, Կարօ Ասատուրեան եւ Յակոբ Սայեան՝ խորհրդականներ:

Ժողովին աշխատանքներուն աւրն-

թեր, կեդրոնական վարչութեան ատենապետը այցելեց Գահիրէի Ազգային Առաջնորդարան եւ հանդիպում մը ունեցաւ Առաջնորդ Աշոտ Եպս. Մնացականեանի հետ: Ան այցելեց նաեւ Միացեալ Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարան եւ ներկայ գտնուեցաւ Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի նորակառոյց «Շուշի» սրահի յուշատախտակի բացման հանդիսութեան, ուր արտասանեց նաեւ խօսք մը (տեսնել առանձին):

Գահիրէ իր կեցութեան շրջանին,



եղբ. Նաճարեան ընդունեց այցելութիւնը Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղի վարչութեան, որ այդ օրերուն պատքեթպոլի տղոց ու աղջկանց խումբերով ժամանած էր Գահիրէ՝ Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի տղոց եւ աղջկանց խումբերուն դէմ բարեկամական մրցումներ կատարելու համար:

Յայտնենք, որ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան ատենապետը ներկայ գտնուեցաւ պատքեթպոլի բարեկամական մրցումներու բացման պաշտօնական հանդիսութեան, ուր տեղի ունեցաւ սկստական շարքերու եւ մարզական խումբերու տողանցք:





## Հ.Մ.Ը.Մ.Ը ՄԵՐ ՈՒԺԻՆ ԱՂԲԻՒՐՆ Է

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՎԱԶԷՆԱՃԱՐԵԱՆԻ ԽՕՍԲԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ «ՇՈՒՇԻ» ՍՐԱՀԻ ՅՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ԲԱՑՄԱՆ, ԳԱՀԻՐԷ)

**Գ**եղեցիկ ականդրութեամբ մը հաւաքուած ենք միասնաբար ներկայ գտնուելու Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի Մեկուսի Շրջանին այսօրուան տօնակատարութեան՝ նորակառոյց «Շուշի» սրահի յուշատախտակի բացման հանդիսութեան:

Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի յաջորդական սերունդներ իրենց ներշնչումը առին միութեան նշանաբանէն՝ «Բարձրացիր-բարձրացուր»էն:

Սերունդներ ուխտեցին, որ միշտ պիտի մնան հայ ժողովուրդի ծառայութեան յառաջատար դիրքերուն վրայ:

Սերունդներ ծնրադիր երգում կատարեցին Եռագոյն դրօշին առջեւ, Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով Հայաստանին եւ Արցախին ծառայելու խոստումով:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը շնորհաւորէ Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի Մեկուսի Շրջանին նորակառոյց «Շուշի» սրահը, միութեան նշանաբանով առաջնորդուելու եւ Միջին Արեւելքի փիերուն հայը հայ պահելու իր առաքելութիւնը կատարելու համար: Նոյն թափով, հաւատքով եւ վճռակամութեամբ շարունակելով միութեան գաղափարախօսութիւնը, դաստիարակելով եւ ստեղծելով հոգեկան հայրենիք, առիթը ընծայելով մեր հայրենակիցներուն ապրելու իբրեւ հայ, հայրենիքէն հեռու, բայց հայրենիքը պահելով իրենց սրտին մէջ:



Հ.Մ.Ը.Մ.ը, յարգելի՛ ներկաներ, առոյգ, առողջ ու կորովի հայութիւն պատրաստող միութիւնն է:

Հ.Մ.Ը.Մ.ը մեր ուժին աղբիւրն է: Մեր յաջողութեան գրաւականներէն մէկն է, որուն պէտք է գորդուրալ ազգովին:

Մենք լաւատես ենք ապագայով ու ապագայի մեր յաղթանակներով: Ու մեր լաւատեսութիւնը բարի ցանկութիւններէ չի բխիր միայն, այլ՝ մեր աշխատանքէն, կամքէն եւ համոզումէն, միշտ երիտասարդութեան ի սպաս գործելու մեր տրամադրութենէն, հայութեան եւ Հայաստանին անմնացորդ ծառայելու մեր երդումէն:

Մեր պատգամը մէկ է եւ կը շարունակէ մնալ:

Ամէնո՛ւն շունչով, բոլորի՛ն համար:

Հ.Մ.Ը.Մ.ին համար:

Հայութեան եւ Հայաստանին համար:



# ՔՈՅՐ ՄԵՂՐԻ ՍԻՐԱՊԻՈՆԵԱՆ «ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՅՈՅԹԻ ՅԱՂԹՈՂ



## Միլվա Ալլահվերտեան ԵՐԵՎԱՆ

Ըստ համաշխարհային «Messenger of peace» միջազգային կազմակերպության, իւրաքաչիւր սկաուտ խաղաղութեան սուրհանդակ է: Աշխարհի բոլոր սկաուտների առաքելութիւններից են նաեւ խաղաղութիւն կառուցելն ու այդ հողի վրայ ստեղծուած երկխօսութեան կայուն մշակոյթ սերմանելը՝ փոքրիկ ու աննշան թուացող միջոցառումներից սկսած մինչեւ խոշոր համայնքային ծրագրերի իրականացումը: Այսպիսով, այս առաքելութեանը մաս կազմող երիտասարդները զբաղւում են տեղական խնդիրներով, արձագանգում են բնական աղէտներին, առաջնորդում են խաղաղութեան կառուցման գործողութիւններ, պաշտպանում են սեռերու հաւասարութիւն, աշխատում են գաղթականների համար ապաստան ու սնունդ հայթայթել եւ մեծ ջանք են գործադրում մարդկութեանը դէպի կայուն զարգացման նպատակները մղելու եւ խթանելու գործում:

«Խաղաղութեան սուրհանդակները» համաշխարհային սկաուտութեան առաջնային նախաձեռնութիւնն է, որը ոգեշնչում է սկաուտներին ամբողջ աշխարհում՝ իրենց համայնքներում քայլեր ձեռնարկել՝ նպաստելով խաղաղութեանն ու կայուն զարգացմանը: 2010 թուականից ի վեր «Խաղաղութեան սուրհանդակները» ներգրաւել են գրեթէ բոլոր՝ 172 ազգային սկաուտական կազմակերպութիւններին եւ ոգեշնչել ավելի քան 16 միլիոն ծրագրերի եւ գործողութիւնների, որոնք ընդհանուր առմամբ կազմում են ավելի քան 2-3 միլիարդ ժամ համայնքային ծառայութիւն՝ նպաստելով կայուն զարգացման նպատակներին: Խաղաղութեան սուրհան-



դակը բաղկացած է երեք փոխ կապակցուած տարրերից, ներառեալ աջակցութեան հիմնադրամը, կրթական ծրագրերը եւ համաշխարհային ցանցը, որոնք տարիների ընթացքում բազմաթիւ յաջողութիւններ են գրանցել: Համաշխարհային ցանցը հնարաւորութիւն է տալիս նախագծային գաղափարների եւ ոգեշնչման փոխանակումը՝ ավելի շատ երիտասարդներին խրախուսելու, որպէսզի իրենց համայնքներում նմանօրինակ քայլեր ձեռնարկեն: Իսկ աջակցութեան հիմնադրամն առաջարկում է Ֆինանսական եւ այլ միջոցներ սկաուտների եւ ազգային սկաուտական կազմակերպութիւնների կողմից իրականացուող ծրագրերին աջակցելու համար:

Մեծ սիրով տեղեկացնում ենք, որ այս տարի, 900 առաջադրուած թեկնածուներից յաղթող ճանաչուեցին 25-ը, որոնց շարքին էր նաեւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի անդամ, «Գրիգոր Յակոբեան» մասնաճիւղի խմբապետուհի քոյր Մեղրի Սիրապիտեսանը:

Մրցանակի շնորհման միջոցառման ընթացքում քոյր Մեղրի Սիրապիտեսանն իր շնորհակալութեան եւ երախտիքի խօսքն ուղղելով բոլոր ներկաներին ընդգծեց. «Մենք՝ բոլորս, ամենասկզբից եւէթ, միասնականօրէն, ըսկսեցինք աշխատել համաճարակի դէմ՝ օգնութիւն եւ օժանդակութիւն ցուցաբերելով կարիքի մէջ գտնուող մարդկանց: Մենք սկսեցինք կարեկցել կարիքաւոր ընտանիքներին՝ պատրաստելով աննդի տոպրակներ ու նրանց տներ տանելով: Մեզ թւում էր ամէն ինչ դրանով աւարտուեց, բայց չգիտէինք, որ ամենասարսափելին դեռ առջեւում է, ու որ մեր երկիրը պիտի ներքաշուի պատերազմի մէջ:



«2020 թուականի Հոկտեմբերի չորսից սկսած մենք բոլորս օրական երկար ժամեր անց ենք կացրել Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.-Ս.Կ-ի գրասենեակում, հաւաքագրել ենք այն ամէնն ինչ պէտք էր զինուորին

սահմանում, եւ տեղահանուած արցախցի ընտանիքին՝ քաղաքում կամ գիւղում: Շուրջ հազար արցախցի ընտանիքների օգնութիւն է ցուցաբերուել, նոր տարուայ ծրագիր է իրականաց-

ւել, ձմեռ պապիկին գրած նամակներն ենք կարդացել ու նուէրները գնել ու հասցրել հասցէատիրոջը: Երկար ամիսների աշխատանք: Բոլորս ձեռք-ձեռքի տուած յաղթահարեցինք այդ դժուարին օրերը»:

Քանի որ միջազգային կազմակերպութիւնը Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.-Ս.Կ-ից պահանջել է ներկայացնել ընդամենը մի անուն, հետեւաբար տրուել է ծրագրի համակարգողի եւ կազմակերպողի, այսինքն՝ քոյր Մեղրի Սիրապիտոնեանի անունը: Սակայն գիտենք, որ օգնութեան ձեռք մեկնած քոյր-եղբայրներից իւրաքանչիւրն իր լուծման է ներդրել այդ օգնութեան բնագաւառում:

Բոլոր մասնակիցներին շնորհուեցին գնահատագրեր, իսկ քոյր Մեղրի Սիրապիտոնեանին որպէս մրցոյթի յաղթող շնորհուեց փողկապ եւ հաւաստագիր:

## ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ՝ ԵՐԿՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐ

Թղթակից ԵՐԵՒԱՆ

**13** -16 Յունուար 2022-ին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.-Ս.Կ-ի վարչութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ յատուկ սեմինար՝ վարչութեան, մասնաճիւղերու վարչու-



թիւններու եւ ընդհանրապէս վարչական աշխատանքներով հետաքրքրուած քոյրերու եւ եղբայրներու համար: Սեմինարը իրագործուեցաւ Համաշխարհային Սկաուտական Շարժումի եւրոասիական տարածաշրջանի ղեկավար մարմնին աջակցութեամբ:

Սեմինարին երկու օրերուն ընթաց-

քին քննարկուեցան կազմակերպութեան արդիւնաւէտ կառավարման համակարգի, ռազմավարական ծրագրի մշակման, սկաուտական շարքերու ընդլայնման եւ կազմակերպութեան զարգացման առնչուած շարք մը հարցեր:





# Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՀԵՐԹԱԿԱՆ 19-ՐԳ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

## Սիլվա Ալլահվերտեան ԵՐԵՎԱՆ

«Մարզիկ»ի նախորդ թիւով (թիւ 423, էջ 84-85) ներկայացուած կարճ ակնարկէն ետք ստորեւ ընդարշակ արեղեկարարութիւն մը Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի հերթական 19-րդ համաժողովին մասին:

ԽՄՔ.

**13** Նոյեմբեր 2021-ին, Երեւանի «Արամ Մանուկեան» երիտասարդական կենտրոնում գումարուեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի հերթական 19-րդ համաժողովը:

Ժողովը, չնայած սկզբունքայնօրէն հաւատարիմ մնաց Հ.Մ.Ը.Մ.ական ընդհանուր համաժողովների կանոնադրութեանը, այնուամենայնիւ, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան միջոցով կատարուել էր նորաձեւ մօտեցում՝ ժողովի ընթացքը վարելու համար: Դասական համաժողովների ընթացակարգից մի քայլ առաջ գնալով, տուեալ համագումարի ընթացքում ձեւաւորուեցին աշխատանքային խմբեր, որոնց տրուեց ժամանակ՝ քննարկելու տուեալ ոլորտի տիրոյթում առկայ խնդիրները, մտքեր փոխանակելու, այնուհետեւ ստեղծուած մտքերն ու

զաղափարները առաջարկների տեսքով ներկայացնելու համաժողովին՝ քուէարկելու:

Նշուած աշխատանքային ուղղութիւնները հետեւեալն էին՝ ուղեգծային, կազմակերպական, կրթական, ֆինանսատնտեսական եւ քարոզչական:

Ուղեգծային խումբը ներկայացնելու էր կազմակերպութեան հետագայ երկու տարիների տեսլականն ու առաքելութիւնը:

Ֆինանսատնտեսական խումբը՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի նիւթապէս ինքնաբաւարարման, առեւտրատնտեսական գործունէութեան ուղեգիծը: Կարուածների կառավարման հայեցակարգը: Անդամավճարների հաւաքագրման նոր ու օգտաշատ ձեւեր: Դրամահաւաքների յանգեցնող աշխատանքները:

Կազմակերպական խումբը՝ ձեւակերպելու էր կազմակերպութեան ուղղահայեաց եւ հորիզոնական զարգացման հայեցակարգերի աղիւսակը: Սառեցուած մասնաձեւերի հետագայ ակտիւացման մասին առաջարկներն ու նոր ուղղութիւնները:

Հաղորդակցութեան եւ հանրային կապերու խումբը՝ մշակելու էր ընդհանուր հայեցակարգ՝ ընդհանուր առմամբ ոլորտը աշխուժացնելու եւ հնարաւորինս զարգացնելու համար:

Կրթական-երիտասարդական խումբը, որը դեռ եւս երկու տարի առաջուանից էր սկսել իր աշխատանքը, մշակելու եւ ներկայացնելու էր կրթական-դաստիարակչական աշխատանքներն ուղղորդող բանաձեւեր, որպէսզի ուղղորդեն եւ օժանդակեն յանձնախմբին՝ իրականացնելու իրենց վրայ դրուած առաքելութիւնը:

Այսպիսով, ըստ նախասիրութիւնների քոյր-եղբայրները ընդգրկուեցին համապատասխան յանձնախմբերում՝



իրենց աշխատանքը սկսելու, որից յետոյ ներկայացրեցին իրենց կողմից շարադրված բանաձևերն ու դրանք դրուեցին համաժողովի քուէարկութեանը:

Դիտարկելով համաժողովի ընթացքում ձեւաւորուած ոլորտային աշխատանքային խմբերի ներկայացրած առաջարկները, մասնաճիւղերի անդամական ժողովներից փոխանցուած բանաձևերը, ինչպէս նաեւ համաժողովին ներկայ պատգամաւորների անհատական առաջարկները, բանաձևային յանձնախումբը ներկայացրեց մշակուած բանաձևերը, որոնց մէջ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի հետագայ գործունէութեան առաքելութեան եւ տեսլականի ճշգրտման ուղղութեամբ յատկանշական էր ռազմավարական ոլորտի կողմից մշակուած սոյն բանաձևը:-

«Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը կրթական նըպատակ հետապնդող ազգային, բարոյական, հոգեւոր արժեհամակարգի վրայ հիմնուած Հ.Հ. ամբողջ տարածքում կամաւորական սկզբունքով գործող շարժում է, որի նպատակն է դաստիարակել պատասխանատու, գիտակից, քաղաքացիական ակտիւ դիրքորոշում եւ ազգային դիմագիծ ունեցող, առաջնորդական հմտութիւններով օժտուած, հասարակութեանը ծառայելու պատրաստ քաղաքացի:

«Այդ նպատակներին հասնելու համար, ձեւաւորելով համապատասխան հասարակական ընկալում, կազմակերպութիւնը պէտք է համագործակցի պետական եւ համայնքային կառույցների, կրթական հաստատութիւնների, ծնողական համայնքի, հասարակական եւ միջազգային կազմակերպութիւնների հետ, ներառականութեան սկզբունքով ներգրաւելով հասարակութեան տարբեր խմբերի:

«Մինչեւ 2027 թ. հիմնուելով կազմակերպութեան առաքելութեան եւ նպատակների վրայ, ներդնելով կազմակերպութեան արդիւնաւէտ կառավարման համակարգ, ներգրաւել Հ.Հ.ում բնակուող երիտասարդական ծրագրի պոտենցիալ շահառուների նուազագոյնը 1%-ը»:

19-րդ համաժողովը ընտրեց յառաջիկայ երկու տարիների վարչութեան կազմը՝ ըստ հետեւեալի:-

- Քոյր Սանտրա Վարդանեան
- Քոյր Անուշիկ Փանոսեան
- Եղբայր Հրաչ Զարիֆեան
- Քոյր Շուշան Մելիքեան
- Եղբայր Յարութ Գաբրիէլեան
- Եղբայր Արթուր Մկրտիչեան
- Եղբայր Գենադիի Ղազարեան
- Եղբայր Արշակ Գէորգեան
- Քոյր Վանիա Մովսիսեան

**ՆՈՐԸՆՏԻՐ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԿԻՒՄՐԻ**

Նորընտիր վարչութիւնը իր ռազմավարական որոշումների կայացման համար կազմակերպեց արտագնայ նիստ՝ նոյն ամսի 26-ից 28-ը՝ Կիւմրի քաղաքում:

Ըստ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան ատենապետ քոյր Սանտրա Վարդանեանի՝ «Վայրի ընտրութիւնն ամենեւեւն պատահական չէր. նախ՝ մեզ պէտք էր նաեւ ծանօթանալ Երեւանից դուրս գտնուող մասնաճիւղերի հետ ու տեսնել նաեւ նրանց գործունէութեան ընթացքը, եւ երկրորդ՝ Կիւմրին մեզ համար շատ խորհրդանշական վայր էր: Չէ՞ որ հէ՛նց Կիւմրիում է տեղակայուած Վահան Չերազի արձանը, եւ հէ՛նց այստեղ է նա ծաւալել սկառուտական իր առաջին գործունէութիւնները: Այնտեղ կարեւորագոյն գործով զբաղուեց վարչութիւնը,- շարունակեց քոյրը,- քըննարկելով համաժողովին ընդունուած ամբողջ բանաձևերը, մենք փորձեցինք գնահատել նախկին ժամանակահատուածում իրականացուած գործունէութիւնը:

Գնահատումը յաւուր պատշաճի իրականացնելու համար, օգտագործեցինք համաշխարհային g-sat կոչուող գործիքակազմի՝ 2.1-ը՝ վերջին տարբերակը: Արդիւնքում մենք հնարաւորութիւն ունեցանք իրատեսօրէն գնահատելու մեր ունեցած իրավիճակը՝ վարչական եւ սկառուտական ուղղութիւններով, այսինքն՝ ստացանք ամբողջական պատկեր մեր ունեցած բաց կողմերի մասին՝ ե՛ւ կառավարման, ե՛ւ ֆինանսական, ե՛ւ սկառուտական շարժման տարածման վերաբերեալ: Այնուհետեւ ստացուած արդիւնքներին կցեցինք նաեւ համաժողովին քուէարկութեամբ հաստատուած որոշումները եւ ստացանք լայն պատկերացում՝ մեր յառաջիկայ երկու տարիների գործելաձի եւ հիմնական ուղղութիւնների մշակման մասին:

Մեր համաժողովին իրականում առաջին քայլն այդ ուղղութեամբ արել էր՝ որպէս որոշում յստակ նշելով մեր տեսլականը մինչեւ 2027-ը, թէ՛ ո՞ւր պիտի հասնենք եւ այդ ճանապարհին ի՞նչ խընդիրներ պիտի լուծենք: Վարչութիւնը լինելով նորակազմ, կարիքը ունէր կտրուելու առօրեայ միջավայրից, յայտնուելու այլ՝ նպատակայարմար վայրում, որպէսզի անդամները կարողանան մէկը միւսի հետ ծանօթանալ, միմիանց ճանաչել եւ իրար հետ աշխատելու ձեւերն ու եղանակները մշակել: Հիմնալի ստացուեց: Ուրախ եմ, որ ունենք շատ լաւ ու գործունեայ խումբը», եզրափակեց քոյրը:

Նորընտիր վարչութիւնը, աշխատանքային եւ գործնական հանդիպումների կողքին, այցելել է նաեւ քաղաքի տեսարժան վայրերն ու փորձել հնարաւորինս ճանաչել քաղաքը: Ըստ ամենայնի ե՛ւ վարչութեան, ե՛ւ հայաստանեան այլ մասնաճիւղերի առջեւ դրուել է եւս մի նպատակ. յառաջիկայ երկու տարիների ընթացքում լծուել նաեւ հայրենաճանաչութեան գործին:





# ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ՝ Ի ՅԻՇԱՏԱԿ ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾ ԵՒ ՄԱՀԱՑԱԾ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐՈՒ

**Հ**Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային վարչութեան տարեկան ականդուլթիւն դարձած՝ նահատակ եւ մահացած Հ.Մ.Ը.Մ.ականներու յիշատակին կատարուող հոգեհանգստեան արարողութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 21 Նոյեմբեր 2021-ին, Նորաշէնի Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

Յետ հոգեհանգստեան արարողութեան, Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ տեղի ունեցաւ հոգեսուրճի հիւրասիրութիւն, ուր Շրջանային վարչութեան անունով խօսք առաւ քոյր Սիրվա Սաղրբեան: Հարկ է յիշել, թէ ամէն տարի Հ.Մ.Ը.Մ-ը աշխարհով մէկ յարգանքի տուրք կը մատուցանէ եւ կը յիշէ միութենէն յաւատարմութեամբ բոլոր նահատակներն ու ննջեցեալները, որոնք



առաւելագոյն կերպով ծառայեցին Հ.Մ.Ը.Մ-ին եւ հայ ազգին:

Հոգեհանգստեան պաշտօնին ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական վարչութեան ղիւանի անդամներ, Լիբանանի Շրջանային վարչութիւնը,

մասնաճիւղերու վարչութիւնները, Շրջանային Սկստակական Խորհուրդն ու Շրջանային խմբապետական կազմը, մասնաճիւղերու խմբապետական կազմերու անդամներ, չեփորախումբի անդամներ եւ Հ.Մ.Ը.Մ.ականներ:

## ԼԻՐԱՆԱՆԵԱՆ ՖԵՏԵՐԱՍԻՈՆՆԵՐՈՒՆ ՄԷՁ Հ.Մ.Ը.Մ.Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ

**Հ**Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային վարչութեան հրահանգով, Ուրբաթ, 28 Յունուար 2022-ին տեղի ունեցաւ լիբանանեան ֆետերասիոններու մէջ Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցիչ-անդամներու առաջին ժողովը:

Ժողովին ընթացքին ներկայացուցան զեկուցումներ, տեղի ունեցաւ միտքերու փոխանակում եւ քննարկում՝ միշտ նպատակ ունենալով Հ.Մ.Ը.Մ-ը լաւագոյն ձեւով ներկայացնել հանրութեան, լիբանանեան կեանքին մէջ ամբողջական անոր գերակատարութիւնն ու ներկայութիւնը:

Ժողովին ներկայ էին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական վարչութեան ատենապետ, սկստակական ֆետերասիոնի մէջ Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցիչ եղբ. Վաչէ Նաճարեան, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային վարչութեան ատենապետ, պասքիթպոլի ֆետերասիոնի մէջ Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցիչ եղբ. Հայկ Թապազեան, Լիբանանի Ողիմպիական Կոմիտէի անդամ եւ



փինկ-փոնկի ֆետերասիոնին մէջ Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցիչ եղբ. Ռաֆֆի Մուսթոֆեան, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային վարչութեան անդամ, աթլէթի ֆետերասիոնին մէջ Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցիչ քոյր Մարիա Գէորգեան, եռամարտի (թրէսթլոն) ֆետերասիոնին մէջ Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցիչ եղբ. Կարէն Արաբկիւլեան, հեծելաքաշի ֆետերասիոնին մէջ Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցիչ եղբ. Նազօ Հապիպեան, ճատրակի ֆետերասիոնին մէջ Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցիչ եղբ. Էլի Հոլիշեան, ինչպէս նաեւ՝ Շրջանային վարչութեան անդամներ:

Հանդիպումը առիթ մը եղաւ անդրադառնալով Հ.Մ.Ը.Մ-ի աշխատանքներուն, ներկայ պայմաններուն մէջ կատարուող գործունէութեան՝ զանազան բնագաւառներու մէջ, ինչպէս նաեւ պատկերացում մը կազմել՝ ապագայի ծրագրերներու մասին:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻՔԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

**Հ** .Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը Հինգշաբթի, 27 Յունուար 2022-ին այցելեց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին:

Հանդիպումը առիթ դարձաւ խօսելու Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի մարզական եւ սկսողական զանազան աշխատանքներուն, լիբանանահայ երիտասարդութեան դիմագրաւած հարցերուն եւ ընդհանրապէս գաղութի ազգային կեանքին մասին:



Ընդհանուր անդրադարձ կատարուեցաւ նաեւ Լիբանանի մէջ տիրող ներկայ պայմաններուն լոյսին տակ միութեան ունեցած ծրագրերուն եւ ընթացիկ



աշխատանքներուն: Կաթողիկոսը զնահատեց միութեան աշխատանքը, քաջալերական խօսքեր ուղղեց Լիբանանի Շրջանային Վարչութեան՝ շեշտելով, որ միութեան մէջ պատանիներու եւ երիտասարդներու ներգրաւումը, ազգային շունչով զանոնք դաստիարակելը հրամայական եւ ապագայի կարեւոր երաշխիք են:

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանի ներկայացուցչական 49-րդ ժողովը փեղի ունեցաւ 26-28 Նոյեմբեր 2021-ին, «Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի «Հրայր Մարտիեան» սրահին մէջ:

Ժողովին մասնակցեցան Լիբանանի մէջ գործող Հ.Մ.Ը.Մ.Ի 10 մասնաճիւղերէն ընկերած 57 լիազօր ներկայացուցիչներ, խորհրդակցական շայնով հրաւիրեալներ, Կեդրոնական Վարչութեան անդամներ եւ պաշտօնական հիւրեր, ընդամենը՝ 78 ժողովականներ:

Ժողովը քննեց ընթացաւարտ Շրջանային Վարչութեան քսանամսեայ գործունէութեան նիւթաբարոյսական փեղեկագիրը: Կապարուեցան լուսաբանական հարցումներ, ըստ էութեան արտայայտութիւններ եւ յառաջիկայի գործունէութեան առաջարկներ:

Քորոնա ժահրին, Պէյրութի նաւահանգիստի պայթումին եւ Լիբանանի ընկերային-փնտրական վար կացութեան հետեւանքով սրելծուած ճգնաժամային վիճակը, զոր կ'ապրի լիբանանահայ գաղութը, եղաւ լայն քննարկումի նիւթ:

Ներկայացուցչական ժողովը եկաւ հասարակելու, որ հակառակ երկիրն ու գաղութը հարուածող բազմաթիւ դժուարութիւններուն, Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի ընկերային հասարակութիւնը իր առաքելութեան, պիտի շարունակէ իր անսակարկ ներդրումը ունենալ լիբանանահայ գաղութի հզօրացման եւ վերականգնումի աշխատանքներուն մէջ, յապկապէս լծուելով պատանի ու երիտասարդ սերունդի ներգրաւման եւ ազգային առողջ միջավայրի մէջ դաստիարակ-



ման աշխատանքին: Հ.Մ.Ը.Մ. յանձնառու պիտի ըլլայ մասնաւոր նոր մարդուժի պատրաստութեան, յաղթանակներու ճամբով գաղութին բարոյական կորույթին եւ խանդավառութեան բարձրացման:

Ներկայացուցչական ժողովը իր աշխատանքներու աւարտին ընկերեց Շրջանային Վարչութեան նոր կազմ մը՝ հետեւեալ պատկերով-

- Եղբ. Հայկ Թապագեան
- Քոյր Սիլվա Սաղրեան
- Եղբ. Հրայր Սեդոյեան
- Եղբ. Ուիլսոն Քէօչերեան
- Քոյր Սոնա Պօղոսեան
- Եղբ. Միքայիլ Քենիթրեան
- Եղբ. Բա.Ֆիլի Խիւրափերեան
- Քոյր Մարիա Գէորգեան
- Քոյր Արպա Չէյրունեան



# ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՄԱՆ ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆ՝ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՍԿԱՈՒՏՈՒԹԵԱՆ 110-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

**Լ**իբանանի սկաուտական շարժումի 110-ամեակին առիթով եւ Լիբանանի սկաուտական Ֆեոտերասիոնին կազմակերպած տօնակատարութիւններու շարքին, Շաբաթ, 26 Փետրուար 2022-ի երեկոյեան ժամը 5-ին, Ֆեոտերասիոնը Պապատայի Անտոնեան հայրերու միաբանութեան հիմնարկին մէջ կազմակերպեց երէց խմբապետներու պարգեւատրման հանդիսութիւն մը, որ վայելեց Լիբանանի երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Ժորժ Քալլասի հովանաւորութիւնը:



կեանքին եւ Հ.Մ.Ը.Մ-ի տարբեր մակարդակի աշխատանքներուն ունեցած են կարեւոր ներդրում:

Այս առիթով Լիբանանի սկաուտական Ֆեոտերասիոնին կողմէ պատուոյ յատուկ շքանշան ստացաւ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախկին նախարար Վարդինէ Օհանեան-Գէորգեան: Շքանշաններով պարգեւատրուեցան Ֆեոտերասիոնին անդամ միութիւններու 65 երէց խմբապետ-խմբապետուհիներ:

Հանդիսութեան ներկայ գտնուեցան երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախկին նախարար Վարդինէ Օհանեան-Գէորգեան, Համաշխարհային Սկաուտական Խորհուրդի նախագահ Էնտի Շէփմըն, փոխ նախագահ Սարա-Ռիթա Քաթիթան, Եգիպտոսի, Թունուզի, Յորդանանի եւ արաբական սկաուտական Ֆեոտերասիոնի անդամներ, Լիբանանի սկաուտական Ֆեոտերասիոնի նախագահ Ժորժ Ղրէյլպ եւ բազմաթիւ այլ պատասխանատուներ, որոնց կարգին՝ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի

Շրջանային Վարչութեան ատենապետն ու սկաուտական ներկայացուցիչը, Շրջանային Սկաուտական Խորհուրդի եւ Շրջանային խմբապետական կազմի անդամները:

Լիբանանի սկաուտական Ֆեոտերասիոնը շքանշաններով կը պատուէ այն բոլոր երէց խմբապետ-խմբապետուհիները, որոնք միջազգային, արաբական եւ կամ լիբանանեան սկաուտական կեանքին մէջ ունեցած են յառաջատար դերակատարութիւն եւ մեծ ներդրում: Այս շքանշանին արժանացան Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի սկաուտական ընտանիքէն եղբայր Հրայր Մարգարեան եւ քոյր Ալին Քէչէպաշեան (ի բացակայութեան), որոնք Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական

նին անդամ միութիւններու 65 երէց խմբապետ-խմբապետուհիներ:

Հանդիսութեան բացումը կատարեց Լիբանանի սկաուտական Ֆեոտերասիոնի ընդհանուր խմբապետուհի Ֆայզա Քանպար: Խօսքեր արտասանեցին Ֆեոտերասիոնի նախագահ Ժորժ Ղրէյլպ, երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Ժորժ Քալլաս:

Պարգեւատրուողներուն կողմէ սրբոյ խօսքը արտասանեց երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախկին նախարար Վարդինէ Օհանեան-Գէորգեան:

Օհանեան-Գէորգեան յայտնեց, որ սկաուտական շարժումին ստեղծումէն ղար մը ետք, շարժումը կու գայ փաս-

տելու, թէ իր ոտքերը ամուր կերպով գետնին վրայ են եւ ան կրնայ ընդառաջել ներկայ դարուս արագ եւ բազմազան մարտահրաւէրներուն:

«Սկստական շարժումը յաջողեցաւ դիմագրաւել բոլոր մարտահրաւէրները եւ կարողութիւն ունեցաւ տնօրինելու համաշխարհային մակարդակով մշակութային եւ ընկերային շարժումներ՝ պահպանելով մշակութային, գաղափարաբանական եւ մտաւոր բազմազանութիւն:

«Այս յաջողութեան գաղտնիքը կը բխի այն իրականութենէն, որ հակառակ համաշխարհային շարժում ըլլալուն, սկստական շարժումը յարգեց իւրայատկութիւններն ու բազմազանութիւնը, ինչպէս նաեւ անհատական եւ հաւաքական համոզումները՝ վարուելով իբրեւ սպունգի կտոր մը, որ կը ստանայ իւրաքանչիւր միջավայրի ձեւն ու բովանդակութիւնը», ըսաւ ան:

Վ. Օհանեան-Գէորգեան հաստատեց, որ լիբանանեան սկստական շարժումը իր կարգին յարգեց իւրայատկութիւններն ու լիբանանեան հիւսուածքին բազմազանութիւնը, օգտուեցաւ անոր հարստութենէն եւ ստեղծեց նոր ուղի մը, որ պահպանեց իր հմայքը եւ նորանոր սերունդներ կերտելու իր կարողութիւնը: «Այս բոլորը կարելի եղաւ իրագործել, որովհետեւ լիբանանեան սկստական շարժումը յանձնառու մնաց արդի դաստիարակութեան եւ լաւ քաղաքացիներ պատրաստելու սկզբունքներուն», ըսաւ ան:

Վ. Օհանեան-Գէորգեան ընդգծեց, որ լիբանանեան սկստական շարժումը տեղական եւ համաշխարհային



առումով կարողացաւ գործադրել իր կարգախօսը, յատկապէս վտանգներու եւ տագնապներու ընթացքին, ինչպէս՝ Պէյրութի նաւահանգիստի պայթումին եւ քորոնայի համաճարակին դէմ պայքարի ընթացքին, ինչպէս նաեւ կանխարգելման եւ նախազգուշական ծրագիրներ, կլոր սեղաններ եւ այլ աշխատանքներ կազմակերպելու իր ջանքերով:

Ան նշեց, որ Լիբանանի սկստական Ֆետերասիոնը այս հանդիսութեամբ հաւատարմութիւն կը յայտնէ առաջնորդներուն եւ նոր քայլ մը կ'առնէ գնահատելու բոլոր անոնց ջանքերը, որոնք նուիրումով գործած են: «Այս քայլով Ֆետերասիոնը ապագայի ուղեգիծ մը կը բանայ՝ ռազմավարական տեսլականի մը ընդմէջէն, ինչպէս նաեւ կը շարունակէ ծառայել լիբանանեան հասարակութեան», շեշտեց ան:

Վ. Օհանեան-Գէորգեան կոչ ուղղեց լիբանանեան սկստական շարժումին յաւելել միասնականութեամբ գործելու եւ իր ռազմավարութեան համաձայն նորանոր երկխօսութիւններ, համագումարներ եւ կլոր սեղաններ ծրագրելու՝ ներկայութեամբ թէ առցանց, տարածելու համար սկստական սկզբունքները, ինչպէս նաեւ ամրապնդելու համար սկստական յարաբերութիւնները:

«Բարձր կը գնահատեմ լիբանանեան սկստական շարժումին կողմէ երկու սեռերուն միջեւ հաւասարութիւն հաստատելու ճիգերը, կրօնի, ար-

ժէքներու, աւանդներու եւ գաղափարներու բազմազանութեան նկատմամբ տածած յարգանքը, ինչպէս նաեւ ուրիշը ընդունելու պատրաստակամութիւնը», ըսաւ Վ. Օհանեան-Գէորգեան:

Ան շնորհակալութիւն յայտնեց իր պարգեւատրման համար՝ աւելցնելով, որ ինք՝ իբրեւ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար, պարգապէս իր պարտականութիւնը կատարած է՝ հաւատարմով սկստական շարժումին արժէքներուն, անոր համաշխարհային դերակատարութեան, ինչպէս նաեւ տեղական իմաստով Լիբանանի միասնականութեան նպաստող հազարաւոր օղակներէն մէկը ըլլալու իրականութեան:

«Վստահ եմ, որ նախարար Քալլասի պաշտօնավարութեան ընթացքին եւս նախարարութեան աշխատանքները պիտի շարունակուին այնպէս, ինչպէս կ'ընթանային նախապէս: Իմ եւ բոլոր պարգեւատրողներուն անունով շնորհակալութիւն կը յայտնեմ ձեզի եւ կը շնորհակարարեմ լիբանանեան սկստական շարժումին 110-ամեակը: Վրստահ եմ, որ ձեր նմաններուն յանձնարարութեամբ սկստական շարժումը հարիւրաւոր տարիներ պիտի ապրի՝ ծառայելու համար հասարակութեան», եզրափակեց Վ. Օհանեան-Գէորգեան:

Իր կարգին, Քալլաս մաղթեց, որ արաբ եղբայրները իրենց մասնակցութիւնը կը բերեն 2022-ի աւարտին Պէյրութի մէջ գումարուելիք սկստական արաբական խորհրդաժողովին:





## ԼԻՔԱՆԱՆԻ ՄԿԱՌՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԳԻՐՈՒԹԵԱՆ 110-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

**28** Փետրուար 2022-ի կէսօր-  
լան ժամը 12-ին, Լիբանանի վարչապետ Նեժիպ Մի-  
քաթիի հովանաւորութեամբ եւ ներկա-  
յութեամբ, վարչապետարանին մէջ տե-  
ղի ունեցաւ Լիբանանի սկաուտական  
շարժումի հիմնադրութեան 110-ամեա-  
կի պաշտօնական հանդիսութիւնը, ներ-  
կայութեամբ լիբանանցի, արաբ եւ  
օտար հիւրերու:



ԸՄ-ական պատուիրակութիւն մը,  
որուն մաս կազմեցին ՀՄԸՄ-ի Լի-  
բանանի Շրջանային Սկաուտական  
Խորհուրդի ատենապետ եղբ. Յակոբ  
Զպլաքեան, Շրջանային խմբապետու-  
հի եւ Լիբանանի սկաուտական Ֆետե-  
րասիոնի խմբապետութեան անդամ  
քոյր Լուի Պիլալեան եւ սկաուտական  
Ֆետերասիոնի կենսոլորտի յանձնա-  
խումբի ատենապետ քոյր Սանահին

Տօնակատարութեան իր մասնակցութիւնը բերաւ ՀՄ- թովմասեան:

## ԿԵՆՍՈՒՆՈՐՏԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

**27** Փետրուար 2022-ին, Լիբա-  
նանի «Ռաֆիք Հարիրի» օդակայանի «Ռիատ Սալա-  
մէ» սրահին մէջ տեղի ունեցաւ Լիբա-  
նանի սկաուտական ֆետերասիոնին  
կազմակերպած սկաուտական համաժո-  
ղովը, հովանաւորութեամբ եւ ներկա-  
յութեամբ Համաշխարհային Սկաուտա-  
կան Խորհուրդի նախագահ Էնտի Շէփ-  
մընի:



Ձանազան երկիրներու եւ միութիւն-  
ներու կողքին, համաժողովին իրենց

մասնակցութիւնը բերին Հ.Մ.-Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային խմբապետական կազմէն՝ Շրջանային խմբապետուհի եւ Լիբանանի սկաուտական Ֆետերասիոնի խմբապետութեան անդամ քոյր Լոուի Պիլլալեան, Շրջանային արեւոյշ ճիւղի խմբապետուհի եւ սկաուտական Ֆետերասիոնի կենսոլորտի յանձնախումբի ատենապետ քոյր Սանահին Թովմասեան եւ Լիբանանի սկաուտական Ֆետերասիոնի յանձնախումբերու անդամներ՝ քոյրեր Թալին Բաբիրեան, Կասիա Էճիտեան եւ եղբայր Սիմոն Տէրատեան:

Համաժողովին քոյրեր Լոուի Պիլլալեան եւ Սանահին Թովմասեան ներկայացուցին կենսոլորտի յանձնախումբի գործունէութեան ուղեգիծը:



## ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ, ՄԱՍՆԱԾԻՂԻ ԷՒ ՄԻԱՒՈՐԻ ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ

**Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Սկաուտական Խորհուրդ ՊԵՅՐՈՒԹ**

**16** Փետրուար 2022-ի երեկոյեան ժամը 8-ին, «Աղբալեան Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի «Հրայր Մարուխեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի մասնաճիւղերու Սկաուտական Խորհուրդներու առաջին ժողովը, կազմակերպութեամբ՝ Լիբանանի Շրջանային նորանշանակ Սկաուտական Խորհուրդին, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան սկաուտական ներկայացուցիչ քոյր Սոնա Պօղոսեանի, մասնակցութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրութի, Պուրճ Համուտի, Այնճարի, Փրտէյտէի եւ Անթիլիասի մասնաճիւղերու Սկաուտական Խորհուրդներու, մասնաճիւղի եւ միաւորի խմբապետներուն:

Առաջին բաժինով Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Սկաուտական Խորհուրդի ատենապետ եղբայր Յակոբ Զպաքեան ներկայացուց ժողովին նպատակն ու օրակարգը, որմէ ետք ներկայացուց մասնաճիւղի եւ միաւորի խմբապետներուն, Սկաուտական Խորհուրդներուն եւ Շրջանային Սկաուտական Խորհուրդին պարտականութիւններն ու իրաւասութիւնները:

Ապա, արծարծուեցան սկաուտական կեանքը յուզող հար-



ցեր: Տեղի ունեցան կարծիքներու փոխանակումներ: Մասնակիցները ստացան իրենց հարցումներուն լուսաբանական պատասխանները:

Յառաջիկայ երկամեակի ծրագիրին մշակման համար մասնակիցներուն առիթ տրուեցաւ ներկայացնելու առաջարկներ:

Ժողովը աւարտեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:



Հ.Մ.Ը.Մ-ի ՀԻՄՆԱԴԻՐՈՒԹԵԱՆ 103-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ՝

# ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ Հ.Մ.Ը.Մ-Ի ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՆՆՋԵՑԵԱԼՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Թղթակից  
ՀԱԼԷՊ

Հիմնադրութեան ամեակները թէեւ միութիւններու կողմէ ցնծալի տօնախմբութեամբ կը յիշատակուին, սակայն սակաւաթիւ միութիւններ, իւրաքանչիւր ամեակի բոլորման հետ՝ կը յիշեն եւ կը յարգեն իրենց հիմնադիրները, ննջեցեալ անդամները եւ անոնց յիշատակը վառ կը պահեն նոր սերունդին մօտ: Այսպէս է Հ.Մ.Ը.Մ-ը, որ շարունակ կը յիշէ, կը յարգէ եւ կը մեծարէ իր հիմնադիր սերունդը, ննջեցեալները եւ անոնց ազգանուէր երթը շարունակելու կամքը կը վերանորոգէ:

Հ.Մ.Ը.Մ-ի 103-ամեակին առիթով, հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ Բերիոյ հայոց թեմի Առաջնորդ Մասիս Եպս. Զօպուեանի, նախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան, Կիրակի, 28 Նոյեմբեր 2021-ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. եւ անմահ Պատարագի, ըստ աւանդութեան տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն՝ Հ.Մ.Ը.Մ-ի հին ու նոր ննջեցեալներու հոգիներու խաղաղութեան համար: Ներկայ էին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօշկեր-

եան, Հ.Մ.Ը.Մ-ի շքանշանակիր եղբայրներ, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ Շրջանային Վարչութիւնը, Շրջանային Սկաուտ-Խորհուրդն ու խմբապետութիւնը, Հալէպի մասնաճիւղին վարչութիւնը, խմբապետը, խմբապետական եւ աստիճանաւորական կազմեր եւ սկաուտներ: Ներկայ էր նաեւ պատկան մարմինի անդամ եղբ. Արտո Փայասեան:

Հոգեհանգստեան պաշտօնէն ետք, Հալէպի մասնաճիւղի շեփորախումբին առաջնորդութեամբ, ներկաները ուղղեցան Ազգային գերեզմանատան մէջ գտնուող Հ.Մ.Ը.Մ-ի դամբարան, ուր միութեան հոգեւոր հովիւ Մաշտոց Ա. Քհնյ. Արապաթեանի առաջնորդութեամբ աղօթք բարձրացուցին առ Աստ-

ւած, մոմավառութիւն կատարեցին, Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին անունով ծաղկեպսակ գետեղեցին եւ շեփորախումբին նուագակցութեամբ երգեցին «Յառաջ նահատակ» քայլերգը: Ապա, Արցախեան գոյապայքարի նահատակ Հ.Մ.Ը.Մ-ականներու յուշակոթողին դիմաց եւս ծաղիկ գետեղելով եւ մոմավառութիւն կատարելով անոնք յարգանքի տուրք մատուցեցին միութեան անմահներու յիշատակին:

Այս տխուր առիթով, ցաւակցութիւնները ընդունուեցան Հ.Մ.Ը.Մ-ի պարտէզի ճատրակի սրահին մէջ, ներկայութեամբ միութեան հոգեւոր հովիւին, պատկան մարմինի անդամներուն, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչու-





թեան անդամ եղբ. Մանուկ Քէօշկերեանի, Հ.Մ.Ը.Մ-ի շքանշանակիր եղբայրներուն, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան, Շրջանային Սկաուտ-Խորհուրդին եւ խմբապետութեան, Հալէպի մասնաճիւղի վարչութեան, խմբապետին, խմբապետական եւ աստիճանաւորական կազմերուն եւ սկաուտներուն:

Շրջանային Սկաուտ- Խորհուրդի անդամ քոյր Լիլիթ Տորմոզեան-Փայասեան հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Աւետիս Տէրվիշեանը՝ փոխանցելու Շրջանային Վարչութեան խօսքը այս առիթով: Ան նշեց, թէ Նոյեմբեր ամիսը Հ.Մ.Ը.Մ-ականներուն համար հպարտութեան եւ յարգանքի ամիս է, որուն ընթացքին կը յիշենք միութեան հիմնադիր սերունդը, Հ.Մ.Ը.Մ-ի շարքերուն մէջ ծառայած ննջեցեալները եւ կը խոնարհինք անոնց կատարած նուիրեալ ծառայութեան առջեւ:

Եղբ. Տէրվիշեան հաստատեց, որ



«Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանով եւ հիմնադիր սերունդի տեսլականով պիտի շարունակենք կերտել արի եւ գիտակից հայ սերունդներ, հետեւաբար նոր ծրագիրներով եւ հաստատուն քայլերով միասնաբար պիտի ուղղուինք դէպի լուսաւոր ամեակներ:

Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան եւ Սուրիոյ շրջանին անունով եղբ. Տէրվիշեան ցաւակցական խօսք ուղղեց Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին եւ ննջեցեալ Հ.Մ.Ը.Մ-ականներու, ինչպէս նաեւ Արցախեան գոյամարտի

նահատակ Հ.Մ.Ը.Մ-ականներու ընտանիքներուն, Ամենակալէն հայցելով, որ իրենց հոգիները խաղաղութեան մէջ պահէ եւ երկինքի արքայութեան արժանացնէ:

Ապա, արի-արեւոյշ միաւորէն խումբ մը սկաուտներ ասմունքեցին Մուշեղ Իշխանի «Երգ շքերթի» բանաստեղծութիւնը:

Այնուհետեւ իր սրտի խօսքը փոխանցեց միութեան հոգեւոր հովիւ Մաշտոց Ա. Քհնյ. Արապաթլեան: Ան դիտել տուաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ը շնորհիւ իր եղբայրական ոգիին եւ միասնական աշխատանքին, սերունդէ սերունդ կը փոխանցէ ազգային արժէքները պահպանելու միութեան առաքելութիւնը:

Հ.Մ.Ը.Մ-ի նշանաբանի լոյսին տակ, ան նշեց, թէ միութեան երթը ընթացք մըն է, ուր Հ.Մ.Ը.Մ-ականը կը բարձրանայ՝ իր հետ բարձրացնելով նորահաս սերունդներ: «Թէեւ բարձրանալը դիւրին է, սակայն բարձրացնելը՝ դժուար, որովհետեւ կը պահանջէ պատասխանատուութեան գիտակցութիւն», աւելցուց ան:

Քահանայ Հայրը յայտնեց, թէ երբ կը յիշենք հին ու նոր ննջեցեալները, կը յիշենք նաեւ անոնց կատարած գործերը: Հետեւաբար, Հ.Մ.Ը.Մ-ի մէջ դրօշակակրութիւնը կտակազրուցութիւն է եւ սերունդէ սերունդ օրհնութեան փոխանցում:

Ան աղօթք բարձրացնելով առ Աստուած հայցեց, որ ննջեցեալներուն հոգիները երկինքի արքայութեան արժանի դարձնէ: Ապա, «Պահպանիչ»ով փակեց հաւաքը:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԱԹԱՔԻՈՅ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՀԻՄՆԱԳԻՐՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

## Թղթակից ԼԱԹԱՔԻԱ

Կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Լաթաքիոյ մասնաճիւղի վարչութեան, Ուրբաթ, 26 Նոյեմբեր 2021-ին տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Լաթաքիոյ մասնաճիւղի հիմնադրութեան 95-ամեակի տօնակատարութիւնը, Ս.Օ.Սաչի «Կարպուշեան» սրահին մէջ:

Տօնակատարութիւնը, որուն ներկայ

գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօշկերեան եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային վարչութեան կազմը, սկիզբ առաւ Հ.Մ.Ը.Մ.Ի քայլերգով, Լաթաքիոյ մասնաճիւղի շեփորախումբին կատարողութեամբ: Ապա տեղի ունեցաւ բացումը Լաթաքիոյ մասնաճիւղի վարչութեան կողմէ կազմակերպուած ցուցահանդէսին, ուր ցուցադրուեցան Հ.Մ.Ը.Մ.Ի Լաթաքիոյ մասնաճիւղին մարզական եւ



սկաուտական կեանքը ներկայացնող լուսանկարներ, տարազներ, գրքոյկներ, իրեր եւ սկաուտական զանազան կապերով պատրաստուած ձեռագիրն աշխատանքներ:

Յուցահանդէսին բացման արարողութեան յաջորդեց 95-ամեակի պաշտօնական տօնակատարութիւնը: Բացման խօսք արտասանեց մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Սազօ Քէչէճեան, որ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.Ի եւ յատկապէս Լաթաքիոյ մասնաճիւղին մարզակերտումի եւ հայակերտումի







առաքելութեան, միշտ ուղեցոյց ունենալով Հ.Մ.Ը.Մ-ի «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանը:

Հանդիսութեան բացման պատկերը ներկայացուցին եռագոյն տարազներով հանդէս եկող երեք քոյրեր, որոնք իրենց հեզաճկուն պարով մարմնաւորեցին հայուհիի տիպարը:

Գեղարուեստական յայտագիրով քոյրեր Դուին Նազարեան եւ Մարվին Քէօշկերեան տպաւորիչ կերպով ասմունքեցին Հ.Մ.Ը.Մ-ի նուիրուած բանաստեղծութիւն մը, իսկ եղբ. Եղիա Քիլճեան հայրենաշունչ երգերով խանդավառեց ներկաները:

Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Աւետիս Տէրվիչեան իր խօսքին մէջ լուսարձակի տակ առաւ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան

103-ամեակը եւ Լաթաքիոյ մասնաճիւղին հիմնադրութեան 95-ամեակը եւ այս առիթով ան շնորհաւորեց մասնաճիւղին Հ.Մ.Ը.Մ-ականները եւ գնահատեց անոնց ծաղկուն գործունէութիւնը:

Այս առիթով, եղբայրը յետադարձ ակնարկով մը յիշեց Հ.Մ.Ը.Մ-ի անցնող տարիները, միութեան մարդակերտումի առաքելութիւնն ու նուիրական ծառայութիւնը, շեշտը դնելով մեր ազգային արժէքներուն, հայ դատին եւ հայ ժողովուրդի համագապին իրաւունքներուն վրայ, տեսլական ունենալով Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի կերտումը եւ Արցախի հողերուն վերատիրացումը:

Այնուհետեւ բեմ հրաւիրուեցաւ օրւան բանախօս, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօշ-

կերեան, որ համապարփակ կերպով ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութիւնը եւ անոր փառապանծ անցեալը, հպարտալի ներկան եւ լուսաւոր ապագան: Ապա, ան անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ-ի ծաւալած հարուստ գործունէութեան Լաթաքիոյ մէջ, ուր ազգասէր սերունդներ իրենց հոգեկան անունըը ստացած են, միութեան շարքերէն ներս հասակ առնելով լծուած են ազգային կեանքի գանազան բնագաւառներու ծառայութեան եւ օժանդակութեան աշխատանքին, միշտ ուղեցոյց ունենալով «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանը:

Եղբ. Քէօշկերեան փափաք յայտնեց անցեալի ապրումներով վերականգնել Լաթաքիոյ մասնաճիւղին պատմական ականգութիւնները՝ դայիկ-արծուիկներու, սկառտներու, մարգիկներու եւ երիտասարդներու մասնակցութեամբ խրոխտ շքերթներ կազմակերպելով, որպէսզի գոյատեւելու ապրում ներշնչենք միութեան երթը անձնուիրաբար շարունակող Հ.Մ.Ը.Մ-ականներուն:

Քոյր Յովին Պալեան բեմ բարձրանալով մեծապէս գնահատեց մասնաճիւղին Հ.Մ.Ը.Մ-ականները՝ իրենց կատարած անխոնջ աշխատանքին համար: Ան բեմ հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամը, Սուրբոյ Շրջանային Վարչութեան ատենապետը եւ Լաթաքիոյ մասնաճիւղին ատենապետը՝ 95-ամեակի յուշանուէրով պատուելու գնահատանքի արժանի քոյրերն ու եղբայրները:





Հանդիսութեան աւարտին բեմ հրաւիրուեցան նաեւ Շրջանային Վարչութեան անդամները, որոնց ներկայութեան տեղի ունեցաւ «Մառաշտի» շքանշաններու եւ հաստատագիրներու տուչութիւն՝ Լաթաքիոյ մասնաճիւղի վաստակաշատ հետեւեալ Հ.Մ.Ը.Մ.ականներուն.-

- Եղբ. Մինաս Պալեան
- Եղբ. Մովսէս Կարապետեան
- Եղբ. Նազո Քէշիշեան
- Քոյր Թագուհի Տէօքմէճեան
- Քոյր Սոնա Տէր Դաւիթեան

Իսկ առողջապահական պատճառներով բացակայած հետեւեալ Հ.Մ.Ը.Մ.ականներուն, Կեդրոնական Վարչութեան անդամն ու Շրջանային Վարչու-

թիւնը անձամբ այցելեցին անոնց բնակարանները եւ փոխանցեցին շքանշանները .-

- Եղբ. Զաւէն Գաբրիէլեան
- Եղբ. Նազո Խալոյեան
- Եղբ. Միսաք Մկրտիչեան
- Եղբ. Ժանօ Խոտանեան

Հանդիսութեան աւարտին իր սրտի խօսքը փոխանցեց Լաթաքիոյ եւ ծովափնեայ շրջանի հոգեւոր հովիւ Վազգէն Քհնյ. Քէօշկերեան, որ մեծապէս գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը՝ իր հայակերտումի եւ ազգապահպանման առաքելութեան համար: Ան շնորհակարարեց Հ.Մ.Ը.Մ.ի Լաթաքիոյ մասնաճիւղին քոյրերն ու եղբայրները՝ մասնաճիւղին հիմնադրութեան 95-ամեակին առիթով, մաղթելով բարեյաջող երթ եւ լուսաւոր ամեակներ, ապա «Պահպանիչ»ով փակեց օրուան հանդիսութիւնը:

Հանդիսութեանէն ետք, ընտանեկան ջերմ մթնոլորտի մէջ, Հ.Մ.Ը.Մ.ականները եղբայրական սիրոյ սեղանի շուրջ իրենց ուրախութիւնը շարունակեցին «Մանուկը» ճաշասրահին մէջ:



### Թղթակից ՅԱԼԵՊ

Հ.Մ.Ը.Մ.ի Հայէպի մասնաճիւղի Սկառու. խորհուրդը կազմակերպեց խմբապետական եւ աստիճանաւորական կազմերու միամսեայ սեմինար մը, որ Նոյեմբեր 2021-ին տեղի ունեցաւ «Սիմոն Վրացեան» կեդրոնէն ներս:

Այս առիթով ներկայացուեցան կազմակերպչական, դաստիարակչական եւ կանոնադրային բնոյթի հետեւեալ նիւթերը.-





## ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԻԱՄՍԵԱՅ ՍԵՄԻՆԱՐ

- 4 Նոյ. 2021- «Դաստիարակչական ծրագրի պատրաստութիւն»՝ քոյր Նայիրի Ազարիկեան-Արոյեան:
- 5 Նոյ. 2021- «Ազգային դաստիարակութիւն»՝ Ներսէս Պարսումեան:
- 11 Նոյ. 2021- «Շրջապատի հետ յարաբերութիւն»՝ Մարգրիտ Շամբեան:
- 12 Նոյ. 2021- «Ատենագրութիւն եւ արխիւային աշխատանք»՝ քոյր Լիզա Լալէեան:

- 18 Նոյ. 2021- «Աստիճանաւորական եւ խմբապետական ժողովներու կարեւորութիւնը»՝ եղբ. Յովիկ Հապէշեան:
  - 19 Նոյ. 2021- «Հ.Մ.Ը.Մ-ի կառույցը եւ վարչական պարտականութիւններ»՝ եղբ. Աւետիս Տէրվիշեան:
- Լիայոյս ենք, որ սեմինարը մասնակիցներուն առիթ մը ընծայեց ամրապընդելու իրենց գիտելիքները, որպէսզի զանոնք ի սպաս դնեն միութեան վերելքին:



## Հ.Մ.Ը.Մ-Ի ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ԱՍՏԻՃԱՆԱԻՈՐԱԿԱՆ ԵՐԿՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐԸ

### Թղթակից ԴԱՄԱՍԿՈՍ

Հ.Մ.Ը.Մ-ի Դամասկոսի մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդին կազմակերպութեամբ, 11-12 Նոյեմբեր 2021-ին, Սէյտնայայի մէջ տեղի ունեցաւ աստիճանաւորական երկօրեայ բանակում, մասնակցութեամբ 18 քոյր-եղբայրներու: Բանակումին յայտագիրը ընդգրկեց դասախօսութիւններ, զրոյցներ, խաղեր եւ երգի ուսուցում: Մասնաճիւղի նախկին խմբապետ եղբ. Յակոբ Խաճարեան

սկաուտներուն սորվեցուց ինքնապաշտպանութեան զանազան միջոցներ: Իսկ Սկաուտ. Խորհուրդի անդամ եղբ. Յովիկ Պալապանեան ներկաներուն բացատրեց, թէ ի՞նչպէս կարելի է հետաքրքրական ձեւերով սկաուտներուն եւ գայլիկներուն գիտելիքներ փոխանցել: Աւարտին, քոյր Արին Քիւրտեան, եղբայրներ Գէորգ Կուսիկեան, Մայք Խարպուլթի եւ Միսաք Թեմիզճեան արժանացան Փոխ Առաջնորդի աստիճանին, իսկ քոյր Դալար Յովսէփեան ստացաւ Աքելլայի պաշտօն:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՄԱՍՆԱԾԻՒՂԸ ՄԻՕՐԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՄԲ ՆՇԵՑ «ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻ ՕՐ»Ը

**Կ**իրակի, 6 Մարտ 2022-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Հայկյի մասնաճիւղի սկաուտները, Հ.Մ.Ը.Մ.ի պարտէզին մէջ կատարուած միօրեայ գործունէութեամբ մը նշեցին «Հայ սկաու-

տի օր»ը, մասնակցութեամբ 168 քոյր-եղբայրներու:

Օրուան յայտագիրը սկիզբ առաւ դրօշակի արարողութեամբ: Յաջորդաբար տեղի ունեցան խմբային դրուժիւն,

դանիական մարզանք եւ նախաճաշ: Մասնաճիւղի խմբապետ եղբ. Յակոբ Ուրիշիկեան ներկաներուն դասախօսեց միջազգային սկաուտութեան հիմնադրութեան մասին:

«Հայ սկաուտի օր»ուան առիթով, սկաուտները Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին ընկերակցութեամբ տողանցեցին Փոլիթպոլի դաշտին մէջ: Տողանցքին ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօզկերեան, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութիւնը, Շրջանային Սկաուտ-Խորհուրդն ու խմբապետութիւնը, Հայկյի մասնաճիւղի վարչութեան ներկայացուցիչները եւ Սկաուտ-Խորհուրդը: Տողանցքի աւարտին տեղի ունեցաւ Նորագիրի վկայականաց բաշխում՝ ձեռամբ մասնաճիւղի խմբապետ եղբ. Յակոբ Ուրիշիկեանի:



Յայտագիրին յաջորդ կէտերն էին ձեռային աշխատանք, ճաշ, հարց-պատասխանի մրցում եւ երգի ուսուցում: Սկաուտ-խորհուրդի հովանաւորութեամբ տեղի ունեցաւ Նորընծայի եւ Բ. կարգի վկայականաց բաշխում:

Աւարտին, սկաուտները ազգային-հայրենասիրական երգեր երգեցին եւ վերանորոգեցին իրենց դաւանանքին հաւատարիմ մնալու խոստումը:

Գործունէութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:



# «ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻ ՕՐ»ՈՒԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄՏԵՐՄԻԿ ԸՆԹՐԻՔ՝ ՀԱԼԵՊԻ ՄԷՉ

**Ն**ախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ Շրջանային Սկաուտ- խորհուրդին, Հինգշաբթի, 24 Փետրուար 2022-ին, «Տիգրանեան» պարտէզի «Սահակ Նալպանտեան» սրահին մէջ տեղի ունեցաւ «Հայ սկաուտի օր»ուան նըւերուած մտերմիկ ընթրիք, ներկայութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօշկերեանի, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան, Հայկալի մասնաճիւղի վարչութեան եւ Սկաուտ- խորհուրդին, ինչպէս նաեւ խմբապետութեան եւ վեթերան Հ.Մ.Ը.Մ-ականներու:

Բացման խօսքով հանդէս եկան Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ Շրջանային խմբապետ եղբ. Բաֆֆի Սիւլահեան եւ խմբապետուհի քոյր Նաթալի Թաթոսեան-Հապէշեան: Անոնք նշեցին, որ 104 տարիէ ի վեր ի սփիւռս աշխարհի տարածուած Հ.Մ.Ը.Մ-ի դերը մեծ է հայ ազգին, մանաւանդ զաղթածախներու ազգային դիմագիծը կերտելու աշխատանքին մէջ: Անոնք շեշտեցին, որ «Հայ սկաուտի օր»ը ո՛չ միայն ուրախութեան եւ ցնծութեան օր է, այլեւ՝ Վարդանանց հերոսներու յիշատակութեան եւ սկաուտական սկզբունքներուն հաւատարիմ մնալու ուխտի վերանորոգման առիթ է:

Ապա, յայտագիրը ճոխացնելու համար, անոնք հրաւիրեցին Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ Շրջանային Սկաուտ- խորհուրդի հրատարակչական յանձնախումբը, որ պատրաստած էր յատուկ խաղեր:



Նախքան աւարտը, խօսք առաւ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօշկերեան եւ շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ-ի աշխարհասփիւռ բոլոր մասնաճիւղերը, մատնանշելով, որ այս օրը եզակի է, որովհետեւ ան կը զուգադիպի Վարդանանց հերոսամարտին: Ան ընդգծեց Հ.Մ.Ը.Մ-ի նշանաբանը՝ «Բարձրացիր-բարձրացուր»ը եւ անոր վեհ իմաստը: Ապա, ան յիշեց ննջեցեալ Հ.Մ.Ը.Մ-ականները, որոնք իրենց առողջ դաստիարակութեամբ միութեան դրօշը փոխանցեցին ներկայ սերունդին:

## «ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻ ՕՐ»ՈՒԱՆ ՆՇՈՒՄ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՉ

«Հայ սկաուտի օր»ը Հ.Մ.Ը.Մ-ի Դամասկոսի մասնաճիւղի արիներն ու արենոյճները նշեցին Շաբաթ, 5 Մարտ 2022-ին:



Այս առիթով անոնք ներկայացուցին գաւեշտ, բուրգեր եւ խաղեր: Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Պօղոս Խաճարեան սկաուտներուն ներկայացուց «Հայ սկաուտի օր»ուան մասին դասա-

խօսութիւն, որմէ ետք տեղի ունեցաւ տեսերիզի ցուցադրութիւն: Տեսերիզը ընդգրկեց մասնաճիւղի 2021 տարուան սկաուտական աշխատանքները:



# «ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻ ՕՐ»Ը ՔԵՍԱՊԻ ՄԷՋ

**Հ**ովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Քեսապի մասնաճիւղի վարչութեան, կազմակերպութեամբ մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդին եւ խմբապետական կազմին, Շաբաթ, 5 Մարտ 2022-ին, «Միմոն Զաւարեան» կեդրոնին մէջ տեղի ունեցաւ «Հայ սկաուտի օր»ուան միօրեայ գործունէութիւն:

Գործունէութիւնը սկիզբ առաւ «Ով հայ արի» քայլերգով: Օրակարգը ընդգրկեց մարզանք, դասախօսութիւն, դիւանային աշխատանք, ճաշ, ընդհանուր զարգացման մրցում, սկաուտական կապերու ուսուցում, չափական-ռիթմիկ մարզանքի ուսուցում, երգման արարողութիւն եւ վկայականաց բաշխում:



Աւարտին, իւրաքանչիւր սկաուտ ստացաւ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ Շրջանային վարչութեան եւ Շրջանային Սկաուտ. Խորհուրդին կողմէ «Հայ սկաուտի օր»ուան առիթով պատրաստուած յուշանուէրը:

Գործունէութիւնը երկարեցաւ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ երեկոյեան ժամը 5:



**Չ**որեքշաբթի, 24 Նոյեմբեր 2021-ի յետմիջօրէին, Հայկապի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ յուղարկաւորութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ-ի «Ծառայութեան» շքանշանակիր, վաստակաշատ երէց եղբայր Յարութ Մաւեանի, որ իր մահկանացուն կնքեց նոյն օրը:

Եղբ. Յարութ Մաւեան անդամակցած է Հ.Մ.Ը.Մ-ի Բաթումի, վոլիպոլի եւ ֆութպոլի խումբերուն: Ան տարիներ շարունակ եղած է ֆութպոլի յանձնախումբի ատենապետ:

Եղբ. Յարութ մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ-ի ընտանեկան պարտէզի յանձնախումբին եւ միջ-մասնաճիւղային տողանցքներու կեդրոնական յանձնախումբին:

Միութեան 75-ամեակին, իր անսակարկ ծառայութեան համար, ան պարգեւատրուած է Հ.Մ.Ը.Մ-ի «Ծառայութեան» շքանշանով:



## ԵՂԲ. ՅԱՐՈՒԹ ՄԱՒԵԱՆԻ ՎԵՐՁԻՆ ՀՐԱԺԵՇՏԸ

Եղբոր թաղման արարողութեան նախագահեց Բերիոյ հայոց թեմի Առաջնորդ Մասիս Եպս. Զօպուեան: Ներկայ էին Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօշկերեան, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ Շրջանային վարչութեան անդամներ, գլխաւորութեամբ ատենապետ եղբ. Աւետիս Տէրվիչեանի, Շրջանային Սկաուտ. Խորհուրդը, Հ.Մ.Ը.Մ-ի Հայկապի մասնաճիւղի վարչութիւնը, Սկաուտ. Խորհուրդը, խմբապետական, աստիճանաւորական կազմերը եւ սկաուտները: Ներկայ էր նաեւ պատկան մարմինի անդամ եղբ. Արտո Փայասեան:

Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին անուսով դամբանական ընթերցեց Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ Շրջանային վարչութեան անդամ եղբ. Յովիկ Սիւլահեան (դամբանականը տեսնել էջ 80), որ վեր առաւ հանգուցեալ եղբոր երկար տարիներու միութեանական վաստակը, վեհանձն նկարագիրը եւ օրինակելի վարքը:

Շրջանային վարչութեան կողմէ հանգուցեալին ընտանիքին յանձնուեցաւ դազաղը ծածկած Հ.Մ.Ը.Մ-ի դրօշը:

Խոնկ եւ աղօթք եղբոր հոգիին: Յիշատակը անթառամ մնայ Հ.Մ.Ը.Մ-ական սերունդներուն մէջ:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ 42-ՐԳ ԺՈՂՈՎԸ

**12**-14 Նոյեմբեր 2021-ի շաբաթավերջին գումարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Ներկայացուցչական 42-րդ ժողովը: Շրջանային Ներկայացուցչական ժողովը կը գումարուի իւրաքանչիւր Շրջանային Վարչութեան աշխատանքային շրջանի աւարտին:

Ժողովին մասնակցողները ըստ էութեան քննարկեցին եւ իրենց գնահատականը տուին ընթացաւարտ Շրջանային Վարչութեան գործունէութեան եւ կարգ մը կարեւոր բանաձեւեր վաւերացուցին նորընտիր Շրջանային Վարչութեան ապագայ գործունէութեան գծով:

Ժողովի վերջին օրակարգով, 2021-2023 երկամեակի աշխատանքային ժամանակաշրջանին համար Շրջանային Վարչութեան անդամ ընտրուեցան հետեւեալ քոյր-եղբայրները.- Յակոբ Թիւֆէնքճեան, Սեւակ Կարապետեան, Սիւզի Օհանեան, Սիրան Մարսէլեան, Փիէր Մանուկեան, Հրաչ Գալուստեան, Թալին Ղազարեան, Անիթա Տէրաէրեան, Ռուբինա Մանուչերի,

Թամար Գրիճեան եւ Փօլ Պաշգապազեան:

16 Նոյեմբեր 2021-ի երեկոյեան, Շրջանային Ներկայացուցչական 42-րդ ժողովի դիւանը նորընտիր Շրջանային Վարչութեան կազմին հետ գումարեց ժողով մը, որուն ընթացքին դիւանի անդամ ընտրուեցան հետեւեալ քոյր-եղբայրները.- եղբ. Յակոբ Թիւֆէնքճեան՝ ատենապետ, եղբ. Սեւակ Կարապետեան՝ փոխ ատենապետ, քոյր Սիւզի Օհանեան՝ քարտուղար, քոյր Սիրան Մարսէլեան՝ դանձապահ:

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւնը մեծ ակնկալութիւններով կը դիմագրաւէ իր



աշխատանքային երկամեակը, որպէսզի լաւապէս առաջնորդէ իր շրջանը եւ համայնքը, այն հաստատ համոզումով, որ պիտի յաղթահարէ իր դէմ ցցուած մարտահրաւէրները, ինչպիսին է քորոնան եւ հանրութեան պիտի ներկայացնէ ծրագիրներ ու աշխատանքներ, ինչպիսին են՝ Նաւասարդեան 45-րդ մարզախաղերը եւ փառատօնը, Շրջանային սկսուողական ճամպորին, համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը եւ շատ աւելին:





## Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ 44-ՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

### Թղթակից ՆԻԻ ԵՈՐՔ

**Հ**.Մ.Ը.Մ.Ի Արեւելեան Մ. Նահանգներու 44-րդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովը տեղի ունեցաւ 5-7 Նոյեմբեր 2021-ին, Նիւ Եորքի Ս. Սարգիս եկեղեցւոյ սրահին մէջ:

Ժողովին պաշտօնական բացումը կատարուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով: Հ.Մ.Ը.Մ.Ի քայլերգէն ետք, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Արամ Գալսէրեան ժողովը բացւած յայտարարեց: Ապա, յաջորդաբար խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Ժան Գլոտ Վարդանեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Վահէ Թանաշեան եւ թեմի Առաջնորդ Անուշաւան Արք. Դանիէլեան:

Ժողովը մէկ վայրկեան յոտնկայ լուծեամբ յարգեց 2020-ի Արցախեան պատերազմին նահատակուած Հ.Մ.Ը.Մ.Ի եղբայրներուն, ինչպէս նաեւ Յունուար 2021-ին մահացած Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեա-

նին յիշատակները, որմէ ետք Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Նարեկ Քհնյ. Թրթռեան օրհնեց ժողովը՝ յաջող ընթացք առնելու համար:

Ժողովի մեկնարկին ներկայ էին շրջանի տասը մասնաճիւղերէն ութին ներկայացուցիչները՝ Պոսթընէն, Շիքակոյն, Տիլթրոյթէն, Նիւ Ճըրզիյէն, Նիւ Եորքէն, Ֆիլատելֆիայէն, Փրովիտընսէն եւ Ուաշինկթընէն, ինչպէս նաեւ երկու միաւորներու ներկայացուցիչներ՝ Շարլոթէն եւ Մէրիմաք Հովիտէն:

Ժողովին տեւողութեան, իրենց մասնակցութիւնը բերին եւ խօսքեր արտասանեցին Հ.Ե.Դ. Կեդրոնական Վարչութեան Սիբիան Օհանէսեան, ՀՕՄ-ի Շըր-

ջանային Վարչութեան՝ Թալին Տաղըեան, ինչպէս նաեւ Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէէն Խաթակ Մկրտիչեան եւ Վարտ Աթախանեան:

Լիազօրագիրներու յանձնախումբի զեկոյցէն եւ ժողովի օրինականութեան հաստատումէն ետք, ժողովը ընտրեց իր գլխաւոր՝ ատենապետներ Յակոբ Խաչատուրեան եւ Ճորճ Պարամագեան, իսկ ատենադպիրներ՝ Վահէ Անտոնեան եւ Մկրտիչ Արսլանեան: Այնուհետեւ ընտրուեցան բանաձեւի, քուէախոյզի եւ արխիւային յանձնախումբերու անդամները:

Իւրաքանչիւր մասնաճիւղ եւ միաւոր ներկայացուց իր երկամեայ գոր-





ծունկնելով սեղեկագիրը, ինչ որ երկար ու շինիչ քննարկման նիւթ հանդիսացաւ:

Ժողովին երկրորդ նիստը շարունակւեցաւ 6 Նոյեմբերի առաւօտեան, Շրջանային Վարչութեան նիւթաբարոյական տեղեկագիրներու ընթերցումով, որուն յաջորդեցին հարցեր եւ քննարկումներ՝ Շրջանային Վարչութեան գործունէութեան շուրջ:

Շրջանային Վարչութեան գործունէութեան նկատմամբ իր գնահատականը ներկայացնելէ առաջ, արխիւային եւ հաշուեքննիչ յանձնախումբերը ներկայացուցին իրենց բանաձեւերը: Ապա, ժողովը «Գնահատելի» նկատեց ընթացաւարտ Շրջանային Վարչութեան գործունէութիւնը:

Ժողովը քննարկեց սկստական ներքին կանոնադրին համար առաջարկուած բարեփոխումները եւ կատարեց անհրաժեշտ փոփոխութիւնները:

Երկրորդ օրուան օրակարգին մնացեալ բաժինը յատկացուած էր մարզական կեանքին առնչուող հարցերու եւ ապագայ խաղերու վերաբերեալ ծրագիրներու քննարկման եւ մարզական խումբերու ձեւաւորման:

Այս քննարկումները կ'ընդգրկէին 2022-ին Պոսթընի մէջ տեղի ունենալիք Նաւասարդեան խաղերը, Նաւասարդեան խաղերու հովանաւորութիւնն ու ծանուցումները, 2023-ի, 2024-ի եւ 2025-ի Նաւասարդեան խաղերու հիւրընկալման հաւանական վայրերը, ինչպէս նաեւ 2022-ին կայանալիք համա-Հ.Մ.-Լ.Մ.ական խաղերը (յետաձգուած 2021-էն՝ համաճարակի պատճառով):

Ժողովի մարզական բաժնի աւարտին, պատգամաւորները քուէարկեցին եւ ընդունեցին մարզական թեւին վերաբերող որոշումները:

Այսպէսով երկրորդ օրուան նիստը հասաւ աւարտին, որմէ ետք հիւրընկալ Նիւ Եորքի մասնաճիւղը ընթրիք մը կազմակերպեց «Սեւան» ճաշարանին մէջ, առիթը տալով ներկայացուցիչներուն եւ հիւրերուն ամրապնդելու իրենց փոխադարձ կապերը:

7 Նոյեմբերի առաւօտեան, ամփոփ օրակարգով պատգամաւորները սկսան սկստական նիւթերու քննարկումներու, որոնք ընդգրկեցին Շրջանային



Սկստական Խորհուրդի յառաջիկայ աշխատանքներն ու նախաձեռնութիւնները, ինչպէս՝ 2022-ի Շրջանային սկստական բանակումը Նիւ Ճըրզի մէջ, 2023-ի, 2024-ի եւ 2025-ի բանակումներու հաւանական վայրերը եւ 2023-ին Հայաստանի մէջ կայանալիք համա-Հ.Մ.-Լ.Մ.ական բանակումը, ինչպէս նաեւ՝ շրջանի սկստական բաժնին վերաբերող հարցեր եւ ծրագիրներ:

Հարկ է յիշել, թէ ժողովներուն իրենց մասնակցութիւնը բերին 15 տարագաւոր սկստներ՝ ողջունելի եւ շրջանին համար ապագայ խոստացող պատկեր մը:

Նկատի ունենալով, որ Հ.Մ.-Լ.Մ.ը ջանքեր կատարեց զարգացնելու համար իր առցանց ներկայութիւնը եւ դիմեց անոնց, որոնք միութեան մաս չեն կազմեր, օրակարգին մէջ տեղ գտած էին նաեւ տեղեկատուական արհեստագիտութեան եւ քարոզչական աշխատանքներու յատուկ բաժիններ: Քննարկումները ընդգրկեցին շրջանին կայքէջը, ընկերային լրատուամիջոցները, զանազան հրատարակութիւններու խմբագրութիւններու հետ յարաբերութիւնները, ինչպէս՝ «Հայրենիք», «Արմինիոն Ուիքի», եւ Հ.Մ.-Լ.Մ.ի «Մարզիկ» պաշտօնաթերթ:

Պատգամաւորները քննարկեցին նաեւ 2022-ին եւ 2023-ին համար նախատեսուած օրացոյցները, ինչպէս նաեւ ցանկացած ու չնախատեսուած այլ հարցեր եւ ծրագիրներ:

Ժողովի աւարտին, օրակարգի տրեստական բաժնին ընդմէջէն, ժողովը որոշեց յառաջիկայ երկամեակի նախահաշիւին վերջնական ձեւակերպումը, հիմնուելով ժողովի որոշումներուն եւ շրջանի յառաջիկայ ծրագիրներուն եւ առաջարկներուն վրայ: Օրուան երկար քննարկումներէն ետք, ժողովը հասաւ օրակարգի վերջին բաժնին՝ յառաջիկայ Շրջանային Վարչութեան ընտրութեան: Կատարուեցաւ քուէարկութիւն, որմէ ետք քուէախոյզ յանձնախումբը յայտարարեց 2021-2023 երկամեակի Շրջանային Վարչութեան անդամներուն անունները՝ եղբայրներ Վահէ Անտոնեան (Նիւ Եորք), Ճորճ Պարամագեան (Պոսթըն), Մայք Տէմիթեան (Շիքսօ), Նիկոլ Քէօքիւնեան (Ուաշինկթըն), Վիգէն Խաչատուրեան (Պոսթըն), Քրիս Գրիգորեան (Փրովիտընս) եւ քոյր Թամար Սամուէլեան (Նիւ Ճըրզի):

Դիւանը իր փակման խօսքին մէջ շնորհակտեց եւ դրուատեց երիտասարդ ներկայացուցիչներուն եւ հիւրերուն մասնակցութիւնը, մասնաւորապէս իրենց ցուցաբերած աշխոյժ եւ եռանդով լեցուն ոգիին համար:

Եզրափակիչ խօսքերով հանդէս եկան Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի եւ Հ.Մ.-Լ.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանի ներկայացուցիչները, ինչպէս նաեւ Հ.Մ.-Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Վահէ Թանաչեան:



## Հ.Մ.Ը.Մ.Ի ՓՐՈՎԻՏԸՆՍԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ 40-ԱՄԵԱԿԻ ՇՔԵՂ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

### Թալին Տօնոյեան ՓՐՈՎԻՏԸՆՍ

**Հ**ՄԸՄ-ի Փրովիտընսի մասնաճիւղի հիմնադրութեան 40-ամեակը մեծ խանդավառութեամբ տօնակատարուեցաւ ճաշկերոյթ-պարահանդէսով մը, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 4 Դեկտեմբեր 2021-ի երեկոյեան, Փրովիտընսի Ս. Սահակ եւ Մեսրոպ եկեղեցոյ «Եկաւեան» սրահին մէջ, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահէ Թանաշեանի, Հ.Մ.Ը.Մ-ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վար-

չութեան ատենապետ եղբ. Վիգէն Խաչատուրեանի, Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան մարզական պատասխանատու եղբ. Քրիստափոր Գրիգորեանի, Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային սկսողական ընդհանուր խմբապետ եղբ. Յարութ Թաշեանի, ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ Թալին Մկրտիչեանի, ՀԵԴ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ Նարեկ Մկրտիչեանի, հոգեւոր հովիւներ՝ Վերապատուելի Յակոբ Մանճեկիբեանի, Շնորհք Քհնյ. Սուրբ Ս. Վարդանանց եկեղեցոյ հոգաբարձութեան ատենապետ Ճէյսըն Սիմոնեանի եւ գաղութի քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն:

Մօտ 160 Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ համակիրներու ներկայութեան, երեկոն բացուեցաւ սկսողական շփորախումբի եւ դրօշակակիրներու տողանցքով, որմէ ետք յաջորդաբար երգուեցան ամերիկեան, հայկական եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգները, կատարողութեամբ եղբ. Ռոստոմ Մկրտիչեանի եւ քոյր Թալին Տօնոյեանի: Հոգեւոր հայրերու օրհնութենէն ետք, ներկաները մէկ վայրկեան յօտնկալ լուծութեամբ յարգեցին յիշատակը մասնաճիւղի հանգուցեալ հիմնադիրներուն եւ անդամներուն:

Օրուան հանդիսավարներն էին եղբ. Կարօ եւ քոյր Կալին Թաշեան: Տօնակատարութեան ընթացքին, մեծ պաստառի մը վրայ շարունակաբար ցուցադրուեցաւ մասնաճիւղի սկսողական խմբապետ եղբ. Մկրտիչ Արսլանեանի եւ փոխ խմբապետ քոյր Անահիտ Տօնոյեանի կողմէ պատրաստուած սահիկներու հաւաքածոն, որ կը ներկայացնէր մասնաճիւղին անցնող 40 տարիներու բեղուն գործունէութիւնը:

Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչատուրեան փոխանցեց մասնաճիւղին շնորհաւորական խօսքը: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ի Փրովիտընսի մասնաճիւղի հիմնադիրներուն երազները





իրականացան այս օտար ափերու հայ փոքրերը դաստիարակելով «առողջ միտքը առողջ մարմինի» մէջ սկզբունքով, ամրապնդելով հայաշունչ խոհարարները իրենց հոգիներուն եւ սրտերուն մէջ: Եղբ. Խաչատուրեան շնորհակալութիւն յայտնեց Ս. Վարդանանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւին, հոգաբարձութեան, քոյր կազմակերպութիւններուն, Հ.Մ.Ը.Մ.ի անդամներուն եւ համակիրներուն՝ իրենց շարունակական քաջաբերանքին եւ աջակցութեան, մանաւանդ՝ 40-ամեակի յուշամատեանի շնորհաւորական մաղթանքներուն եւ նիւթական օժանդակութեան համար:

Այս առիթով մասնաճիւղին վարչութիւնը յուշանուէրով պարգեւատրեց հետեւեալ գործօն երիտասարդ քոյրերն ու եղբայրները, գնահատելով անոնց յարատեւ նուիրումն ու անխոնջ աշխատանքը՝ քոյրեր Սիրան Գրիգորեան,

Թալին Պաղտասարեան, Այտա Արսլանեան, եղբայրներ Հրանդ Խաչատուրեան, Մայքի Արսլանեան, Կարօ Թաշեան եւ Բաֆֆի Ռշտունի:

Յաջորդ խօսք առնողը եղաւ Երջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վիգէն Խաչատուրեան, որ շնորհաւորեց Փրովիտընսի մասնաճիւղը, գնահատելով վարչութեան, Սկստակաւ Խորհուրդի, մարզական եւ ընկերային յանձնախումբերուն կատարած աշխատանքները 40 տարիներու ընթացքին: Այս առիթով, ան Երջանային Վարչութեան կողմէ «Ծառայութեան» շքանշանով պարգեւատրեց մասնաճիւղի տասնեակ տարիներու նուիրեալ հետեւեալ անդամները՝ քոյրեր Մանուշակ Գրիգորեան, Մարալ Խաչատուրեան, եղբայրներ Քրիստափոր Գրիգորեան, Սարգիս Դարբինեան, Յարութ Թարաքսեան, Համազասպ Ռըշտունի եւ Յակոբ Տօնոյեան:

Յայտագիրի աւարտին, Ուաշինկթընէն ժամանած՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահէ Թանաշեան փոխանցեց իր խօսքը: Ան շնորհաւորեց Փրովիտընսի մասնաճիւղին պարգեւատրեալ անդամները, աւելցնելով, թէ անոնք անսակարկ նուիրումով պիտի շարունակեն իրենց հայապահպանման առաքելութիւնը եւ ներշնչեն ապագայ սերունդները գոյատեւելու իբրեւ նկարագիրով վսեմ Հ.Մ.Ը.Մ.ականներ: Ան շեշտեց, որ այժմ համաճարակը եւ պատերազմը իրենց բացասական ազդեցութիւնը ունեցան Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր աշխատանքներուն վրայ, սակայն երբեք չնուազեցուցին հայ ազգին ծառայելու մեր պատրաստակամութիւնը եւ կամքը: Եղբ. Թանաշեան եզրակացուց, որ այս երեւոյթը կը պարտինք երեք հիմնական ազգակի՝ Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաբանութեան, անդամներու անսակարկ ծառայելու պատրաստակամ ոգիին եւ համակիրներու ցուցաբերած անվարան օժանդակութեան:

Խօսքերէն ետք, երգիչ Կարօ Թորոսեան եւ իրեն ընկերակցող Վիգէն Մաքուշեան ճոխ մթնոլորտ մը ստեղծեցին մինչեւ ուշ ժամեր: Աւարտին, ներկաները վայելեցին ազգային-յեղափոխական երգերու շարք մը, ու ոգեւորուած մեկնեցան, Հ.Մ.Ը.Մ.ի յաղթական երթը շարունակելու վճռակամութեամբ:





## Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԻ 45-ՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Թամար Շահինեան  
ՍՈՆԹՐԷԱԼ

**23**-24 Հոկտեմբեր 2021-ի շաբաթավերջին, Մոնթրեալի «Հայկ Մարզարեան» մարզարահին մէջ գումարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի շրջանի 45-րդ Ներկայացուցչական Ժողովը: Ներկայ էին Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ՝ եղբ. Մոսիկ Թոփուզեան, Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի անդամ Սարգիս Քէօսէեան, ՀՕՄ-ի եւ Համազգայինի Գանատայի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներ

Ազգանուշ Հատիտեան եւ Թամար Շահինեան, ինչպէս նաեւ՝ Մոնթրեալի մասնաճիւղէն 10, Թորոնթոյէն՝ 10, Սէնթ Գաթրինգէն՝ 4, Գէմպրիճէն՝ 9, Լաւալէն՝ 9 եւ Վանքովըրէն 2 քոյրեր ու եղբայրներ, ընդհանուր՝ լիազօր ձայնով մասնակցողներուն թիւն էր 46:

Ժողովին բացումին, ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լռութեամբ յարգեցին յիշատակը մեզմէ առյաւէտ բաժնուած Արցախի հերոսներուն, Կեդրոնական Վարչութեան նախկին ատենպետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանին, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմանտո Թորգոմեանին եւ նախկին

անդամ եղբ. Մանուէլ Հայրապետեանին: Ժողովին իր սրտին խօսքը փոխանցեց Թեմի Առաջնորդ Բաբգէն Արք. Չարեան: Ան յատկապէս շեշտը դրաւ հաւաքական աշխատանքի կարեւորութեան վրայ, ըսելով, որ պէտք է միասին մտածել եւ ապագան ծրագրել՝ կերտելու համար առողջ մարմինի եւ ազնիւ հոգիի տէր Հ.Մ.Ը.Մ.ականներ:

Ներկայացուցչական ընթացաւարտ Շրջանային Վարչութեան 2019-2021 երկամեակի գործունէութեան բարոյական եւ նիւթական տեղեկագիրները, որոնց յաջորդեցին Սկառուտ. Խորհուրդի եւ մարզական յանձնախումբի տեղեկագիրները: Հակառակ համաճարակի դժուար պայմաններուն, Շրջանային Վարչութիւնը նոր միջոցներ որոնելով, աշխոյժ գործունէութիւն վարած էր մասնաճիւղերուն հետ, զանոնք միշտ միութեան կառչած պահելու նպատակով: Ժողովը մասնաւորաբար բարձր գնահատեց Արցախի ի նպաստ կատարած հանգանակութեան արշաւը, որուն շնորհիւ կարելի եղած էր հաւաքել աւելի քան 200 հազար տոլար: Հետեւաբար, ներկաները «Յոյժ գնահատելի» նկատեցին ընթացաւարտ Շրջանային Վարչութեան գործունէութիւնը:



Ընդհանուր առմամբ, ժողովը իր ընթացիկ օրակարգը քննարկեց սկստական, մարզական եւ կազմակերպչական գլուխներու տակ: Բանաձեւեր որդեգրուեցան միջ-մասնաճիւղային եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներու մասին, ինչպէս նաեւ՝ մարզախաղերու նոր օրէնքներու եւ յառաջիկայ թուականներու եւ վայրերու շուրջ: Քննարկուեցան նշանակներու տուչութեան օրէնքները՝ «Վկայեալ» կարգի, «Արարատեան» կարգի եւ Ազգային Առաջնորդարանի «Ղեւոնդ Երէց» կրօնական դասընթացքի: Որոշուեցաւ մեծ շուքով եւ համագործակցին տարողութեամբ պատշաճօրէն նշել «Մարգրիկի օրը»՝ Հ.Մ.Ը.Մ.ի իւրայատուկ ձեռնարկը, յառաջիկայ 22 Յունիսին:



2021-2023 երկամեակին համար նոր Շրջանային Վարչութիւն ընտրեց հետեւեալ կազմով.՝ քոյրեր-եղբայրներ՝ Սօսի Տայեան, Արպի Ղազարեան, Բաֆֆի Գոյումճեան Մոնթրէպլէն, Բաֆֆի Հատրտեան Լաւալէն, Հրաչ Նաճարեան, Անդօ Պոյաճեան Թորոնթոյն եւ Լիոնի Սարմազեան՝ Գէմպրիճէն:

Երկօրեայ ժողովը աւարտեցաւ հիւ-

րերու, Կեդրոնական Վարչութեան, Կեդրոնական Կոմիտէի, նախկին Շրջանային Վարչութեան ատենապետին եւ կարգ մը մասնակիցներու սրտի խօսքերով: Ժողովի ղեւանին կողմէ շնորհակալական յատուկ խօսք փոխանցուեցաւ ՀՕՄ-ի Մոնթրէպլի «Սօսէ» եւ Լաւալի «Շուշի» մասնաճիւղերու վարչութիւններուն, երկօրեայ ճաշերու սպասարկման համար:

Ներկաները շնորհաւորեցին նորակազմ վարչութեան անդամները, յուսարով որ անոնք աւելի լաւ պայմաններով բեղուն տարեշրջան մը կը բոլորեն եւ «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանով զինուած՝ կը շարունակեն հայապահպանման, ազգային եւ կրօնական արժէքներու պաշտպանութեան իրենց նուիրական առաքելութիւնը:

## Հ.Մ.Ը.Մ.Ի «ՎԿԱՅԵԱԼ» ԿԱՐԳԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ ԳԱՆԱՏԱՅԻ ՄԷՋ

### Թղթակից ԹՈՐՈՆԹՕ

«Վկայեալ» կարգը Հ.Մ.Ը.Մ.ի սկստական կարգերէն մէկն է: Այս կարգին կ'արժանանան այն թեկնածուները, որոնք կրնան «բաւարար գիտելիքներով ստանձնել սկստական խմբաւորումի մը ղեկավարումը: Կարգի թեկնածուն հարկ է ինքնաշխատութեամբ, գործօն մասնակցութեամբ եւ փորձարկումով կարենայ գործադրել իր ստացած բոլոր նիւթերը:

«Վկայեալ» կարգի նիւթերը կը կազմեն միութենական, ազգային, սկստական, քաղաքացիական, հոգեբանական եւ կրօնական գիտելիքները:

Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Սկստական Խորհուրդը 2021-ին կազմակերպեց «Վկայեալ» կարգի աշխատանք: Թորոնթոյի մասնաճիւղէն կարգին մասնակցեցան 15 քոյրեր եւ եղբայրներ, որոնք յաջողութեամբ աւարտեցին իրենց աշխատանքը:

Արդարեւ, 7 Նոյեմբեր 2021-ին տեղի ունեցաւ կարգին



բաշխումը: «Վկայեալ» կարգ ստացան քոյրեր Ատրինէ Արթին, Արազ Տէր Օհան, Աննա Մուլթաֆեան, Թիթեո Քարկոցեան, Նարօտ Տիշոսիփ, Բալիկ Մուրատեան, Մարալ Տէր Օհան, Լորա Տոնոյեան, Սիէնա Մարկոբեան, Նաթալի Մալաքեան, եղբայրներ Տարօն Տէրտէրեան, Էտվին Երիցեան, Քրիստ Մերճանեան, Ճորճ Պիլուս եւ Հայկ Յարութիւնեան:

Հ.Մ.Ը.Մ.ի քոյրերուն եւ եղբայրներուն կը ցանկանք, որ իրենց աշխատանքով հասնին նաեւ «Արարատեան» կարգ:



# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ՎԻԵՆՆԱՅԻ 16-ՐԴ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

**Հ.Մ.Ը.Մ.ի Վիեննայի Մեկուսի Շրջանի Անդամական 16-րդ Ընդհ. Ժողովի Դիւան Վիեննա**

**Հ**.Մ.Ը.Մ.ի Վիեննայի Մեկուսի շրջանի անդամական 16-րդ ընդհանուր ժողովը տեղի ունեցավ Շաբաթ, 18 Սեպտեմբեր 2021-ին, հայ առաքելական եկեղեցւոյ համայնքի մեծ սրահին մէջ: Ժողովին մասնակցեցան մասնաճիւղի 43 անդամներէն 32 իրաւասու ձայնով քոյրեր եւ եղբայրներ, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ՝ եղբ. Ֆէտի Խաթակ Գազանճեան:

Ժողովի դիւանի անդամներ ընտրուեցան՝ ատենապետ եղբ. Աւօ Գուլյումճեան, ատենադպիրներ՝ քոյրեր Սիլվիա Պուրճեան եւ եղբ. Յակոբ Սահակեան:

Անդամական ընդհանուր ժողովը ըսկսւեց «Յառաջ նահատակ» քայլերգով, ապա մասնաճիւղի ատենապետ եղբ. Սամուէլ Նահապետեան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Գազանճեանին: Եղբայրը անդրադարձաւ ընթացաւարտ վարչութեան դիմադրւած դիւանոր դժուարութեան՝ քորոնայի համաճարակին միութեան աշխատանքներուն պարտադրած սահմանափակումներուն:



տանքներուն պարտադրած սահմանափակումներուն:

Օրակարգի քննութեան անցնելով, ժողովը լայնօրէն անդրադարձաւ մասնաճիւղին կազմակերպական, մշակութային, մարզական եւ յատկապէս սկսած ուստական ծրագիրներուն, որոնց լոյսին տակ կատարուեցան պատշաճ առաջարկներ եւ տրուեցան որոշումներ:

Փակման խօսքով հանդէս եկաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Ֆէտի Խաթակ Գազանճեան: Եղբայրը բարձր գնահատեց օրուան դիւանը եւ գնահատանքով նշեց ընթացաւարտ վարչութեան կատարած

հիմնական աշխատանքները:

Ժողովի աւարտին, ժողովականները ընտրեցին Մեկուսի շրջանին յառաջիկայ տարեշրջանի նոր վարչութեան կազմը, որ Ընդհանուր ժողովի դիւանին ներկայութեան, դիւանը կազմեց հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ եղբ. Սամուէլ Նահապետեան


Ատենադպիր՝ Սիլվիա Պուրճեան  
Գանձապահ՝ քոյր Արսինէ Կարապետեան

Խորհրդականներ՝ եղբայրներ Մովսէս Համիեան եւ Զործ Իսկէնտերեան

## Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԵԿՈՒՍԻ ՇՐՋԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

**Թղթակից Վիեննա**

Կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի



Վիեննայի Մեկուսի Շրջանի խմբապետական կազմին, 6 Փետրուար 2022-ին տեղի ունեցաւ ծնողական ժողով՝ միութեան «Մոսիկ Սեքլէմեան» սրահին մէջ: Ժողովին խմբապետական կազմը



ներկայացուց իր եռամսեայ գործունէութեան ծրագիրը եւ ծնողներուն հետ քննարկեց հաւաքներուն ներկայութեան կարեւորութիւնը եւ միութիւնը յուզող ընդհանրական հարցեր:



# ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ Ա. ՏԱՐԵԼԻՑ ԵՂԲ. ՄՈՍԻԿ ՍԵՔԼԷՄԵԱՆԻ

**Կ**իրակի, 28 Նոյեմբեր 2021-ի առաւօտեան, Վիեննայի Ս. Հռիփսիմէ եկեղեցւոյ մէջ, յընթացս Սուրբ եւ Անմահ Պատարագի տեղի ունեցաւ նահատակութեան Ա. տարելիցի հոգեհանգստեան պաշտօն, Շուշիի 2020-ի պաշտպանութեան մարտերուն նահատակուած, Արցախի համար անմահացած հերոս եղբայր Մոսիկ Սեքլէմեանի:

Յաւե՛րժ փառք ու պատիւ Արցախեան մեր բոլոր նահատակներուն:



## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԼՄԵԼՈՅԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ 24-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

**Հ**.Մ.Ը.Մ.ի Ալմելոյի Մեկուսի մասնաճիւղի անդամական 24-րդ ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ Շաբաթ, 13 Նոյեմբեր 2021-ին, միութեան նորակառուցց ակումբին մէջ: Ժողովին մասնակցեցան 40 անդամներ, 32-ը կրակասու ձայնով քոյրեր եւ եղբայրներ ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Ֆէտի Խաթակ Գազանճեան:

Անդամական 24-րդ ժողովը սկսաւ «Յառաջ նահատակ» քայլերգով, ապա Հ.Մ.Ը.Մ.ի Ալմելոյի մասնաճիւղի ատենապետ եղբ. Մինաս Արսէնեան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Գազանճեանին: Ժողովը վայրկեան մը յոտնկայս լուծեամբ իր յարգանքը մատուցեց նոր մահացած եղբ. Վրէժ Չաթախեանին: Ապա, եղբ. Արսէնեան անդրադարձաւ նախորդ շրջանին մասնաճիւղին դիմագրաւած գլխաւոր ղեկարողութեան՝ քորոնա ժահրին եւ անոր ազդեցութեան՝ ընդհանրապէս բոլոր աշխատանքներու վրայ:

Ժողովի աւարտին, ժողովականները ընտրեցին յառաջիկայ միամեայ նստաշրջանի նոր Մեկուսի վարչութիւնը՝ հետեւեալ քոյր եւ եղբայրներով.-

- Եղբ. Մինաս Արսէնեան
- Եղբ. Սեւան Կորկիսեան
- Քոյր Փաթիլ Տատուրեան
- Եղբ. Օհաննէս Օհաննէսեան
- Եղբ. Գէորգ Օհանեան
- Եղբ. Րաֆֆի Թերզեան
- Եղբ. Ռուբէն Յակոբեան
- Եղբ. Արման Խաչիկեան
- Եղբ. Յակոբ Գասպարեան

Ժողովին փակման խօսքով հանդէս եկաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացու-

ցիչ եղբ. Ֆէտի Խաթակ Գազանճեան: Ան բարձր գնահատեց ժողովին դիւանը եւ խօսքը ընթացաւարտ վարչութեան ուղղելով մատնանչեց այն հիմնական աշխատանքները, զորս մարմինը կատարած էր անցնող ղեկար տարիներու ընթացքին եւ մանաւանդ՝ իր մեծ ներդրումը բերելով նորակառուցց կեդրոնի շինարարական աշխատանքներուն:

Ապա, խօսքը ուղղելով նորընտիր վարչութեան եւ ներկաներուն, եղբ. Ֆէտի Խաթակ շեշտեց, որ որեւէ ծրագիր պէտք է հետապնդէ կանոնագիրով նշուած Հ.Մ.Ը.Մ.ի նպատակները, առաջին թիրախ ունենալով հայապահպանումը: Եւ այս նպատակին համար ան յիշեց Հայ Դատի ճամբուն զոհուածները, հասնելով մինչեւ Արցախեան վերջին պատերազմին նահատակուած Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրները:

Եղբ. Ֆէտի Խաթակ անդրադարձաւ նաեւ երիտասարդներու ուսման կարեւորութեան, նշելով թէ անոնք ի՞նչպէս պիտի կարենան իրենց վկայականներով աւելի օգտակար դառնալ իրենց շրջապատին՝ մանաւանդ հայկական եւ միութենական շրջանակներու մէջ:

Ժողովին ետք, նորընտիր վարչութիւնը Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Ֆէտի Խաթակ Գազանճեանի եւ ընդհանուր ժողովի դիւանին ներկայութեան իր դիւանին ընտրութիւնը կատարեց հետեւեալ ձևով.-

- Եղբ. Մինաս Արսէնեան- ատենապետ
- Եղբ. Սեւան Կորկիսեան- ատենադպիր
- Քոյր Փաթիլ Տատուրեան- գանձապահ

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԼՄԵԼՈՅԻ  
ՍԵԿՐԵՏԱՐ ԾՐՋԱՆԻ  
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ





## **Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՏԵՐԹԵԼԻՈՅ ՄԵԿՈՒՍԻ ՇՐՋԱՆԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ**

**Հ**ՄԸՄԻ Շուկտի Սոտերթելիոյ մասնաճիւղի անդամական հինգերորդ ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ Շաբաթ, 16 Հոկտեմբեր 2021-ին, «Սարգսրապատ» կեդրոնին մէջ: Ժողովին մասնակցեցան 43 իրաւասու ձայնով քոյրեր եւ եղբայրներ, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Ֆէտի Խաթակ Գազանճեան:

Ժողովի դիւանի անդամներ ընտրուեցան եղբ. Եղիա Յակոբեան՝ ատենապետ եւ քոյր Անի Պետրոսեան՝ ատենադպիր:

Անդամական ընդհանուր ժողովին բացումը կատարեց քոյր Համեստ Շառոյեան: Ան ներկաները հրաւիրեց «Յառաջ նահատակ» քայլերը երգելու, ապա յայտարարեց մէկ վայրկեան լուռ լինել՝ ի յիշատակ 2020-ին Ագրպէյճանի կողմէ Արցախի դէմ սանձազերծուած 44-օրեայ պատերազմին զոհուած հայորդիներուն եւ մեզմէ յաւերժ բաժնուած Հ.Մ.Ը.Մ.ականներուն: Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ի Սոտերթելիոյ մասնաճիւղի ատենապետ եղբ. Բաֆֆի Մինասեան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ

եղբ. Գազանճեանին: Եղբայրը անդրադարձաւ մասնաճիւղի ընթացաւարտ վարչութեան դիմագրաւած գլխաւոր դժուարութեան՝ քորոնայի համաճարակին պատճառով միութենական աշխատանքներու դադարեցման ու դանդաղեցման:

Անդամական ժողովը լայնօրէն անդրադարձաւ մասնաճիւղին կազմակերպական, մարզական եւ սկստական ծրագիրներուն եւ համապատասխան առաջարկներ կատարեց յառաջիկայ հանգրուանի աշխատանքներու համար:

Ժողովին փակման խօսքով հանդէս եկաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Ֆէտի Խաթակ Գազանճեան: Եղբայրը բարձր գնահատեց ընթացաւարտ վարչութեան գործունէութիւնը, որովհետեւ ան կարողացաւ ժրջան աշխատանքով մասնաճիւղին նիւթական վիճակը բերելու, ըսաւ ան:

Իր խօսքը նորընտիր վարչութեան եւ ներկաներուն ուղղելով, եղբ. Գազանճեան շեշտեց, որ որեւէ ծրագրի առաջադրանքները պէտք է ըլլան կանոնադրով նշուած Հ.Մ.Ը.Մ.ի նպատակները, գլխաւոր թիրախ ունենալով հայապահպանումը: Այս գծով ան յիշեց Հայ Դատի հետապնդման ճամբուն վրայ զոհուածները, հասնելով մինչեւ Արցախեան վերջին պատերազմին նահատակուած Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրները:

Եղբ. Գազանճեան անդրադարձաւ նաեւ երիտասարդներու ուսման կարեւորութեան, շեշտելով որ անոնք իրենց վկայականներով կրնան աւելի օգտակար դառնալ իրենց շրջապատին՝ մանաւանդ հայկական եւ միութենական շրջանակներէ ներս:

Ժողովի աւարտին, ժողովականները ընտրեցին յառաջիկայ միամեայ նստաշրջանի նոր մե-





կուսի վարչութիւնը եւ Ընդհանուր Ժողովի դի-  
ւանին ներկայութեան աշխատանքներու բաժա-  
նումը կատարեցին հետեւեալ ձեւով.-

- Եղբ. Րաֆֆի Մինասեան- ատենապետ
  - Քոյր Սուէ Երէցեան- ատենադպիր
  - Քոյր Թային Մակարեան- գանձապահ
  - Եղբ. Աւագ Կարապետեան- մարզական
  - Քոյր Լենա Յակոբեան- ընկերային
- Ժողովը փակուեցաւ «Յառաջ նահատակ»  
քայլերգով:



## ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ԾՐԱԳՐՈՒՄԻ ԵՐԿՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐ



### Հ.Մ.Ը.Մ.ի Սոսերթելիոյ Մեկուսի Շրջանի Խմբապետական Կազմ

**Հ**ՄԸՄի Սոսերթելիոյ Մե-  
կուսի շրջանի խմբապետա-  
կան կազմը, այս տարի եւս,  
տարեկան իր ծրագիրը մշակելու համար  
կազմակերպեց յատուկ սեմինար մը, որ  
երկարեցաւ երկու օրուան վրայ: Սեմի-  
նարը ընդգրկեց զրոյցներ եւ խմբակա-  
յին աշխատանքներ:

Իբրեւ գրուցավարներ սեմինարին  
իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.-  
Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ան-  
դամ եղբ. Ֆէտի Խաթակ Գազանճեան,  
եղբայրներ Սիմոն Տէր Սահակեան, Յա-  
րութ Ներսէսեան, քոյրեր Կլարա Ադ-  
պապեան եւ Նենսի Խաչատուրեան:

Սեմինարի աշխատանքներու աւար-  
տին, խմբապետական կազմը եզրակա-

ցուց, որ ընթացիկ տարուան ընթացքին  
պէտք է յատուկ կարեւորութիւն տրուի  
նիւթական աղբիւրներու ապահովման՝  
սկստակական կազմակերպութենէն՝  
Bilda-էն եւ քաղաքապետութենէն:

Որոշուեցաւ, որ դաստիարակչական  
բոլոր դասընթացքներուն ծախսերը  
ստանձնէ խմբապետութիւնը: Նաեւ  
ծրագիր մշակուեցաւ զարկ տալու խմբ-

բակային յայտագիրներուն, որպէսզի  
անոնք կատարուին բնութեան մէջ, շր-  
ջապտոյտներով, միօրեայ այցելութիւն-  
ներով եւ երկօրեայ սեմինարներով:

Նկատի ունենալով, որ 2023-ը համա-  
Հ.Մ.Ը.Մ.ական ընդհանուր բանակումի  
տարին է, փորձեր պիտի կատարուին  
միացեալ աշխատանքներ կատարելու  
այլ շրջաններու հետ, որպէսզի քոյրերն  
ու եղբայրները այժմէն ծանօթանան  
իրարու հետ: Այս ուղղութեամբ փա-  
փաք յայտնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Վիեննա-  
յի պատասխանատու կազմը հրաւիրելու  
մասնաճիւղի ձիւնի բանակումին:

Բացի այդ, մասնաճիւղին հիմնական  
աշխատանքները պիտի ըլլան կազմա-  
կերպել խմբային սեմինարներ, տարե-  
կան բանակում, հանդէսներ, արշաւներ  
եւ սկստակական յայտագիրներ: Նաեւ  
առաւելագոյն կերպով պիտի մասնակ-  
ցին Շուէտի սկստակական կազմակեր-  
պութեան դաստիարակչական սեմի-  
նարներուն:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՏԵՐԹԵԼԻՈՅ ՄԵԿՈՒՍԻ ՇՐՋԱՆԻ ՉՄԵՌՆԱՅԻՆ ՀՆԳՕՐԵԱՅ ԲԱՆԱԿՈՒՄԸ

## Արիկ Պասմաձեան ՍՅՈՔՅՈՒՆ

**Ն**ախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Շուէտի Սոտերթելիոյ Մեկուսի շրջանի սկաուտական խումբապետական եւ աստիճանաւորական կազմերուն, 25 Փետրուարէն 1 Մարտ 2022, Բ. կարգի գործնական ձմեռնային բանակում մը տեղի ունեցաւ Ֆլէն շրջանին մէջ, մասնակցութեամբ 20 արի-արեւոյճներու եւ խմբապետական կազմի 16 աստիճանաւոր քոյր-եղբայրներու: Մասնաձիւղի վարչութեան ներկայ էր եղբ. Աւագ Կարապետեան:

Բանակումին բացման ներկայ գրտ-

նուեցաւ եւ իր պատգամը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ֆէտի Խաժակ Գազանձեան: Եղբայրը գնահատեց բանակումին մասնակցողները եւ թելադրեց անշեղօրէն հետեւիլ միութեան նշանաբանին՝ «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»-ին եւ անոր գործնական արտայայտութեան մեր ամէնօրեայ կեանքին մէջ:

Խօսք առաւ նաեւ Վաղարշ Քհնյ-Իսախանեան եւ թելադրեց հաւատարիմ մնալ հայ եկեղեցւոյ նուիրական արժէքներուն եւ սրբութիւններուն:

Յայտնենք, որ բանակումի ընթացքին, բանակողներուն այցելեց Շուէտի սկաուտական կազմակերպութեան ներ-

կայացուցիչը, որ այս առիթով իր սրտի խօսքը փոխանցեց բանակողներուն:

Բանակումը անցաւ Հ.Մ.Ը.Մ.ական խանդավառ մթնոլորտի մէջ: Բանակողները ծանօթացան ձիւնի վրայ վրան լարելու, բացօդեայ ճաշ եփելու ձեւերուն, սղոցի եւ կացինի գործածութեան: Տեղի ունեցան երգի ուսուցումներ եւ հետաքրքրական խաղ-մրցումներ:

Բանակումին ներկայ գտնուեցաւ Շուէտի «Պիլտա» կազմակերպութեան ներկայացուցիչը, որ բանակողներուն օգտակար դարձաւ շտապ օգնութեան դասընթացքով: Բանակումի աւարտին, կազմակերպութիւնը բանակողներուն փոխանցեց յատուկ վկայականներ եւ պէճեր:

Յատկանշական էր բանակումի փակման խարուկահանդէսին կարգ մը արի-արեւոյճներու խոստման արարողութիւնը եւ փողկապի տուջութիւնը: Բոլոր մասնակցողները, իրենց կարգին, ստացան հաստատագիրներ: Խոհարար քոյրերն ու բանակումին օժանդակ մարմինը ստացան շնորհակալագիրներ:

Բանակումը աւարտեցաւ «Ով հայ արի»ով՝ Հ.Մ.Ը.Մ.ական կեանքէն ակընթարթ մը յաւերժացնելով:





## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.Ի ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի անդամական ընդհանուր ժողովը փրեդի ունեցաւ Ուրբաթ, 19 Նոյեմբեր 2021-ին, միութեան շէնքէն ներս: Ժողովին մասնակցեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան արեւնապետ եղբ. Վաչէ Նաճարեան:

Ժողովի աւարտին, ժողովականները ընկրեցին յառաջիկայ միամեակի Մեկուսի նոր վարչութիւնը հետեւեալ կազմով-



Եղբ. Կարօ Թերզեան- արեւնապետ  
Եղբ. Վարդան Կոստանեան- արեւնադպիր  
Եղբ. Նարեկ Դաւիթեան- գանչապահ  
Եղբ. Յակոբ Տէմիրճեան- խորհրդական  
Եղբ. Հրաչ Գազանճեան- խորհրդական

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.Ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

## ԿԻՊՐՈՍԻ ԹԵՄԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ Հ.Մ.Ը.Մ.Ի ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի Կիպրոսի վարչութեան պաշտօնական հրաւերին ընդառաջելով, միութեանական տարեշրջանի բացման առիթով, Կիպրոսի Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Խորէն Արք. Տողրամաճեան հանդիպում մը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղի վարչութեան անդամներուն եւ սկառտներուն հետ:



Դրօշակի արարողութենէն ետք, Խորէն Արք. Տողրամաճեան իր շնորհակալութիւնն ու մասնաւոր զնահատանքը յայտնեց բոլորին: Ան ըսաւ, որ իրեն համար հպարտութիւն է ըլլալ Հ.Մ.Ը.Մ.ի սկառտներուն հետ: Խօսքը սկառտներուն ուղղելով ան նշեց. «Գրեթէ երկու տարի քորոնայի համաճարակին պատճառով բոլորս զրկուեցանք խմբային մեր աշխատանքներէն ու հանդիպումներէն: Այսօր, թէկուզ նուազ թիւով, խումբ մը սկառտներ կարելի դարձուցին, որ դարձեալ քով-քովի գանք՝ Հ.Մ.Ը.Մ.ի սկառտական ոգիով գործելու, դաստիարակուելու, գոլարձանալու եւ հարստանալու նորանոր գիտելիքներով, որոնք մինչեւ ձեր կեանքին վերջը պիտի ըլլան ձեզ խրախուսող յիշատակներ»: Հ.Մ.Ը.Մ.ը Հայաստանի եւ Սփիւռքի տարածքին կը շարունակէ ազգային իր դերակատարութիւնն ու գործունէութիւնը, պատրաստելով առողջ մարմինով առողջ միտքի տէր հայեր, իրենց ժողովուրդին եւ հայրենիքին յանձնառու հայեր, հայու ոգիով ու Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանով:

Սրբազանը սկառտներուն թելադրեց միշտ հարցումներ ուղղեն իրենց խմբապետներուն եւ պատասխանատուներուն, նորութիւններ սորվելու համար եւ ըսաւ. «Չգիտնալը ամօթ չէ, բայց երբ բան մը կը սորվինք ու կը մոռնանք, այն ատեն ամօթ պէտք է զգանք: Ուստի, չմոռնալու համար ձեր սորվածները միշտ պիտի կրկնէք, որովհետեւ կրկնելով բան մը աւելի լաւ կը սորվինք ու կը դրոշմուի մեր մտքերուն մէջ»:

Շարունակելով իր խօսքը, Սրբազանը աւելցուց. «Ամէն Ուրբաթ կը համախմբուիք այստեղ ապրելու մեր ազգին ու հայրենիքին հօգուտը եւ ամրապնդելու պայքարի մեր կամքը՝ մեր արդար դատի լուծման, կառչած մնալով մեր նահատակներու սրբազան կտակին, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներուն գծած ուղիին, ու այս վայրը դարձնելով հայրենի հող եւ Հայաստան, ուր միայն հայերէն պիտի խօսինք: Մենք բախտաւոր այն քիչ գաղութներէն մէկն ենք, որ բոլորս հայախօս ենք, մեր տուններէն, դպրոցներէն ու աղումբներէն ներս հայերէն կը խօսինք»:

Աւարտին, Խորէն Սրբազան հարցումներ ուղղեց սկառտներուն, պատասխանեց անոնց հարցումներուն, քաջալերեց գիրենք եւ օրհնեց բոլորը: Սրբազանը իր պատրաստակամութիւնը յայտնեց վարչութեան անդամներուն, օգտակար ըլլալու որեւէ հարցի նկատմամբ, յատկապէս ազգային եւ հոգեւոր դաստիարակութեան աշխատանքներու մէջ:



# «ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻ ՕՐ»ՈՒԱՆ ՆՇՈՒՄ ԵՒ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ՝ ԱԹԷՆՔԻ ԵՒ ՍԵԼԱՆԻԿԻ ՄԷՁ

## Թղթակից ԱԹԷՆՔ

**Հ**.Մ.Ը.Մ-ի Յունաստանի Շրջանային Վարչութիւնը այս տարի գեղեցիկ գաղափարը ունեցաւ հրապարակային կերպով նշելու «Հայ սկաուտի օր»ը, ինչպէս նաեւ կատարելու հոգեհանգստեան պաշտօն՝ միութեան անդարձ մեկնած անդամներու յիշատակին: Նախապէս դասաւորուած ծրագիրով մը, նշումը միաժամանակ կատարուեցաւ Աթէնքի եւ Սելանիկի մէջ, հաւաքելով Հ.Մ.Ը.Մ.ական արի-արեւոյճներ, վարչականներ եւ անդամներ:

### ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԱԹԷՆՔԻ ՄԷՁ

Կիրակի, 27 Փետրուարի առաւօտեան ժամը 9.30-ին, Գոքինիոյ Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ պատարագեց Պարէտ Քհնյ. Խաչերեան եւ քարոզեց թեմակալ Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեան, որուն հովանաւորութիւնը կը կրէր Հ.Մ.Ը.Մ-ի նախաձեռնութիւնը: Ներկայ եղան Ազգային Վարչութեան ատենա-



պետ Թագևոր Յովակիմեան, Հ.Յ.Գ. Յունաստանի Կեդրոնական Կոմիտէի կողմէ Տիգրան Չիչէքեան, Հ.Կ.Խաչի եւ Համազգայինի Շրջանային Վարչութիւններու ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան, Աթէնքի եւ Գոքինիոյ մասնաճիւղերու վարչականներ եւ անդամներ, ինչպէս նաեւ՝ երէցներ եւ աստիճանաւոր սկաուտներ, որոնք շարքով պատուի կանգնեցան եկեղեցւոյ մէջ:

Պատարագի աւարտին, Առաջնորդ Սրբազանը նախ անդրադարձաւ Վարդանանց հերոսամարտի խորհուրդին, ապա զայն կապեց «Հայ սկաուտի օր»ուն: Սրբազան հայր մասնաւորապէս նշեց. «Սրբոց Վարդանանց զօրավարաց տօնը յայտարարուած է «Հայ սկաուտի օր»: Ինչո՞ւ արդեօք այս տօնը եւ ոչ՝ ուրիշ մը: Եթէ նկատի ունենանք հայ սկաուտին կատարած խոստումը, որ կ'ըսէ՝ «Կը խոստանամ ըլլալ հաւատարիմ Աստուծոյ եւ ծառայել ազգիս ու հայրենիքիս, միշտ օգնել ուրիշին եւ գործել իբրեւ պարտականութեան գիտակից, արի եւ վեհանձն մարդ, հնազանդել Հ.Մ.Ը.Մ-ի ակառտական դաւանանքին», պիտի տեսնենք որ Վարդանանց հերոսամարտի խորհուրդն ու ոգին ներկայ է Հ.Մ.Ը.Մ.ականին մէջ՝ պահել ու պաշտպանել հայուն հաւատքը, լեզուն ու մշակոյթը: Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ սկաուտական համաշխարհային շարժումի կարգախօսին կողքին Հ.Մ.Ը.Մ-ը աւելցուց նաեւ ազնիւ հոգի: Հետեւաբար, իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ական մարմնով առողջ ու



չարքաչ, մտքով ողջախոհ եւ արդար, հոգիով վեհ ու ազնիւ, հաւասարակը՝ ուրեւ զանձն է: Հ.Մ.Ը.Մ.ական գայլիկին, սկառուտին ու արիին կարգախօսները՝ «Լաւագոյն», «Պատրաստ», «Օգնող», սոսկ բառեր չեն, այլ՝ պատուի եւ արժանապատուութեան զգացումներով նկարագիր ու ապրելակերպ են»:

Գեղամ Սրբազան իր խօսքին մէջ անդրադարձաւ միութեան ծառայած ու անդարձ մեկնած անդամներուն, վեր առնելով անոնց ծառայասիրութեան ոգին եւ Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան տէր կանգնելու անշահախնդիր մօտեցումը:

Հոգեհանգստեան արարողութենէն ետք, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Գոքինիոյ սկառուտական մասնաճիւղի խմբապետ եղբ. Վիգէն Մինասեան, որ յայտնեց հետեւեալները.՝

«Կոստան Զարեանի խօսքով՝ հայ ըլլալը կը պահանջէ մեծ ճիգ, հոգեկան կեդրոնացում, զոհաբերութեան ոգի, խոր հաւատք, եւ առաքելական մոլեւումանդութիւն (այսինքն՝ հայրենիքին նուիրումի համոզում):

«Փետրուար ամիսը իւրայատուկ է Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտներուն համար, որովհետեւ կը տօնենք «Սկառուտի օրը»: Համաշխարհային սկառուտութիւնը Սուրբ Գէորգը նկատի առած է իբրեւ սկառուտութեան պահապան: Սակայն, Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտները ըլլալով աւանդապահ եւ գիտակից, «Սկառուտի օրուան» տուած են հայեցի դիմագիծ եւ Սուրբ Գէորգը փոխարինած են Սուրբ Վարդանով, վառ պահելու համար հայ-



### Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԵՂԲ. ԱՐԱ ԴԱՆԻԿԵԱՆ ՄԱՐՏԱՐՈՒԵՍԻ ԺՈՒ-ՉԻՑՈՒ ՄԱՐԶԱՉԵՒԻ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԼԱՒԱԳՈՅՆ ՄԱՐԶԻԿԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Արևնքի մասնաճիւղի անդամ եղբ. Արա Դանիկեան մարտարուեստի Ժու-Չիցու մարզաշէնի Յունաստանի ֆեդերասիոնին կողմէ հռչակուեցաւ փարուան լաւագոյն մարզիկ: Արդարեւ, եղբ. Արա իր մարզաշէնի աշխարհի ախոյեանութեան մրցումներուն, Տուպայի մէջ, նուանեց պարուաբեր երկրորդ դիրքը: Ան իր յաղթանակը նուիրեց Արցախեան 44-օրեայ պայքարազմին:

Այս առիթով իր կապարած դիմարկերեան գրառումին մէջ, եղբ. Արա նշեց Ազրայէճանի մէջ պահուող հայ գերիները, որոնց հետք ան բաժնեկցեցաւ իր յաղթանակը:

րենիքի եւ կրօնքի սէրը Հ.Մ.Ը.Մ.ական պատանիի հոգիին մէջ:

«Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտութեան նպատակն է պատրաստել տիպար եւ բարոյական վեհ սկզբունքներով անձեր, որոնք Վարդան Մամիկոնեանի նման հաւատարիմ պիտի մնան քրիստոնէական եւ հայրենասիրական իրենց հաւատքին: Վարդան Մամիկոնեան իրեն հետեւող զինուորները Աւարայրի դաշտ առաջնորդեց առանց որեւէ վախի, ան պատերազմեցաւ, որպէսզի քրիստոնէութիւնն ու հայրութիւնը պահպանուին: Պատերազմեցաւ՝ գիտնալով որ պիտի զոհուի, պատերազմեցաւ՝ գիտնալով որ իր կողքին կանգնող զինուորները եւս պատրաստ են իրեն հետ զոհուելու: Նոյնպէս ալ սկառուտ խմբապետները: Անոնք միշտ պատրաստ են սկառուտութեան համար, այս դժուար օրերուն կը դիմանան, կը բարձրանան ու կը բարձ-

րացնեն իրենց յաջորդները: Եւագոյն փողկապը իրենց վիզին՝ անոնք նոր սերունդներ կը դաստիարակեն: Այո, վրատահ տարիները փոխուած են, հետաքրքրութիւններն ալ՝ նոյնպէս, բայց ահա հոս ենք, նուիրուած ենք այս հսկայ միութեան, վառ պահելով մեր հայրենասիրութիւնն ու ազգասիրութիւնը:

«Հայ սկառուտի օրուան առիթով կ'ուզեմ շնորհաւորել բոլոր քոյրերս եւ եղբայրներս, եւ կը հրաւիրեմ բոլոր ծնողները իրենց փոքրիկներուն հետ միանալու այս մեծ ընտանիքին, որ հաւատք եւ յոյս կը ներշնչէ մեր ազգին եւ լեզւին գոյատեւման համար»:

#### ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՍԵՆԱՆԻԿԻ ՄԷՋ

Կիրակի, 27 Փետրուար 2022-ի առաւօտեան ժամը 10.30-ին, Սեյանիկի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ մա-





տուցուեցաւ Սուրբ եւ անմահ Պատարագ: Պատարագը մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց շրջանի հոգեւոր հովիւ Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեան: Քարոզի պահուն, հայր սուրբը անդրադարձաւ Վարդանանց զօրավարներու պատգամին, անոնց ձգած կտակին եւ համեմատութիւն մը կատարելով այսօրուան հայ մարզիկին, հայ սկաուտին, հայ միութենականին, հայ քրոջ եւ եղբոր հետ՝ կապեց զայն յաւիտ մեկնած Հ.Մ.Ը.Մ.ականներուն, որոնք իրենց ամուր հաւատքով, ազնիւ ոգիով ու անխախտ յանձնառութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի ջահը վառ պահեցին:

Պատարագի աւարտին, ներկայութեամբ Սեւանիկի Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղական խորհուրդին եւ տիկնանց միութեան, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան,

ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Սեւանիկի մասնաճիւղի վարչութեան, շրջանին մէջ գործող ազգային կառույցներու, հաստատութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներուն եւ հաւատացեալ բազմութեան մը, տեղի ունեցաւ Վարդանանց զօրավարներու նուիրուած նախատօնակ, ինչպէս նաեւ «Հայ սկաուտի օր»ուան նշում եւ հոգեհանգստեան արարողութիւն՝ ննջեցեալ Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ յարգանքի տուրք՝ միութեան ծառայած ու անդարձ մեկնած անդամներուն, մարզիկներուն, սկաուտներուն, վարչականներուն եւ բոլոր սատարողներու յիշատակին:

Արարողութենէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Գէորգ Պողոսեան: Ան անդրադարձաւ հայ սկաուտի, հայ մարզիկի ու մանաւանդ

Հ.Մ.Ը.Մ.ականի համար կարեւորագոյն արժեքներէն մէկուն՝ հայօրէն շնչելու, հայօրէն ապրելու եւ ապրեցնելու ոգին:

Ապա, «Տէր Զաքարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ սուրճի հիւրասիրութիւն:

Նախորդ օրը, Շաբաթ, երեկոյեան ժամը 6-ին, «Տէր Զաքարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Սեւանիկի վարչութեան եւ մարզիկներուն գալթայի կտրումը: Պահուած մետաղադրամը յայտնուեցաւ եղբ. Արմէն Ղուլեանի մօտ եւ ան ստացաւ վարչութեան կողմէ տրամադրուած նուէրը: Հաւաքոյթի ընթացքին խօսքեր արտասանեցին մասնաճիւղի ատենապետուհի քոյր Փեփի Անսուրեան, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Գէորգ Պողոսեան եւ շրջանի հոգեւոր հովիւ Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեան, որոնք փոխանցեցին իրենց բարեմաղթութիւնները:

Նշենք, որ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան անդամները եւ տեղական վարչութիւնը հանդիպում մը ունեցան Հ.Յ.Դ. Երիտասարդական Միութեան Սեւանիկի «Ս. Թեօփրեան» խումբի անդամներուն հետ: Հանդիպումին քննարկուեցան սկաուտական կորիզի մը ստեղծման հնարաւորութիւնները, ինչ որ պիտի նպաստէ շրջանի երիտասարդութեան աշխուժացման եւ միութենական լայնածաւալ գործունէութեան ձեռնարկման:



ԱՆԴՐԱԴԱՐՁ

# Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԷՉ ՏԵՄՆԵԼ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՈԳԻԻ ԲՈՑԱՎԱՌՈՒՄԸ

**Ա**յս Կիրակի, Արևիկի եւ Թեաադոնիկէի մէջ, Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ը պիտի կատարէ իր անջեցեայ անդամներուն հոգեհանգստեան պաշտօնը, միաժամանակ պիտի նշէ «Հայ սկաուտի օր»ը:



Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպութեան վրայ:

Կրնանք անվարան ըսել, որ երկու օր ետք, ծառայած ու անդարձ մեկնած միութեան անդամներու յիշատակին կատարելիք յարգանքի պաշտօնը ուրիշ բան չէ եթէ ոչ համեստ խոնարհում մը պատմական դժուար երթին մէջ ծառայած իւրաքանչիւր անդամի անհատական եւ բոլորի համախումբ հայրենասիրութեան ոգիին առջեւ: Միաժամանակ, յիշեցում մըն է միութեան նորահաս սպասաւորներուն, թէ երբը իր աւարտին չէ հասած:

Յարգանքի օր մըն է, գոր մարզական ու սկաուտական մեծ միութիւնը այս անգամ կը նշէ հրապարակային կազմակերպութեամբ, հրաւիրելով իր բոլոր անդամները, ինչպէս նաեւ հայրենակիցները, իրենց յարգանքի փութքը մատուցելու բոլոր անոնց յիշատակին, որոնք գործեցին ու անցան: Եթէ պահ մը յետադարձ ակնարկ նետենք Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան վրայ, հասնելով միևնչեւ իր հիմնադրութեան օրերը, պիտի գմայլինք այն բոլոր իրագործումներով, նուաճումներով, հայակերպ այն գործունէութեամբ, գոր վերապահուած էր Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ին 1923-ի իր հիմնադրութեան օրերէն, երբ առաջին սկաուտական խումբերը կրեցին Հ.Մ.Ը.Մ.ի զինանշանը, մինչեւ մեր օրերը, ուր միութեան անունը իր հնչեղութիւնը կը շարունակէ պահել այս երկրի մարզական աշխարհէն ներս:

Եթէ հարիւր փարի առաջ հայութիւնը, արիւնաբան ու կոպորտուած, ապրած էր ազգային մեծ ողբերգութիւն մը, որուն համար Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպութիւնը կու գար իբրեւ նոր սասկերական շարժում կեանք ու ոգի պարգեւելու հայ նոր սերունդին, կասկած չունենանք, որ այսօր եւս՝ Սփիւռքը մաշեցնող ու հիւժող փարիներուն, հայութեան ու հայրենիքին համար պատմականօրէն ճակատագրական պահերուն, Հ.Մ.Ը.Մ.ը փեր կը կանգնի իր հիմնադիրներու առաջադրանքներուն, Արցախի ու Հայաստանի հայորդիին համար հայրենասիրութեան ներշնչումի աղբիւր կը հանդիսանայ, պարտաւոր է շարունակել փրկութիւն ընել յունահայ պատանի ու երիտասարդ մեր սրանչեղի սերունդներուն:

1923-ին, օրերը ծանր էին հայութեան համար: Փոքր Ասիոյ աղէտին մահացու կրակը փակաւին կը միար իւրաքանչիւր հայու սիրտին մէջ, մինչ անդին խումբ մը հայրենասէր երիտասարդներ իրենց շորջ կը հաւաքէին պատանի եւ երիտասարդ զանգուածները, այն հասարակ համոզումով, որ հակառակ հայութեան մէջ սրեղծուած ողբերգական շրջադարձին, Հ.Մ.Ը.Մ.ը հասարակամ պարտաւոր էր փեր կանգնի իր նոր առաքելութեան օրար ցամաքներու վրայ հայկազեան ոգիի պահպանման ու յարարեման:

Եթէ հարիւր փարի առաջ հայութիւնը, արիւնաբան ու կոպորտուած, ապրած էր ազգային մեծ ողբերգութիւն մը, որուն համար Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպութիւնը կու գար իբրեւ նոր սասկերական շարժում կեանք ու ոգի պարգեւելու հայ նոր սերունդին, կասկած չունենանք, որ այսօր եւս՝ Սփիւռքը մաշեցնող ու հիւժող փարիներուն, հայութեան ու հայրենիքին համար պատմականօրէն ճակատագրական պահերուն, Հ.Մ.Ը.Մ.ը փեր կը կանգնի իր հիմնադիրներու առաջադրանքներուն, Արցախի ու Հայաստանի հայորդիին համար հայրենասիրութեան ներշնչումի աղբիւր կը հանդիսանայ, պարտաւոր է շարունակել փրկութիւն ընել յունահայ պատանի ու երիտասարդ մեր սրանչեղի սերունդներուն:

Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ը ամէն իրաւունք ունի հպարտ զգալու իր պատմութեան համար, նոյնացած հայութեան յետ-գմիւնեան ու յետ-կիլիկեան շրջանի մեկնարկով, որ յարկանչեց նաեւ մեր սրտար գաղութի կազմութեան ու կազմաւորման երկար պատմութիւնը:

Կիրակի օրուան յիշատակի պաշտօնը եւ «Հայ սկաուտի օր»ուան համեստ նշումը թող չբաւարարուի վարչական ու սկաուտական շարքերու նեղ ներկայութեամբ միայն: Թող այս համախմբումը առիթ սրեղծէ, բոլորս միասնաբար, հաւաքական մասնակցութեամբ, վերյիշելու իւրաքանչիւրիս սկաուտական ու մարզական ծլարչակումները, անոնք, որոնք առիթը փութիւն յունահայ երիտասարդին, որեւէ ժամանակին, փոքորուելու հայկազեան ոգիին փայլքով, հայրենասիրութեամբ ու աննկուն կամքով, շնորհիւ Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարական գորութեան ու անոր անզուգական սպասաւորներու մեծութեան:

Այս փարուան ընթացքին, յունահայութիւնը յրեկեանական զանազան ծրագիրներով պիտի նշէ Փոքր Ասիոյ աղէտէն ետք գաղութային կեանքի նոր սկիզբն ու պատմական իր երթը: Անկասկած, այս նշումներու լուսարշակները բաւական լոյս վերապահած են սիրելի ու

Հ.Մ.Ը.Մ.ի «կամար բանակ»ը փակաւին երկար ճամբայ ունի կրելիք:

Խմբագրական «Ազատ օր»ի, Արեւիկ, 25 Փետր, 2022



## Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԻԻՆԻԽԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ԱՇԽՈՅԺ ԳՈՐԾՈՒՆԷՑՈՒԹԻՒՆԸ

**Բ**որոնայի համաճարակի սահմանափակումներուն աստիճանական վերացումով, միութենական կեանքը սկսաւ վերաշխուժանալ Միւնիխի մէջ, Գերմա-

նիա: Կարելի եղաւ Ընդհանուր Ժողով գումարել, սկսուտական եւ մարզական աշխատանքներու վերսկսիլ եւ, ամէնէն կարեւորը, քով-քովի գալ եւ վերստին ընկերային-Հ.Մ.Ը.Մ.ական հաճելի մթնոլորտ ապրիլ:



Բնականոն կեանքի ազդանշանը տրուեցաւ անդամական չորրորդ Ընդհանուր Ժողովի գումարումով: Ժողովին Միւնիխի Մեկուսի շրջանի նոր վարչութեան անդամներ ընտրուեցան հետեւեալ եղբայրներն ու քոյրերը.- Վիգէն Վարդանեան (ատենապետ), Ռուբէն Նալպանտեան (փոխ ատենապետ եւ սկսուտականի պատասխանատու), Զեփիլո Ճոսլաքեան (քարտուղար), Սարգիս Բաշեսեան (գանձապահ), Մեղրիկ Սարգիսեան (հաշուապահ եւ արտաքին յարաբերութիւններու պատասխանատու), Գրիգոր Խաչիկեան (գոյքապահ եւ մարզականի պատասխանատու) եւ Քրիստինա Գասպարեան (ընկերային ցանցերու եւ մշակութային յանձնախումբի պատասխանատու):



Նորընտիր վարչութիւնը իր ընտրութենէն կարճ ժամանակ մը ետք կազմակերպեց մասնաճիւղի յանձնախումբերուն հետ հանդիպում մը, ուր ներկայացուց տարեկան իր ծրագիրը:

Այնուհետեւ ընթացք առին սկսուտական հաւաքները եւ մարզական հանդիպումները (Փութսալ եւ ճատրակ): Միաժամանակ, մասնաճիւղը ունեցաւ ընկերային աշխոյժ գործունէութիւն. կազմակերպեց պլիւրալ մրցաշարք, Ս. Սարգիսի տօնին առիթով դասասխօսութիւն եւ պարզեւատրում, ինչպէս նաեւ՝ Բարեկենդանի խանդավառ տօնակատարութիւն:

Մասնաճիւղը իր մասնակցութիւնը բերաւ համա-Հ.Մ.-Ը.Մ.ական քարոզչական առցանց Ա. սեմինարին: Շրջանէն երկօրեայ սեմինարի նիստերուն մասնակցեցան քոյր Քրիստինա Գասպարեան եւ եղբ. Հրակ Պէպէճեան:

Յայտնենք, որ Հ.Մ.Ը.Մ.ի Միւնիխի մասնաճիւղը հիմնուած է 2015-ին: Ան կը հաշուէ շուրջ 25 սկսուտներ, 10 մարզիկներ եւ 60 անդամներ:





**ԲԵԹՂԵՀԷՄԻ ԱՒԱՆԳԱԿԱՆ ՏՈՂԱՆՅՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ**

Երեքշաբթի, 18 Յունուար 2022-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Երուսաղեմի մասնաճյուղի շեփորախումբը իր մասնակցությունը բերաւ Բեթղեհէմ քաղաքի աւանդական փոսական փողանցքին, որ սկիզբ առաւ պարմական Բեթղեհէմի հին քաղաքի մուտքէն մինչեւ Ս. Ծննդեան Մայր Տաճարը:



Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները առաջնորդեցին Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց միաբանութեան անդամներուն եւ Երուսաղեմի Պապրիպարքութեան լուսարարապետ Սեան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ կազարուած փողանցքը:

Կ'արժէ նշել, թէ Սուրբ Երկրի մէջ հայ համայնքը Քրիստոսի Ծնունդը կը նշէ 19 Յունուարին, ըստ Յուլեան փոմարին:



# ՀԱՒԱՏԱՒՈՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԻ ՄԸ ԿՈՐՈՒՄՏԸ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ՅՈՎԻԿ ՍԻՒԼԱՀԵԱՆԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԵՂԲ. ՅԱՐՈՒԹ ՄԱԻԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)



**Մ**տի խոր կսկիծով բոլորս հրաժեշտ տուինք վեհանձն անձնաւորութեան մը՝ եղբ. Յարութ Մաւեանին, որ տիպար Հ.Մ.Ը.Մ.ականի, մարզիկի, սկաուտի եւ նուիրեալ ծառայողի մը օրինակը կը պարզէ:

Եղբ. Յարութ Մաւեանը բոլորիս ծանօթ է իր նուիրուածութեամբ եւ օրինակելի վարքով: Ան ծնած է 1939-ին, Հալեպի Տառնտիէ հայաշէն ավանը: Նախնական ուսումը ստացած է տեղւոյն Ազգային վարդանեան վարժարանը: Հակառակ անբարենպաստ պայմաններուն, զինք շրջապատող հայաշունչ մթնոլորտը իսթան հանդիսացած է ամբողջ կառչելու ազգային արժէքներուն եւ իր հաւատացած գաղափարներուն: Ան վճռած է նետուիլ ազգային ծառայութեան դաշտ, այս նպատակով ալ անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական եւ մարզական շարքերուն եւ իր լաւագոյնը տուած է միութեան վերելքին եւ յառաջդիմութեան համար:

Եղբ. Յարութ անդամակցած է աթլէթի, վոլիպոլի եւ ֆուտպոլի խումբերուն, ապա ստանձնած է պատասխանատու պաշտօններ: Երկար տարիներ ան մաս կազմած է միջ-մասնաճիւղային սողանցքներու կեդրոնական յանձնախումբին, իր փորձառութիւնը ի սպաս դնելով սողանցքներու յաջողութեան: Տարիներ շարունակ մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի ընտանեկան պարտէզի յանձնախումբին եւ ծաղկեցուցած է հարազատ միջավայր հանդիսացող միութենական այդ միջավայրը:

Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի յանձնախումբին մաս կազմելով, ան աշխատանքի լծուած է նախ իբրեւ անդամ, ապա տարիներ շարունակ իբրեւ յանձնախումբի ատենապետ:

Առ ի գնահատանք իր տարիներու վաստակին եւ անսակարկ ծառայութեան, միութեան 75-ամեակին՝ 1993-ին, ան պարգեւատրուած է «Ծառայութեան» շքանշանով:

Հ.Մ.Ը.Մ.ը եղբ. Յարութին կեանքին մէջ ունէր իւրայատուկ տեղ: Ան կ'ապրէր ու կը շնչէր Հ.Մ.Ը.Մ.ի յաղթանակներով, կը տառապէր Հ.Մ.Ը.Մ.ի դիմազրուած դժուարութիւններով եւ անձնուիրաբար ծառայելով իր ներդրումը կը բերէր միութեան վերելքին: Իր գաւակներն ու թոռները միութեան շարքեր առաջնորդելով, ազգային դաստիարակութեամբ եւ միութենական գաղափարաբանութեամբ ան պատրաստեց զանոնք, իբրեւ շարունակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր սերունդի տեսլականին:

Մենք կորսնցուցինք հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ական մը, որ իր ամբողջ կեանքը նուիրաբերած է միութեան: Հ.Մ.Ը.Մ.ի շարքերէն ներս մուտք գործած օրէն, միութենական սկզբունքները իր անձնական կեանքէն վեր դասելով՝ ան նուիրաբար ծառայեց, բարձրացաւ եւ իր հետ բարձրացուց

Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր եւ եղբայրներ: Եղբ. Յարութ կ'ապրէր ու կը շնչէր Հ.Մ.Ը.Մ.ով: Նոյնիսկ յառաջացած տարիքին, ան մօտէն կը հետաքրքրուէր միութեան նուաճումներով եւ քաջալեր կը հանդիսանար նոր սերունդի գաւակներուն:

Սիրելի՛ եղբ. Յարութ, ճիշդ է, որ անգուց մահը խլեց քեզ քու հարազատներէդ, ընտանիքէդ եւ միութենէդ, որոնցմէ յաւատարմութեամբ, սակայն քու տիպար եւ օրինակելի վարք հալածահայութեան յիշողութեան մէջ կը մնայ յաւերժ:

Մենք միայն քու մարմինիդ հրաժեշտ կու տանք, սակայն քու հայատրոփ հոգիդ եւ ազգային գաղափարներդ, իբրեւ ներշնչման աղբիւր, մեզի հետ պիտի մնան յաւերժ:

## Հ.Մ.Ը.Մ.Ի 103-ԱՄԵԱԿԻ...

(Շարունակուած Բ. կողմէն)

Մրցանակ 300 ամերիկեան փոյար արժողութեամբ լուսանկարչական քաներայի portable tripod մը եւ պաշտասի մը:

### Գ. ՄՐՅԱՆԱԿ

Ժիլի Մանոյեան, Յունաստանէն, «Հ.Մ.Ը.Մ.ական երջանկութիւն» խորագրեալ նկարին համար:

Մրցանակ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակը յանդիմանող արժեքաւոր ժամացոյց մը՝ յարուկ հասարակագիտի:

Երեք մրցանակակիրները կ'արժանանան նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի «Մարզիկ» պաշտօնաքերթի մէկ փարուան բաժանորդագրութեան:

Մրցանքի կազմակերպիչ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբը այս առիթով իր շնորհակալութիւնը կը յայտնէ մրցանքի դասական կազմին, մրցանքին յաջողութեան նպաստած Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային եւ Մեկուսի վարչութիւններուն, ինչպէս նաեւ բոլոր մասնակիցներուն, որոնք իրենց ուսակներով յանդիմանցին Հ.Մ.Ը.Մ.ական կեանքէն ակնարար մը, շեռնարկ մը կամ դէմք մը:

Մրցանակակիրներու լուսանկարները կը հրատարակուին Հ.Մ.Ը.Մ.ի դիմապրերի էջով եւ «Մարզիկ» պաշտօնաքերթով:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ

## Հ.Մ.Ը.Մ. ԿՈՐՄՆՑՈՒՑ ՆՈՒՒՐԵԱԼ ԱԶԱԿԻՑ ՄԸ՝ ԱՇԽԷՆ ՓԻԼԱՒՃԵԱՆԸ



23 Յունուար 2022-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Արևմտյան Մ. Նահանգներու շրջանը կորսնցուց միութեան աշխատանքներու նուիրեալ աջակից, Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» շքանշանակիր՝ Աշխէն Փիլաւճեանը:

Ազգային բարերար, գործիչ եւ կրթական մարզի երկարամեայ ջարդազոյլ Աշխէն Փիլաւճեան մահացաւ 89 տարեկանին: Ան իր բովանդակ կեանքին ընթացքին մեծ աշխատանք արարաւ բարեխառն եւ հարստացնելու հայ կրթական մարզը եւ հայկական վարժարանները: Անոր անասկարի ջանքերուն շնորհիւ ՀՕՄ-ի Մ. Նահարակաց Աշխէն Փիլաւճեան մանկամտօրը դարձաւ Արևմտյան Մ. Նահանգներու լաւագոյն մանկամտօրներէն մէկը:

Սրանչնելով իր հանգուցեալ ամուսնոյն Ալեքսանի պարտականութիւնը, Աշխէն Փիլաւճեան եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի անմնացորդ զօրակցողներէն մէկը, որովհետեւ ան կը հաւատար, թէ հայ երիտասարդութիւնը կենսական դերակատարութիւն ունի հայութեան փայլուն ապագայի կերպման մէջ: 2000-ին ան հանդիսացաւ Հ.Մ.Ը.Մ.ի Նասարդեան խաղերու պարտոյ ճախագահ:

Աշխէն Փիլաւճեան եւ ընտանիքը ջանք չխնայեցին հայութեան իրաւունքներու պաշտպանութեան եւ Հայոց Տեղապահութեան ճանաչման գործին ու րեւաբար նեցուկ կանգնեցան հայութեան շահերը պաշտպանող

պանող քաղաքական պաշտօնատարներու ընտրական արշաւներուն: Աշխէն Փիլաւճեան նուիրեալ զօրակցող մը հանդիսացաւ Ամերիկայի Հայ Դպրոցի յանձնախումբին եւ անոր Արևմտյան Ամերիկայի մասնաճիւղին: 2008-ին ան արժանացաւ Ամերիկայի Հայ Դպրոցի յանձնախումբի «Ժառանգութեան մրցանակ»ին:

Ազնի բարերարը նիւթապէս նեցուկ կանգնեցաւ հայկական զանազան կազմակերպութիւններու եւ հասարակութիւններու, ներառեալ Ազգային առաջնորդարանին, Հայ Մշակութային Հիմնարկութեան, ՀՕՄ-ին եւ բազմաթիւ հայկական վարժարաններու: Աշխէն Փիլաւճեան մեծապէս զնահարեց հայ մամուլին դերակատարութիւնը: Հայ թերթին զօրակցութեան անոր կեցածքը քաջալերանքի եւ հպարտութեան աղբիւր մը եղաւ:

Առ ի զնահարեալ Հ.Մ.Ը.Մ.ին մարտոցած իր մեծ ծառայութիւններուն, Աշխէն Փիլաւճեան 21 Նոյեմբեր 2015-ին արժանացաւ Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» պարտուանշանին:

Հանգիստ իր յոգնարանջ հոգիին:



## ԱՐԺԱՆԹԻՆԱՀԱՅ ԲԱՐԵՐԱՐ ԺԱՆ ԱՐԳԱՐԵԱՆԻ ԿՈՐՈՒՍՏԸ

24 Յունուար 2022-ին, Պուէնոս Այրէսի մէջ իր մահկանացուն կնքեց բարերար Ժան Արգարեան, որ ծնած է Պէյրութ, Լիբանան: Ան Արժանքին հասարակութեան մէջ 1948 թուականին եւ իր կարեւոր ներդրումը ունեցած է Պուէնոս Այրէսի եւ Գորպոպայի հայ հասակների հասարակութիւններու ծաղկումին:

2014-ին, Ժան Արգարեան իր կնոջ՝ Գարմէն Արգարեանի հետ (մահացած 6 Փետրուար 2021-ին) հիմնեց «Ժան եւ Գարմէն Արգարեան Երեխաներու եւ Տարեցներու Պաշտպանութեան Հիմնադրամ»ը: Իր նպատակները իրականացնելով հիմնադրամը

մեծապէս օգտակար դարձաւ Արժանքինի հայ կրթական հասարակութիւններուն, Պուէնոս Այրէսի եւ Գորպոպայի Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հ.Բ.Ը.Մ.ի հայ սկստութեան խումբերուն, ինչպէս նաեւ՝ Պուէնոս Այրէսի ՀՕՄ-ի Հանգստեան Տան:

Հայոց Տեղապահութեան ճանաչման պայքարին մէջ հիմնադրամը հովանաւորեց Հայ Դպրոցի զանազան գիրքերու խմբագրութիւնն ու հրատարակութիւնը: Հարկ է նշել հիմնարկութեան ներդրումը Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի րօնակատարութիւններուն:

«Ժան եւ Գարմէն Արգարեան Երեխաներու եւ Տարեցներու Պաշտպանութեան Հիմնադրամ»ը, իր հիմնադիրներու մահէն ետք, պիտի ղեկավարուի յարուկ խորհուրդի մը կողմէ, որուն մաս պիտի կազմեն Պուէնոս Այրէսի հետեւեալ կազմակերպութիւնները եւ միութիւնները՝ Արմենիա Մշակութային Ընկերակցութիւնը, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղը, Հ.Բ.Ը.Մ.ը եւ Այնթապի Հայրենակցական Միութիւնը:

ԳՅՎԶՆՈՒԹՅԱՆ «ՏՆՈՒՄ»-ՆԵՐՈՇՆՈՒՄ

